

Ֆինանսիստ



Անձնական ներդրումների, բրենդների և արժեթղթերի ամսագիր

№ 2, 2025

ՈՒԵՅ ՈՒԵՅ

ZTE ՂԱԶԱԽԱՏԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

«Մեր տեխնոլոգիաներն
արագացնում են թվային
տնտեսության զարգացումը»

ԽԱՂԱԴՐՈՒՅՔ
ԱՐԵՎԵԼՔԻ ՎՐԱ

ԹՎԱՅԻՆ
ԵՐԱԿ

ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԱՆԻՎԵՐՍԻ ՎՐԱ

ՌԻՍԿԵՐԻ
ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

ZTE


Ներդրում՝ ամենօրյա ֆիքսված եկամտով

Բարձր եկամտաբերություն՝ 6%* տոկոսադրույքով դրամով,
4.39%՝ ԱՄՆ դոլարով և 2.41%՝ եվրոյով

- ✓ Գործարքների տոկոսադրույքը՝

AMD 6%* | EUR 2,41% | USD 4,39%

- ✓ Գումարի մնացորդի դուրսբերումը սահմանափակում չունի ժամկետով և գումարի չափով
- ✓ Հաշվի անվճար սպասարկում
- ✓ Տոկոսները հաշվարկվում և վճարվում են ամեն օր



[ffin.am/saving/
d-account](https://ffin.am/saving/d-account)



Բովանդակություն

Հայաստանը՝ բումից հետո.....	2
Հսկան՝ մանրադիտակով.....	6
Չինական ալիք.....	7
Ինֆոգրաֆիկա. ՉԺՀ-ն համաշխարհային տնտեսության մեջ.....	9
Առևտրային ճեպընթաց.....	10
Ինֆոգրաֆիկա. Ում հետ է առևտուր անում Չինաստանը.....	12
Խաղաղույք Արևելքի վրա.....	14
Թվային երակ.....	16
Հեղափոխություն դրամապանակում.....	18
Մրցավազք հայ-թեքի հետ.....	19
Ինֆոգրաֆիկա. Չինաստանի տեխնոլոգիական գոտին.....	21
Լիցքավորում ապագայի համար.....	22
Զարգացում անիվների վրա.....	24
Ինֆոգրաֆիկա. Հիբրիդային և էլ. մեքենաների խոշորագույն արտադրողները ՉԺՀ-ում.....	26
Կենսական ոլորտ.....	27
Չինական ուրբանիստիկա.....	28
Ինֆոգրաֆիկա. ԱՄՆ բորսաներում չինական թոփ ընկերություններն ու ETF-ները.....	30
Հարցազրույց Անդրեյ Օստրովսկու հետ (ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ)	32
Հարցազրույց Եգոր Պերևերզևի հետ (Սկոլկովո)	33
Խաղ յուանով.....	34
Մեկ բորսան լավ է, երկու բորսան՝ ավելի լավ.....	36
Ռիսկերի լաբիրինթոս.....	39
Արևելք-Արևմուտք.....	41
Պեկինյան ոճով ներդրումներ.....	43
Հենվելով սեփական ուժերի վրա.....	45
Ինտեգրման գաղտնիքները.....	46
Ողջամիտ ներդրումներ.....	48
Հարցազրույց Ուեյ Ուեյի հետ (ZTE Ղազախստան)	50
Խրոնիկա.....	52

Հայաստանը՝ բումից հետո

Կայուն աճ՝ առևտրի կրճատման և հարկաբյուջետային հիմնախնդիրների ֆոնին




Ռաֆայել Մկրտչյան
Freedom Broker Armenia

Հայաստանի տնտեսությունը 2022-2023 թթ. աննախադեպ աճ գրանցեց: Միգրացիայի և կապիտալի մեծ հոսքը, վերաարտահանման աճը և ծառայությունների ոլորտի արագ զարգացումը 2022-ին ապահովեցին 12.6 % տնտեսական աճ, 2023-ին՝ 8.7 %: Այնուամենայնիվ, 2024-2025 թթ. զարգացման այս մոդելն արդեն սպառվել էր. 2024-ի չորրորդ եռամսյակում Հայաստանի ՀՆԱ-ի աճի տեմպը նվազեց՝ հասնելով 3.7 %, ինչից հետո կայունացավ 5 %-ից մի փոքր բարձր դիրքում: Երկիրն այժմ մտնում է «նոր նորմալ» փուլ, որտեղ հետագա զարգացումը պայմանավորված կլինի կառուցվածքային փոփոխություններով, արտասահմանյան ներդրումների հոսքով և ներքին պահանջարկի աճով: Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) կանխատեսում է, որ 2025-2027 թթ. Հայաստանի տնտեսական աճը տարեկան կկազմի 4.5 %, ըստ Համաշխարհային բանկի՝ 4.3 %, ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ)՝ 4.7 %: Սրանք աճի շատ բարձր տեմպեր են, որոնք արտացոլում են Հայաստանի համեմատական առավելությունները և տնտեսական ներուժը:

Ապագա աճի շարժիչ ուժերը


2025-ին Հայաստանի տնտեսության մեջ ամենաակնառու փոփոխությունն արտաքին առևտրի անկումն է: 2025-ի հունվար-հուլիս ամիսներին արտաքին առևտրի շրջանառությունն անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 41 %: Արտահանումը նվազել է գրեթե 48 %, ներմուծումը՝ 36 %: Դրա հիմնական պատճառներն են 2022-2024 թթ. կտրուկ աճից հետո վերաարտահանման հոսքերի կարգավորումը, նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման անկումը: Ավելին, արտաքին պահանջարկը նվազել է, քանի որ գործընկեր երկրներում (հատկապես ՌԴ-ում և ԵԱՏՄ-ում) տնտեսական իրավիճակը դարձել է ավելի անբարենպաստ: Ընթացիկ հաշվի դեֆիցիտն ավելացել է, և, ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսման, 2025-ին կկազմի ՀՆԱ-ի մոտ 4.5 %-ը: Չնայած արտաքին առևտրի անկմանը՝ պետական ներդրումները և մարդկային կապիտալի կուտակմամբ խթանվող ներքին պահանջարկի աճը մնում են Հայաստանի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերը: Աճի հիմնական

Իրական ՀՆԱ տարեկան աճ



Աղբյուրը՝ armstat.am, arca.am, FactSet, Bloomberg, Freedom Broker Armenia

Գրաֆիկ 5: Հայաստանի արտահանման բաշխումը ըստ արտադրանքի տեսակների




Աղբյուրը՝ armstat.am, Freedom Broker Armenia

աղբյուրները կենտրոնացած են շինարարության, ՏՏ ոլորտի, ֆինանսների և զբոսաշրջության մեջ: Հաջողիվ զարգանում են մանրածախ առևտուրը և արդյունաբերությունը, որը հուլիսին գրանցել է 4.2 % տարեկան աճ՝ 2024-ի նոյեմբերից հետո առաջին անգամ: Այս ֆոնին, Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի կնքման առաջին քայլերը կարևոր գործոն են հետագա ներդրումների հոսքի և դրական սցենարների իրականացման համար:

Հիմնական ոլորտների զարգացում

Հայաստանում շինարարական բույնը ոլորտում հաստատվում է 2023-2025 թթ. երկնիշ աճի տեմպերով՝

Գրաֆիկ 6: Հայաստանի ներմուծման բաշխումը ըստ արտադրանքի տեսակների



Աղբյուրը՝ armstat.am, Freedom Broker Armenia


տարեկան 15-19 %: Ներդրումներ են արվում Երևանում ու մյուս քաղաքներում զարգացման մասնավոր նախագծերում, կառավարության իրականացրած ճանապարհների, տրանսպորտային միջանցքների և էներգետիկ ենթակառուցվածքների կառուցման ծրագրերում: Ներքին պահանջարկը խթանվում է երիտասարդների, միգրանտների և հայրենադարձների շրջանում պահանջարկ վայելող հիփոթեքային ծրագրերի զարգացմամբ: Այնուամենայնիվ, նկատվում է բնակարանների գների գերաճ, ինչը շինանյութերի ներմուծումից ոլորտի կախվածության պայմաններում ստեղծում է որոշակի ռիսկեր:

Արտաքին առևտրաշրջանառություն, մլն դոլար/տարեկան



Աղբյուրը՝ armstat.am, arca.am, cba.am, FactSet, Bloomberg, Freedom Broker

Շինարարության ծավալ (մլն դրամ) և տարեկան փոփոխություն



Աղբյուրը՝ armstat.am, arca.am, cba.am, FactSet, Bloomberg, Freedom Broker

ՏՀՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում արդեն կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 5.5 %-ը և շարունակում է աճել տարեկան մոտ 10-20 % տեմպով: Սա ապահովում է արտահանման աճ, արտարժույթային եկամտի հոսք, բարձր ավելացված արժեք ունեցող աշխատատեղերի ստեղծում և նպաստում է տնտեսության դիվերսիֆիկացիային: Վերջին հինգ տարում ՏՏ ծառայությունների արտահանման ծավալը կրկնապատկվել է՝ հիմնականում դեպի ԵՄ, ԱՄՆ և Մերձավոր Արևելք: Երկարաժամկետ հեռանկարում ՏՏ ոլորտը կարող է դառնալ շինարարության և սպառման վրա հիմնված ավանդական աճի մոդելի այլընտրանք:

Հայաստանի ՏՀՏ ոլորտի հիմքում պատվերով ծրագրային ապահովման մշակումներն են, որոնք կազմում են ընդհանուր արտահանման մինչև 60 %-ը: Պետական և մասնավոր խթանիչների, օրինակ՝ Armenia Startup Academy-ի և Շիրակի ու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների շնորհիվ ակտիվ զարգանում են R&D-ն (Հետազոտություն և զարգացում) ու ստարտափները: ՏՏ արագ զարգացող ոլորտներ են կիբերանվտանգությունը և ֆինանսական ծառայությունները, որոնք խթանվում են տարածաշրջանային պահանջարկով: Synopsys-ի, Siemens EDA-ի, National Instruments-ի և Cisco-ի պես ապարատային լուծումների ոլորտում գործող միջազգային ընկերությունները ևս ներկա են Հայաստանի ՏՏ ոլորտում, թեև ավելի փոքր չափով:

Վերջին շրջանի կարևոր նախաձեռնություններից մեկը տարածաշրջանում տվյալների ամենամեծ կենտրոնի (ԱԲ սուպերհամակարգչի) կառուցումն է Հայաստանում: Սա Firebird ընկերության նախագիծն է, որն իրականացվում է ՀՀ կառավարության և NVIDIA-ի գործակցությամբ: Այն ունի Հայաստանը տարածաշրջանային տեխնոլոգիական խոշոր կենտրոնի վերածելու և երկրի ԱԲ էկոհամակարգը ամրապնդելու ներուժ: Պետական-մասնավոր գործընկերության շրջանակում ներդրումները կկազմեն մոտ 500 միլիոն դոլար (միայն առաջին փուլում), որտեղ Նուբար Աֆեյանը կլինի գլխավոր ներդրողը: Նախագիծը ենթադրում է 20,000-ից ավելի NVIDIA Blackwell GPU-ներից բաղկացած տվյալների վերամշակման կենտրոնի ստեղծում՝ ձևավորելով ավելի քան 100 մեգավատ հզորությամբ ենթակառուցվածք: Նախատեսվում է առաջին փուլն ավարտել 2026-ի սկզբին: Տվյալների կենտրոնի հզորությունը հասանելի կլինի բիզնեսներին և հետազոտական կազմակերպություններին: Նախագծի երկարաժամկետ օգուտներն են բարձր տեխնոլոգիական աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և Հայաստանի ազգային նորարարական ներուժի ամրապնդումը:

Հայաստանի ֆինանսական հատվածի զարգացումը պայմանավորված է 2022-2023 թթ. տեղի ունեցած կապիտալի ներհոսքով, հաճախորդային բազայի շարունակվող աճով, կայուն շահութաբերությամբ և ֆինտեխի զարգացմամբ:

Բանկային համակարգի զուտ շահույթը 2024-ին կազմել է 910 միլիոն դոլար, ինչը 2023-ի համեմատ 50 % ավելի է: Բանկերի վարկային պորտֆելները վերջին հինգ տարիներին գրեթե կրկնապատկվել են՝ զգալի չափով ավելացնելով տոկոսային եկամուտները: Ավելին, բանկերն ակտիվ ներդրումներ են կատարում տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների և ֆինտեխի մեջ, որի տարեկան աճի տեմպը վերջին շրջանում աճել է մոտ 25 %: Զարգանում են վճարային ծառայությունները (EasyPay, Idram, Telcell), ավտոմատացված խորհրդատուները (Robo-Advisors), ապահովագրական տեխնոլոգիաները (InsurTech), կարգավորող տեխնոլոգիաները (RegTech): Բջջային բանկինգն արդեն կազմում է բանկային բոլոր գործարքների մինչև 76 %-ը, թվային վճարումներն էլ գերազանցել են 6.8 միլիարդ դոլարը:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտն աճում է մշակութային առատ ժառանգության (վանքեր, բնություն, գինեգործություն) և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ: Զբոսաշրջիկների հիմնական հոսքը բաժին է հասնում Ռուսաստանին (մոտ 40 %), Վրաստանին (14 %) և Իրանին (8 %): Ավելանում է նաև զբոսաշրջիկների հոսքը Եվրոպայից: 2024-ին զբոսաշրջիկների ընդհանուր թիվը կազմել է 2.2 միլիոն, զբոսաշրջությունից ստացված եկամուտն էլ հասել է 2.5 միլիարդ դոլարի: 2025-ի գարնանը զբոսաշրջիկների թիվն անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 8 %: Էկոնոմիկայի նախարարության ռազմավարությունը ենթադրում է զբոսաշրջությունից ստացված եկամուտները մինչև 2030 թվականը հասցնել 3 միլիարդ դոլարի՝ ապահովելով տարեկան 10 % աճի տեմպ: Հայաստանի միջազգային ծանաչումը, որպես զբոսաշրջային գրավիչ ուղղություն, հաստատվում է 2025-ի մարտին ITB Berlin միջազգային ցուցահանդեսում ունեցած հաջողությունով, որտեղ երկիրը ստացել է «Արկածային զբոսաշրջության լավագույն ուղղություն» մրցանակը: Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը խթանվում է պետական ներդրումներով (ճանապարհներ, համացանց) և Համաշխարհային բանկի նոր ծրագրով, որի իրականացման համար հինգ տարով հատկացվել է 100 միլիոն դոլարի ներդրում: Զբոսաշրջության հիմնական մասը կենտրոնացած է մնում Երևանում (զբոսաշրջիկների մոտ 65 %-ը), սակայն ակնհայտ է մարզային զբոսաշրջության ընդլայնումը:

Հարկաբյուջետային հիմնախնդիր

Ծերացող բնակչությամբ պայմանավորված՝ կենսաթոշակային և սոցիալական այլ պարտավորությունների աճի ֆոնին ենթակառուցվածքներում ներդրումների ուղղությամբ կառավարության աջակցությունը ստեղծում է բյուջետային դեֆիցիտ, որը, կանխատեսումների համաձայն, 2025-ին կհասնի ՀՆԱ-ի 5.5 %-ի: Բյուջետային ճնշման լրացուցիչ աղբյուրներ են պետական հատվածի աշխատավարձերի, առողջապահության ծախսերի աճը և փախստականների համար նախատեսված սոցիալական ծրագրերը: Հայաստանի պետական պարտքը 2024-ին կազմել է ՀՆԱ-ի 50 %-ը և, ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների, 2027-ին կարող է հասնել մինչև 56 %:

Այսպիսով, տնտեսական խթանման և պետական ֆինանսների կայունության միջև հավասարակշռության պահպանումն այսօր Հայաստանի համար ֆինանսական էական խնդիր է: Բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի 3 %-ի հասցնելը կարծես թե իրագործելի է և կախված կլինի հարկային վարչարարության որակից, նաև հարկերի հավաքման մակարդակից ու ստվերային տնտեսության մասնաբաժնի կրճատումից, որը, ըստ տարբեր գնահատականների, 20-25 տոկոս է:

Հայաստանի համար ֆինանսական այսօրվա խնդիրներից մեկն էլ այն է, որ բարձր իրական տոկոսադրույքը (դրամային արտահայտությամբ՝ տարեկան մոտ 3 %) և արտաքին ֆինանսավորման անհրաժեշտությունը տնտեսության ապագան զգալի չափով կախված են դարձնում վարկատուների առաջարկած պայմաններից:

Այսպիսով, 2025-ին հաջողությամբ հաղթահարելով առևտրի կրճատումը՝ Հայաստանի տնտեսությունը ցուցադրում է իր ներքին ներուժը և մտնում տարեկան 4-5 % չափավոր, բայց կայուն աճի փուլ՝ հենվելով ներդրումների, ներքին պահանջարկի և ծառայությունների հատվածի վրա: Հայաստանի տնտեսության ապագան այժմ կախված կլինի նրանից, թե կկարողանա՞ հաղթահարել հարկաբյուջետային խնդիրները, ներգրավել կայուն ներդրումներ և բարձրացնել արտադրողականությունը: Առաջիկա տարիների հիմնական խնդիրը լինելու է ֆինանսական ընթացիկ խթանները երկարաժամկետ մրցունակության աղբյուրների վերածելը:

«Ֆինանսիստ» ամսագիր № 1 (37) 2025

Սեփականատեր՝ Aliteco Partners ՍՊԸ, **գլխավոր խմբագիր՝** Միրա Խալինա, **թողարկիչ խմբագիր՝** Նատալյա Խարլաշինա, **դիզայն, ինֆոգրաֆիկա՝** Վլադիսլավ Վոլկով, Ալեքսանդր Գարյուսով, **գրական խմբագիր՝** Սվետլանա Դեմենտևա, **խմբագիր՝** Անատասիա Սկրիպնիչենկո, **սրբագրիչ՝** Դարյա Բալտրոնշայտիս, **համակարգողներ՝** Իգոր Կլյուչնև, Վադիմ Մերկուլով, Կրիստինա Սաֆիուլովա: **Լուսանկարները՝** Freedom Broker-ի մամուլի ծառայություն, Անդրեյ Օստրովկո, Եգոր Պերենրզևի և Ռեյն Ուեյի անձնական արխիվներ: **Շապկիկ լուսանկարը՝** Ռեյն Ուեյի անձնական արխիվից: Ամսագիրը գրանցված է Ղազախստանի Հանրապետության Տեղեկատվության և ենթակառուցվածքների նախարարությունում: Գրանցման համար № 17775-Ջ, 03.07.2019 թ.: **Խմբագրության հասցեն՝** A05D7M5, ՂՅ, ք. Ալմաթի, փ. Ժելտոքսան, շ. 115, 5-րդ հարկ: Հեռ./ֆաքս. +7 (727) 232 24 46, էլիասցե prglobal@ffin.kz: **Ուղարկվել է տպարան՝** 18.03.2025: **Տպաքանակը՝** 45,000: Ամսագիրը տարածվում է անվճար: **Տպարան՝** «Ինդիգո Պրինտ» տպագրակենտրոն՝ ՍՊԸ:

Freedom Finance Global PLC հանրային ընկերություն

Freedom Finance Global PLC հանրային ընկերությունը մատուցում է բրոքերային (գործակալական) ծառայություններ արժեթղթերի շուկայում՝ Ղազախստանի Հանրապետության Միջազգային ֆինանսական «Աստանա» կենտրոնի (ԱՄՖԿ) տարածքում: ԱՄՖԿ գործող օրենսդրության պահանջների, պայմանների, սահմանափակումների և/կամ կարգադրությունների շրջանակում ընկերությունը, № AFSA-A-LA-2020-0019 արտոնագրի համաձայն, իրավասու է իրականացնել վերահսկվող բնույթի հետևյալ գործողությունները. ներդրումային գործարքներ՝ հանդես գալով որպես պրինցիպալ, ներդրումային գործարքներ՝ որպես գործակալ, ներդրումների կառավարում, ներդրումային խորհրդատվության տրամադրում և ներդրումային գործարքների կազմակերպում:

Արժեթղթեր և ֆինանսական այլ գործիքներ ունենալը միշտ էլ ռիսկային է. դրանց գինը կարող է աճել ու նվազել: Անցյալում ներդրում անելը չի երաշխավորում եկամուտ ապագայում: Օրենսդրության համաձայն՝ ընկերությունը չի երաշխավորում և չի խոստանում ներդրումների եկամտաբերություն, չի երաշխավորում հնարավոր ներդրումների հուսալիություն և հնարավոր եկամուտների կայունություն:

Հսկան՝ մանրադիտակով

Չինաստանն աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությունն է Միացյալ Նահանգներից հետո (կամ նույնիսկ առաջինը՝ կախված նրանից, թե ինչպես եք հաշվում), և դրա ազդեցությունը համաշխարհային շուկաների վրա դժվար է գերազանահատել: Այստեղ ամեն ինչ արագ զարգանում է՝ արտադրությունը, ծառայությունները, տեխնոլոգիաները:

Չինական ընկերություններն արտադրում են ավելի էժան և նույնքան բարձրորակ էլեկտրամեքենաներ, քան իրենց մրցակիցները, արհեստական բանականության ոլորտում տեղական զարգացումները մարտահրավեր են նետում համաշխարհային առաջատարներին: Tesla-ն, որը երկար ժամանակ առաջատարն էր էլեկտրամեքենաների համաշխարհային արտադրության մեջ, առաջատար դիրքը 2024-ին զիջեց չինական ավտոարտադրող BYD-ին: Ուորեն Բաֆեթը բարձր գնահատեց ընկերության ներուժը: 2008-ի համեմատ այս ընկերության բաժնետոմսերում նրա կատարած ներդրումները 2022-ին աճել են 41 անգամ: Սենսացիան DeepSeek նեյրոցանցն է՝ ChatGPT-ի «գլխակերը»: Ավելի էժան է մշակման առումով, շատ հարցերում ավելի արդյունավետ է, քան արևմտյան տարատեսակները:

Այսպիսով, Չինաստանի՝ որպես գաղափարներ և տեխնոլոգիաներ պատճենող երկրի մասին պատկերացումներն արդեն հնացած են: Այս երկիրն ամեն տարի ավելացնում է ինքնատիպ ապրանքների արտադրությունը:

Չինաստանը ոչ միայն սեփական գիտելիքով է փոխարինել արևմտյան բազմաթիվ «նոու-հաու»-ներ, այլև առաջատար է դարձել կանաչ էներգիայի, ռոբոտաշինության, գերարագ կապի և էլեկտրոնային առևտրի ոլորտներում: Չինաստանն ունի ամենաարագ ընթաց գնացքները, գերզարգացած ֆինթեք ընկերությունները, ամենառոբոտացված արտադրությունը և իրականացնում է ամենաարագ շինարարությունն ամբողջ աշխարհում: Առաջընթացին մեծապես նպաստում է հսկայական ներքին շուկան: Չինաստանում ապրում է 1.4 միլիարդ մարդ: Բացի այդ, այստեղ մշակված ծառայություններն ավելի ու ավելի հաջողակ են դառնում ամբողջ աշխարհում: Վառ օրինակ է TikTok-ը: Կարճ տեսանյութեր տեղադրելու և դիտելու սոցցանցի այս հավելվածը 2024-ին դարձել է ամենաշատ ներբեռնվողը:

Freedom Finance Global-ի վերլուծաբաններն ուսումնասիրել են Չինաստանի գործարար հարաբերությունները հիմնական գործընկերների հետ և առանձնացրել չինական արտահան-


ման ամենապահանջված կատեգորիաները: Մեր «Ում հետ է առևտուր անում ՉԺՀ-ն» ինֆորաֆիկայից կիմանաք, թե որ երկրներ է արտահանվում չինական արտադրանքը: Մենք նաև ցույց ենք տվել, թե ինչ ծավալով ինչ ապրանքներ է երկիրը շարունակում ներմուծել՝ ունենալով զարգացած արտադրություն:

Չինաստանը շեշտակի ընդլայնում ու զարգացնում է ենթակառուցվածքային, լոգիստիկ և առևտրային բազմաթիվ նախագծեր Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի և Լատինական Ամերիկայի 150+ երկրներում:

Չինական ֆոնդային շուկան գրավում է իր ծավալով: Շանհայի ֆոնդային բորսան կապիտալիզացիայով աշխարհում երրորդն է ամերիկյան NYSE-ից և NASDAQ-ից հետո: Շենչժենի և Յոնկոնգի բորսաները համաշխարհային լավագույն տասնյակում են: Սովորական ներդրողի համար հեշտ չէ մուտք գործել առաջին երկու տեղական բորսաները, բայց օտարերկրացիները կարող են չինական բազմաթիվ արժեթղթերում ներդրումներ կատարել Յոնկոնգի ֆոնդային բորսայում: Դրան մուտք գործելու հնարավորություն է տալիս Freedom Finance Global-ը: Բացի այդ, ՉԺՀ ընկերությունները ներկայացված են ամերիկյան բորսաներում: Մեր վերլուծաբանները կազմել են ինֆորաֆիկա՝ ներկայացնելով ամերիկյան բորսաներում ներկայացված չինական 10 ամենահետաքրքիր արժեթղթերը: Ընդհանուր շուկայում ներդրումներով հետաքրքրվածների համար կազմել ենք չինական բորսայական ֆոնդերի (ETF) լավագույն հնգյակը:

Այս համարում բացահայտում ենք արագ, մեծ ծավալներով զարգացող չինական յուրահատուկ տնտեսության նրբությունները: «Ֆինանսիստը» հավաքել է փորձագիտական կարծիքներ, թե Չինաստանում բիզնես վարելու ո՞ր առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն և ինչ խնդիրների են բախվում արտասահմանյան խաղացողները:

Բացի այդ, մենք գրուցել ենք հեռահաղորդակցական սարքավորումների չինական խոշորագույն արտադրողներից մեկի՝ ZTE-ի ներկայացուցչի հետ: Ղազախստանում ընկերության գործադիր տնօրեն Ուեյ Ուեյը պատմել է, թե ZTE-ն ինչպես է մտնում նոր շուկաներ, հարմարվում տեղական առանձնահատկություններին, մրցում տեղական խաղացողների հետ, տեխնոլոգիական ինչ լուծումներ է առաջարկում միջազգային ասպարեզում, նաև ներկայացրել է ապագայի ռազմավարական պատկերացումները: Մաղթում ենք հաճելի ընթերցում:



Չինական ալիք

Չինաստանում ներդրումների անցյալը, ներկան ու ապագան



Վահիմ Մերկուլով
Freedom Finance Global-ի
վերլուծական բաժնի տնօրեն

Վերջին 40 տարում Չինաստանը ֆենոմենալ առաջընթաց է գրանցել: 1980-ականների կեսին երկրի մեծահասակների ¼-ն ուներ միայն թերի միջնակարգ կրթություն, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն տարեկան 300 դոլարից պակաս էր: Այսօր Չինաստանն աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությունն է՝ զարգացած բարձր տեխնոլոգիական արդյունաբերությամբ: Ինչ ուղի է անցել երկիրն այս նպատակին հասնելու համար, և ինչու ենք չինական ակտիվները համարում ներդրումների համար գրավիչ:

Պատուհան դեպի աշխարհ

1980-ականների կեսին Պեկինի «բարեփոխումների և բացության» քաղաքականությունը ներառում էր հատուկ տնտեսական գոտիների (ՀՏԳ) ստեղծումը, որտեղ արտաքին առևտուրը և օտարերկրյա ներդրումները կարգավորվում էին միայն շուկայական օրենքներով: Այս գոտիները արտասահմանյան բիզնեսը գրավում էին հարկային և ներդրումային խթանների, նաև էժան, բայց արտադրող աշխատուժի առավելությունների շնորհիվ:

ՀՏԳ-ներում օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկությունների ստեղծումը հասանելի դարձրեց առաջադեմ տեխնոլոգիաները: Բիզնեսի կենտրոնացումը պատրաստի արտադրանքի արտահանման վրա նպաստեց արդյունաբերության արագ զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և կենսամակարդակի բարձրացմանը: Ահա, թե ինչն է Չինաստանը գյուղատնտեսական աղքատ երկրից վերածել զլրբալ միտմանը համարժեք, արագ զարգացող, արդյունաբերական տերության: 1980-ականների սկզբից Չինաստանի իրական ՀՆԱ-ի աճը տարեկան 8 %-ից հասել է 12 %-ի:

Առաջ դեպի գիտելիք


1990-ականներին Չինաստանը բարեփոխել է գիտությունների ակադեմիան և համալսարանները, մեծացրել դրանց ֆինանսավորումը և հիմնադրել գիտատեխնոլոգիական առաջին պարկերը: Պետական աջակցությամբ տաղանդավոր ուսանողները մեկնել են աշխարհի առաջատար համալսարաններ, շրջանավարտների մեծ մասն էլ վերադարձել է տուն: Այս քայլերը հնարավորություն են տվել երկրում ձևավորել որակյալ կարգերի զգալի պաշար: Նորարարությունների աջակցությունն իրականացվել է երկու մակարդակով: Նախ, հարկային և այլ արտոնություններ են սահմանվել R&D (հետազոտությունների և զարգացման) մեջ ներդրումներ կատարող ընկերությունների համար:

Նորարարական նախագծերը ֆինանսավորել է պետությունը. ենթակառուցվածքներ են ստեղծվել սեփական տեխնոլոգիաների զարգացման համար: Երկրորդ, Չինաստանը ակտիվ ջանքեր էր գործադրում արտասահմանից «նոու-հաու»-ներ բերելու համար: Դրա դիմաց թույլ էր տալիս օգտվել իր հսկայական ներքին շուկայից և արտադրական էժան հզորություններից: Բիզնեսները հետաքրքրվեցին R&D-ի մեջ ներդրումներով: 1996-2010 թթ., երբ բարեփոխումների ազդեցությունը դարձավ ակնհայտ, գիտական և տեխնոլոգիական զարգացման վրա ծախսերի 70 %-ից ավելին ֆինանսավորվեց մասնավոր միջոցներով, և դրանց աճը հաստատուն գներով՝ կազմեց տարեկան միջինը 22 %, այսինքն՝ յուրաքանչյուր հինգ տարվա ընթացքում նորարարության մեջ ներդրումները կրկնապատկվեցին:

Տալիս ես արդյունք

ՀԲ տվյալով՝ Չինաստանի ՀՆԱ-ն գնողունակության համարժեքությամբ (ԳՀ) 2023-ին կազմել է \$34.7 տրիլիոն: ԱՄՆ-ում՝ \$27.7 տրիլիոն: Այնուամենայնիվ, համեմատելով շուկայական փոխարժեքներով, առաջին տեղում ԱՄՆ-ն է, Չինաստանը երկրորդն է: ԳՀ-ով ՀՆԱ-ի հաշվարկը թույլ է տալիս օբյեկտիվ ձևով համեմատել տնտեսական տարբեր կառուցվածքներ ունեցող երկրները և կատարել կենսապահովման ծախսերի ճշգրտումներ: Գնողունակության համարժեքությունը (կամ հավասարությունը) երկու արժույթների հարաբերակցությունն է՝ հիմնված երկու երկրներում նույն ապրանքների զամբյուղի արժեքի վրա: Այն ցույց է տալիս, թե ինչ կարող է իրեն թույլ տալ բնակիչը նույն գումարով: Օրինակ՝ 2023-ին ԱՄՆ-ում 1 դոլար արժողությամբ ապրանքը Չինաստանում արժեցել է 3.6 յուան (\$0.5), չնայած յուանի շուկայական փոխարժեքը դոլարի նկատմամբ կազմել է 7.1: Այսպիսով, Չինաստանի ՀՆԱ-ն ԳՀ-ով զգալի չափով ավելի բարձր է, քան շուկայական փոխարժեքով: Ամեն դեպքում, Չինաստանի պես մեծ տնտեսությունը հետաքրքրում է ներդրողներին: Առաջին հայացքից թույլ յուանը փչացնում է դոլարային ՀՆԱ-ի վիճակագրությունը, բայց սա կարևոր առավելություն է Չինաստանի համար, քանի որ նպաստում է իր ապրանքների էժանությանը համաշխարհային շուկաներում: Փոխարժեքը պահպանվում է արտարժույթի պահուստների շնորհիվ, ինչը տնտեսությանը թույլ է տալիս զարգանալ արտահանման վրա կենտրոնացած մոդելով: Մեկ շնչի հաշվով Չինաստանի ՀՆԱ-ն ԳՀ-ով կազմում է տարեկան \$24,000, ԱՄՆ-ում՝ \$82,000: Այս ցուցանիշով Չինաստանը դեռևս զգալիորեն հետ է G7 երկրներից: 📈

2023-ին G7-ի երկրների և Չինաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ ըստ ԳՀ-ի*




Աղբյուրը՝ ԶԲ տվյալներ

Այս ցուցանիշով երկրների ընդհանուր վարկանիշում Չինաստանը նույնիսկ 8-րդ տասնյակում չէ և գտնվում է Մալդիվների ու Ադրբեյջանի միջև: Սակայն քաղաքացիների ցածր եկամուտի մակարդակն առավելություններ ունի. աշխատուժը ԶԺԳ-ում դեռևս զգալի չափով ավելի էժան է, քան զարգացած երկրներում:

Զարգացման կիզակետում

2023-ին երկրի ՀՆԱ-ում ներդրումների բաժինը կազմել է 41 %: Ըստ ԶԲ-ի՝ սա ռեկորդային ցուցանիշ է G20 երկրների շրջանում: Ակտիվ ներդրումներ է կատարում R&D մեջ. այն կազմում է իր ՀՆԱ-ի 2.3 %-ը և համաշխարհային ընդհանուր այդպիսի ծախսերի 17 %-ը: ԱՄՆ-ում այս ցուցանիշը 20 % է: Արտադրական կապիտալի ինտենսիվ կուտակումը և նորարարություններին տրվող պետական աջակցությունը կարող են թույլ տալ, որ Չինաստանը համաշխարհային տնտեսական առաջատար դառնա տեխնոլոգիական զարգացման միջոցով: Չինաստանի առաջատար Ցինհուայի և Պեկինի համալսարաններն աշխարհի լավագույն 20-ում են:

R&D ծախսերով թոփ 5 երկրները



Աղբյուրը՝ ԶԲ տվյալներ, 2023

Արդյունաբերության հզորությունը

Զարգացած բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը երկրի գիտության և կրթության ոլորտում առաջընթացի ուղիղ արդյունքն է և ԶԺԳ տնտեսության ևս մեկ առավելություն: Ազգային վիճակագրական բյուրոյի տվյալով՝ Չինաստանի ՀՆԱ-ում արդյունաբերության բաժինը 2023-ին կազմել է 30 %, և սա աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից է: Չինական արդյունաբերության մրցունակությունը հաստատվում է արտահանման կառուցվածքով. դրա 42 %-ը բարձր տեխնոլոգիական սարքավորումներն ու էլեկտրոնիկան է: Այս արտադրանքի 1/3-ից ավելին մատակարարվում է ԱՄՆ, ԵՄ, Ճապոնիա և Հարավային Կորեա:

Չինաստան ներմուծման 34 %-ը սարքավորում է, 31 %-ը՝ հումք, 20 %-ը՝ միջանկյալ արտադրանք, որոնք ակտիվորեն օգտագործվում են արտադրության և տեխնոլոգիական զարգացման մեջ: Սպառողական ապրանքների բաժինը կազմում է ընդամենը 13 %՝ ԱՄՆ 36 %-ի դիմաց: Այսպիսով, ի տարբերություն ԱՄՆ-ի, արտասահմանում գնումներ կատարելիս՝ Չինաստանը կենտրոնանում է ոչ թե ներքին շուկայի համար պատրաստի արտադրանք ներմուծելու, այլ սեփական արտադրությունը զարգացնելու վրա: Չինական տնտեսության այս առանձնահատկությունը զգալի ներուժ է ստեղծում սպառողական ապրանքների տեղական արտադրողների համար:

Հայացք դեպի ապագա

Չինաստանի հեռանկարները մեծապես կախված են ներքին պահանջարկի աճից: Այս ուղղությամբ զարգացման նոր մոդելը երկրին կօգնի նվազեցնել կախվածությունն արտահանումից դեպի զարգացած երկրներ ու կդառնա տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը, և ահա թե ինչու.

- ✓ Չինաստանում մեկ շնչի հաշվով սպառման մակարդակը զգալիորեն ցածր է, քան զարգացած երկրներում: Դրա աճը կնպաստի քաղաքների զարգացմանը և կրթության մակարդակի բարձրացմանը:
- ✓ Սպառողական ապրանքների ներմուծման ցածր մասնաբաժինը կապահովի դրանց ներքին արտադրության աճը:
- ✓ Չինաստանի ՀՆԱ-ում ծառայությունների ոլորտի մասնաբաժինը կազմում է 54.6 %, ԱՄՆ-ում՝ 76.4 %: Սա որոշում է գործարար ակտիվության աճի ներուժը:


Կան նաև Չինաստանի ապագա հաջողության արտաքին նախադրյալներ: Երկիրը տեխնոլոգիական առաջատար է խիտ բնակեցված ասիական երկրների շարքում՝ ցուցաբերելով կենսամակարդակի բարելավման կայուն միտում: Տարածաշրջանում բարգավաճման աճը կհանգեցնի չինական ապրանքների պահանջարկի աճին: Պետք է նաև նշել, որ վերջին տասնամյակում երկիրն ակտիվ ներդրումներ է կատարել գործընկերների տնտեսությունների զարգացման մեջ. ինչը ներդրողներին թույլ է տալիս ֆինանսապես մասնակցել Չինաստանի զրբալ ընդլայնմանը (ավելին՝ 39-40 էջերում):

Նոր մոդելով զարգացումը Չինաստանին թույլ կտա տարեկան առնվազն 5 % ավելացնել տնտեսության հիմնական ցուցանիշը: Համեմատության համար՝ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը երկրում ՀՆԱ-ի երկարաժամկետ աճը կանխատեսում է տարեկան 1.8 % մակարդակում, ԵԿԲ-ն էլ նպատակ ունի եվրագոտում ապահովել տարեկան 1.3 % աճ: ԶԺԳ տնտեսության կայուն զարգացումը երկարաժամկետ ներդրողներին խոստանում է բարձր եկամտաբերություն: 📈

ՉԻՆԱՍՏԱՆԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

\$6.1 տրլն
2010



\$18.5 տրլն
2024

19.2%

Չինաստան

15.1%

ԱՄՆ

14.7%

Եվրոպական
Միություն

54.6%

Ծառայություններ***

38.3%

Արտադրություն **

7.1%

Բնական
ոտեսությունների
արդյունահանում*

2010-2024 թթ.
Չինաստանի
ՀՆԱ-ն
ավելացել է
203%

Համաշխարհային ՀՆԱ-ում 2024-ի թույլ 3 տարածաշրջանները

Չինաստանի ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ ոլորտների, 2023

2024-ին
Չինաստանի
տնտեսությունն
աճել է
5%

*Լեռնահանքային և անտառային արդյունաբերություն, ձկնարդյունաբերություն, գյուղատնտեսություն

**Արդյունաբերական արտադրանք և շինարարություն

***Առևտուր, կրթություն, զբոսաշրջություն և այլն

Առևտրային ճեպընթաց



Էլդար Շակենով

Freedom Broker-ի ֆինանսական վերլուծությունների բաժնի վերլուծաբան


ՉԺՀ դերը մատակարարումների գլոբալ շղթայում

Չինաստանը վստահ առաջատար է արտադրական բազմաթիվ ոլորտներում՝ զգալի չափով առաջ անցնելով իր մրցակիցներից: Այն կարևոր դեր է խաղում միջազգային առևտրում և լոգիստիկայում: Չինաստանը ոչ միայն «աշխարհի գործարանն է», այլև ամենամեծ տրանսպորտային հանգույցը: Համաշխարհային բիզնես նախագծերը Չինաստանը վերածում են համաշխարհային առևտրի իսկական շարժիչի:

Աշխարհի գործարանը

Միջազգային առևտրի կենտրոնի (ITC) տվյալով՝ Չինաստանն առաջատար դիրք է զբաղեցնում արդյունաբերական հիմնական ուղղություններում. էլեկտրոնիկայի համաշխարհային արտադրության մեջ նրա բաժինը գերազանցում է 40, տեքստիլ արդյունաբերության մեջ 30, մեքենաշինության մեջ 35 %-ը: Այս ոլորտներում Չինաստանը մեծ տարբերությամբ զբաղեցնում է առաջին տեղը: Օրինակ՝ էլեկտրոնիկայի արտադրության մեջ երկրորդ տեղում գտնվող Թայվանը վերահսկում է շուկայի միայն 20 %-ը, Նույնքան էլ կազմում է մեքենաշինության մեջ Չինաստանից հետո մնացած Գերմանիայի մասնաբաժինը: Թեթև արդյունաբերության մեջ տարբերությունը նույնիսկ ավելի նկատելի է. հագուստի և կոշիկի արտադրության մեջ Չինաստանի բաժինը կրկնակի բարձր է, քան երկրորդ տեղը զբաղեցնող Վիետնամինը:

Չինաստանի մասնաբաժինն արտադրական առանցքային ոլորտներում



Հաջողության գործոնները

- ✓ **Հսկայական, լիարժեք արդյունաբերական բազա:** Չինաստանի տնտեսությունն ընդգրկում է տարբեր ոլորտներ՝ հումքի արդյունահանումից և բաղադրիչների արտադրությունից մինչև հավաքում և լոգիստիկա:
- ✓ **Բարձր որակավորում ունեցող աշխատողներ:** Երկրի ձեռնարկություններն ակտիվ ներդրումներ են կատարում անձնակազմի վերապատրաստման մեջ, և պետական նախաձեռնություններն ուղղված են աշխատակիցների կարողությունների բարելավմանը:
- ✓ **Ինտեգրված մատակարարների ցանց:** Բոլոր բաղադրիչների արտադրությունը՝ միկրոչիպերից մինչև փաթեթավորում, կազմակերպված է մեկ նահանգում, ինչն օպտիմալացնում է արտադրական ցիկլերը և հեշտացնում լոգիստիկան:
- ✓ **Աճող ավտոմատացում:** Արհեստական բանականության (AI) և ռոբոտաշինության մեջ ներդրումներն օգնում են փոխափոխումը աճող աշխատուժի ծախսերը, որոնք այլևս էժան չեն և բարձրացնում են աշխատուժի արտադրողականությունը:
- ✓ **Ճկունություն:** Արտադրության ծավալայնացում՝ բարձր խտության արդյունաբերական կլաստների, ավտոմատացման, հումքի հասանելիության և զարգացած ենթակառուցվածքների միջոցով: Հազարավոր ենթակառուցվածքներ գործում են խոշոր արդյունաբերական գոտիներում, ինչը թույլ է տալիս վերակազմակերպել մատակարարման շղթաները՝ արձագանքելով պահանջարկի փոփոխություններին:

Կապող օղակ

Չինաստանն Ասիայի, Եվրոպայի և Ամերիկայի միջև հիմնական երթուղիների խաչմերուկում է, ինչը երկիրը դարձնում է համաշխարհային առևտրի կենտրոնական հանգույց: Սա ամրապնդվում է լավ զարգացած ենթակառուցվածքային ցանցով: Այստեղ են աշխարհի 10 խոշորագույն կոնտեյներային նավահանգիստներից յոթը, որոնք ունեն մեծ հարմարությունները: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» (OBOR) ռազմավարության շրջանակում գործարկված Չինաստան-Եվրոպա բեռնատար գնացքների պարկը Չինաստանի 200-ից ավելի քաղաքներ կապում է Եվրոպայի 25 երկրների, նաև գերմանական Դույսբուրգի և Իսպանիայի ու Լեհաստանի մայրաքաղաքների պետ լոգիստիկ առանցքային հանգույցների հետ: 2024-ին Չինաստան-Եվրոպա երթուղով տեղափոխվել է մոտ 1.5 միլիոն TEU՝ այս շուկաների միջև կոնտեյներային բեռնափոխադրումների 7 %-ը: Չինաստանի օդանավակայաններն աշխարհի

ամենախոշորներից են: «Գուանչժոու Բայյունը» և «Պեկին Դասինը» միջազգային բեռնափոխադրման օդային հանգույցների շարքում 2024-ին «Մեմֆիսից» (ԱՄՆ) հետո զբաղեցրել են երկրորդ (18 միլիոն տոննա բեռ, 55 միլիոն ուղևոր) և երրորդ (6 միլիոն տոննա բեռ, 50 միլիոն ուղևոր) տեղերը:

Գլոբալ ծածկույթ

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ռազմավարությունը, որը Չինաստանն իրականացնում է 2013-ից, դարձել է 21-րդ դարի ամենամեծ ծրագիրը: Դրա նպատակն է ամրապնդել համաշխարհային առևտրային ինտեգրումը՝ Չինաստանի և այլ երկրների միջև ստեղծելով տրանսպորտային միջանցքներ:

150+ երկրներում Չինաստանը մինչև 2024 թ. \$1.3 տրիլիոնից ավելի ներդրում է արել OBOR ենթակառուցվածքային, լոգիստիկ, էներգետիկ և առևտրային նախագծերում:

Սրանք «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի շրջանակում իրականացվող հիմնական նախաձեռնություններից մի քանիսն են: Չինաստան-Եվրոպա երկաթուղային երթուղին կրճատել է առաջման ժամանակը: Բեռները ծովով տեղափոխվում են 35-45 օր, երկաթուղով՝ 12-18 օր: Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքը (ներառյալ արդիականացված Գվադար նավահանգիստը) ապահովել է ուղիղ ելք Արաբական ծով և նվազեցրել է նրա կախվածությունը Մալակկայի նեղուցից: 750 կմ երկաթուղին, որը Ադիս Աբեբան կապում է Զիբութի նավահանգստի հետ, լուծում է Արևելյան Աֆրիկայի տրանսպորտային խնդիրը: Կենտրոնական Ասիայի էներգետիկ նախագծերը հնարավորություն են տվել փոխհատուցել տարածաշրջանի զարգացող երկրներում ենթակառուցվածքների պակասը: Թուրքմենստան-Չինաստան գազատարով տարեկան արտահանվում է 55+ միլիարդ խմ գազ:

OBOR նախաձեռնությունը եզակի է իր ծավալով, դժվար է գերազնահատել դրա կարևորությունը համաշխարհային տնտեսության համար (արտաքին առևտրի, հիմնական գործընկերների և Չինաստանի արդյունաբերության մասնագիտացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս էջեր 8-9): Որոշ մասնակից պետություններ մտահոգված են ՉԺՅ պարտքային կախվածության աճով, որոշ նախագծեր բացասաբար են ազդում շրջակա միջավայրի վրա:

Հեռանկարներ

Չինաստանը համաշխարհային մատակարարման շղթայի կենտրոնում է մնում բազմաթիվ ոլորտներում իր գերիշխանության, համաշխարհային մակարդակի ենթակառուցվածքների և տնտեսության տարբեր ոլորտների վրա ազդող ռազմավարական նախաձեռնությունների շնորհիվ:

Այնուամենայնիվ, բազմաթիվ հիմնախնդիրներ, նաև աշխարհաքաղաքական լարվածության աճը և լոգիստիկ ուղիները դիվերսիֆիկացնելու ոլորտում գործընկերների ցանկությունը, Չինաստանի հեռանկարները կախվածության մեջ են դնում արտաքին և ներքին փոփոխություններին հարմարվելու կարողությունից: Մի կողմից, ներքին սպառման կայուն աճը և արհեստական բանականության, ռոբոտաշինության ու կանաչ տեխնոլոգիաների պես ոլորտներում առաջատար դիրքի պահպանումը կարող են չինական արտադրանքն ավելի մրցունակ դարձնել: Բայց մյուս կողմից, արտաքին ճնշումը սպառնում է հանգեցնել Չինաստանի մասնակի թուլացմանը համաշխարհային տնտեսությունում: Ամեն դեպքում, ժամանակն ապացուցել է Չինաստանի հարմարվողականությունը, ինչը գործնականում երաշխավորում է, որ այն կմնա համաշխարհային առևտրի առանցքային դերակատարը:



Աղբյուրը՝ Nepal Institute for International Cooperation and Engagement

Ում հետ է առևտուր անում Չինաստանը

Freedom Finance Global-ի վերլուծաբանները դիտարկել են Չինաստանի առևտրային հարաբերություններն առանցքային երկրների և տարածաշրջանների հետ ու բացահայտել արտահանվող և ներմուծվող ամենատարածված ապրանքները: Փոխադրումների հիմնական միջոցը ծովային տրանսպորտն է:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ



ԱՄՆ
\$507 մլրդ*

📺 43%** 📺 17%
📺 16%



ԵՄ
\$505 մլրդ

📺 47% 📺 14%
📺 13%



Ճապոնիա
\$158 մլրդ

📺 40% 📺 16%
📺 15%



Հոնկոնգ***
\$279 մլրդ

📺 70% 📺 11%
📺 5%



Հրվ. Կորեա
\$151 մլրդ

📺 42% 📺 20%
📺 14%



Վիետնամ
\$142 մլրդ

📺 44% 📺 21%
📺 16%



Մալայզիա
\$90 մլրդ

📺 40% 📺 20%
📺 11%



ՌԴ
\$111 մլրդ

📺 40% 📺 18%
📺 13%



Ավստրալիա
\$75 մլրդ

📺 31% 📺 24%
📺 14%



Բրազիլիա
\$59 մլրդ

📺 42% 📺 21%
📺 15%

*Արտահանման ընդհանուր ծավալը **% Ընդհանուր ծավալի %

***Հոնկոնգ՝ ՉԺՀ օֆշորային շրջան. առևտրային վիճակագրությունը հաշվի է առնվում առանձին

Սարքեր և էլեկտրոնիկա

Տրանսպորտ

Տեքստիլ, հագուստ և կոշիկ

Նյութեր և ածխաջրեր

Քիմիա և նավթաքիմիա

Գյուղատնտեսություն և անասնաբուծություն

Կենցաղային ապրանքներ

Վառելիք

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ



ԵՄ

\$283 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 28%
Տրանսպորտ 18%
Քիմիա և նավթաքիմիա 17%

Հրվ. Կորեա



\$163 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 66%
Նյութեր և ածխաջրեր 14%
Քիմիա և նավթաքիմիա 12%



ԱՄՆ

\$167 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 21%
Քիմիա և նավթաքիմիա 20%
Նյութեր և ածխաջրեր 15%

Ճապոնիա



\$161 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 47%
Նյութեր և ածխաջրեր 20%
Քիմիա և նավթաքիմիա 13%

Ավստրալիա



\$155 մլրդ

Նյութեր և ածխաջրեր 78%
Վառելիք 13%
Գյուղատնտեսություն և անասնաբուծություն 6%



ՌԴ

\$128 մլրդ

Վառելիք 75%
Նյութեր և ածխաջրեր 17%
Գյուղատնտեսություն և անասնաբուծություն 4%



Ինդոնեզիա

\$74 մլրդ

Նյութեր և ածխաջրեր 45%
Վառելիք 30%
Գյուղատնտեսություն և անասնաբուծություն 15%



Բրազիլիա

\$122 մլրդ

Գյուղատնտեսություն և անասնաբուծություն 44%
Նյութեր և ածխաջրեր 33%
Վառելիք 17%



Վիետնամ

\$93 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 69%
Նյութեր և ածխաջրեր 9%
Տեքստիլ, հագուստ և կոշիկ 8%



Մալայզիա

\$103 մլրդ

Սարքեր և էլեկտրոնիկա 44%
Վառելիք 35%
Նյութեր և ածխաջրեր 10%

Խաղադրույք Արևելքի վրա

Չինաստանի ֆոնդային շուկան
ինչպես է աշխատում



Միխայիլ Բրովկին

Freedom Finance Global-ի ներդրումների
խորհրդատուների ղեկավար

Չինական ֆոնդային գործիքների ծավալի, նորարարության և արժեքային համեմատաբար ցածր գնահատումների համադրությունը, նաև արտասահմանյան մասնակիցների համար աստիճանական ազատականացումն այս շուկան դարձնում են ամենախոստումնալիցներից մեկը: Եվ, այնուամենայնիվ, չնայած իր հսկայական ներուժին և համաշխարհային տնտեսության մեջ մեծ կարևորությունը, արտասահմանյան ներդրողների համար այն մնում է առեղծված: Եկեք պարզենք, թե Չինաստանի ֆոնդային բորսաներն ինչպես են կառուցված, ինչ հնարավորություններ են տալիս, և ինչպես է հնարավոր մուտք գործել այդ շուկաներ:

Ինչն ինչոց է

Չինական ֆոնդային շուկան 2 մաս ունի՝ մայրցամաքային (onshore) և կղզային (offshore): Մայրցամաքային բորսաներում հիմնականում ներկայացված են այն ընկերությունները, որոնք ուզում են ներքին ներդրումներ ներգրավել: Կղզայինում էլ ներկայացված են արժեթղթերի այն թողարկողները, որոնք ձգտում են ներգրավել արտասահմանյան կապիտալ: Չինաստանի ֆոնդային առաջատար հարթակներն են մայրցամաքային Շանհայի և Շենչժենի բորսաները և կղզային Հոնկոնգին: Կղզայինի գործունեությունը կազմակերպվում է կարգավորող կանոններով, որոնք արտասահմանյան ներդրողների համար պարզեցնում են դրա վրա գործարքները: Բացի այդ, երկրում գործում են Պեկինի ֆոնդային բորսան և STAR Market-ը: Դրանք ներկայացնում են փոքր և միջին կապիտալիզացիաներով թողարկողներին, որոնք դեռևս պատրաստ չեն ցուցակվել խոշոր հարթակներում: Տեղական ընկերությունների բաժնետոմսերը բաժանված են դասերի: Մայրցամաքային Չինաստանում A-տիպի բաժնետոմսերը վաճառվում են յուանով և հիմնականում հասանելի են տեղական ներդրողներին: B դասի բաժնետոմսերը նմանացված են ԱՄՆ կամ Հոնկոնգի դոլարով և ավելի շատ ուղղված են օտարերկրացիներին: Հոնկոնգի ֆոնդային բորսայում վաճառվող արժեթղթերը բաժանված են.

- ✔ H-բաժնետոմսեր (թողարկում են ՉԺՀ-ում գրանցված ընկերությունները):
- ✔ Red Chips (թողարկում են մայրցամաքային Չինաստանից դուրս «գրանցված» թողարկողները, որոնց պետական բաժնեմասը 30 %-ից բարձր է):
- ✔ P-Chips (առաջարկում են մայրցամաքային Չինաստանից դուրս գրանցված և երկրում գործող մասնավոր բիզնեսների ներկայացուցիչները):

Չինական ֆոնդային բորսաներ՝ Ա-Ց

Հոնկոնգի ֆոնդային բորսան (HKEX) հիմնադրվել է 1891-ին և այսօր աշխարհի ամենամեծերից մեկն է: Այն չինական շուկայում ներդրումներ կատարել ցանկացող օտարերկրյա ներդրողների հիմնական հարթակն է: Ոչ ռեզիդենտները կարող են գնել HKEX-ում վաճառվող բաժնետոմսեր, մայրցամաքային Չինաստանի որոշ արժեթղթեր, օգտվել լիցենզավորված բրոքերների ծառայություններից, որոնք մուտք ունեն տվյալ շուկա: 2025-ի փետրվարի սկզբի դրությամբ HKEX-ում ներկայացված էր 2620 ընկերություն: Բորսայի կապիտալիզացիան գերազանցում էր 31.9 տրիլիոն հոնկոնգյան դոլարը (4.1 տրիլիոն ԱՄՆ դոլար):

Շանհայի ֆոնդային բորսան (SSE), որը հիմնականում կենտրոնացած է խոշոր պետական ընկերությունների վրա, հիմնադրվել է 1990 թվականին: 46.802 տրիլիոն յուան (6.42 տրիլիոն դոլար) կապիտալիզացիայով այն Ասիայի ամենամեծ ֆոնդային բորսան է: Այնտեղ գրանցված է 2283 ընկերություն: Արտասահմանյան ինստիտուցիոնալ ներդրողներն առևտրին ուղիղ մասնակցելու համար պետք է արտոնագիր ստանան:

2019-ից սկսած՝ Շանհայի ֆոնդային բորսայում STAR Market-ը (SSE STAR Market) գործում է որպես առանձին հարթակ: Այստեղ ներկայացված են կենսատեխնոլոգիական ընկերությունների, ԱԲ մշակողների և չիպեր արտադրողների բաժնետոմսեր: 2025-ի փետրվարին բորսայում կար 582 ընկերություն, և դրա կապիտալիզացիան կազմում էր 6.32 տրիլիոն յուան (860 միլիարդ դոլար):

Շենչժենի ֆոնդային բորսան (SZSE) SSE հասակակիցն է: Ներկայացված են տնտեսության բարձր տեխնոլոգիական և նորարարական ոլորտների խոշոր և միջին մասնավոր ընկերությունները: Հարթակում թողարկողների թիվը 2858 է՝ 28.311 տրիլիոն յուան կապիտալիզացիայով (3.88 տրիլիոն դոլար): Պեկինի ֆոնդային բորսայում (BSE) ներկայացված են ստարտափներ և նորարարական փոքր ու միջին բիզնեսներ. այստեղ կա 264 թողարկող: Հարթակը հիմնադրվել է 2021-ին, կապիտալիզացիան 3.51 տրիլիոն յուան է (481.5 միլիարդ դոլար):

Լայն հնարավորություններ

Ոչ ռեզիդենտները կարող են մի քանի եղանակով ներդրումներ կատարել չինական արժեթղթերում:

Ամերիկյան ֆոնդային շուկան առաջարկում է Չինաստանի խոշոր թողարկողների դեպոզիտար անդորրագրեր (ADR/GDR): Կարող եք ներդրումներ կատարել Alibaba Group (BABA), JD.com (JD), Baidu (BIDU), PDD Holdings (PDD), NetEase (NTES), Trip.com (TCOM) և այլ ընկերություններում:

Չինաստանի հիմնական ֆոնդային ինդեքսները

Չինաստանի ֆոնդային խոշորագույն ինդեքսները

CSI 300

Շահախառնում և Շենչժենում ցուցակված 300 խոշորագույն ընկերությունների A դասի բաժնետոմսեր

Shanghai Composite

Շահախառնում ներկայացված 1500-ից ավելի ընկերությունների A և B դասի բաժնետոմսեր

Shenzhen Component

Շենչժենում ներկայացված 500 ընկերության A-բաժնետոմսեր

Hang Seng

Հոնկոնգի ֆոնդային բորսայի առաջատար 80 ընկերություններ, նաև H-բաժնետոմսեր, Red Chips-եր և P-Chips-եր

SSE Star 50

STAR Market-ի խոշորագույն 50 ընկերություններ

ChiNext Index

Շենչժենի ֆոնդային բորսայում գրանցված տեխնոլոգիական արագ զարգացող 100 ընկերություններ

MSCI China Index

Չինաստանում և ԱՄՆ-ում ներկայացված չինական 700-ից ավելի խոշորագույն բաժնետոմսեր

FTSE China

Չինական առաջատար 50 ընկերություններ

տալիս պարզեցված մուտք գործել Չինաստանի նաև այլ հարթակներ: Ծրագրերով հարկային արտոնություններ են նախատեսված դիվիդենդների համար: Թերություն է այն, որ շահութաբեր կամ վնասաբեր գործարքի համար դրոշմանիշային տուրք է պետք վճարել: Կոնկրետ թողարկողների ընտրության և հեռանկարների գնահատման դժվարություններից խուսափելու համար կարող եք խաղադրույք կատարել շուկայի վրա՝ որպես ամբողջություն, կամ դրա որոշակի հատվածի վրա, և ներդրումներ կատարել ամերիկյան բորսաներում ներկայացված բորսայական ֆոնդերում (ETF):

- ✓ iShares MSCI China ETF-ը (MCHI)-ը կենտրոնացած է MSCI China ինդեքսի վրա և մնում է ամենատարածված գործիքներից մեկը չինական շուկայում լայն ներկայացվածություն փնտրող ներդրողների համար:
- ✓ iShares China Large-Cap ETF (FXI)-ը հետևում է FTSE China ինդեքսին և կենտրոնանում խոշորագույն ընկերությունների վրա:
- ✓ Մայրցամաքային Չինաստանի բաժնետոմսերում ներդրումների համար կարող եք դիտարկել Xtrackers Harvest CSI 300 China A-Shares ETF (ASHR)-ն և KraneShares Boser MSCI China A ETF (KBA)-ն: Այս ֆոնդերը հետևում են CSI 300 ինդեքսին:

Տեղական բրոքերներով մայրցամաքային շուկայում ուղիղ ներդրումներ կատարելու համար գործում են արտոնագրված ծրագրեր: Այդպիսի ներդրումները հնարավոր են միայն որակավորված ինստիտուցիոնալ ներդրողների համար: Սա զգալիորեն ընդլայնում է հասանելի գործիքների շրջանակը, սակայն մասնակիցների հանդեպ պահանջները բավականին խիստ են, գրանցման գործընթացը բարդ է:

Բորսա մտնել խորհրդատուի հետ

ԱՊՀ երկրների տարածքում գործող մի քանի բրոքերներ հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել Չինաստանի ֆոնդային շուկայում: Մասնավորապես, չինական ընկերությունների արժեթղթեր գնելու համար կարող եք օգտվել NYSE, NASDAQ և HKEX բորսաներ մուտք գործելու՝ Freedom Finance Global-ի տրամադրվող հնարավորությունից: Բացի այդ, ընկերության հաճախորդներին հասանելի է «Ներդրողի բաժանորդագրություն» ծառայությունը: Այն ներառում է ներդրումների վերաբերյալ ուսումնական դասընթաց, պորտֆելների վերլուծություն և բաժանորդների ներդրումային գաղափարներ: Ծառայությունը ներառում է նաև ամսական երկու հեռակապ, որի ընթացքում խորհրդատուները՝ Freedom-ի ներկայացուցիչները, իրենց հաշիվներում ձևավորում են ներդրումային պորտֆելներ՝ բացատրելով, թե ինչու են գնում որոշակի արժեթղթեր: Ռիսկերի աճի պատճառով չինական ընկերությունների բաժնետոմսերում ներդրումներին հատկացվում է պորտֆելի առավելագույնը 10 %-ը: Ամսական երկու անգամ, ներդրումային յուրաքանչյուր հեռակապից առաջ, խորհրդատուներն իրենց հաշիվներին մուտքագրում են 100 դոլար, ծրագրի մասնակիցները՝ որքան ուզում են:

Խորհրդատուի հետ ներդրումներ կատարելը թույլ է տալիս օգտվել շուկայի վերլուծության նրա փորձից և խուսափել սխալներից: Մասնավորապես, 2025-ի փետրվարին «Բաժանորդագրության» շրջանակում Li Auto (LI)-ի բաժնետոմսերի հետ իրականացվող գործարքը փակվել է ավելի քան 45 % շահույթով, Alibaba Group (BABA)-ի դեպքում՝ գրեթե 38 %:

Հոնկոնգի ֆոնդային բորսայում գործող լիցենզավորված բրոքերների միջոցով արժեթղթեր գնելու համար պետք է միանաք ոչ ռեզիդենտների համար նախատեսված HKEX ծրագրերից մեկին: Stock Connect-ը նաև պարզեցված մուտք է ապահովում Շանհայի ֆոնդային բորսայում իրականացվող գործարքների համար, երբեմն, կախված բրոքերից, հնարավորություն է

Թվային երակ

E-commerce-ը՝ չինական տնտեսության հայելու մեջ



Ալեքսանդր Խոն
Freedom Broker Ատիրաուի անհատական ավագ մենեջեր

Չինաստանն էլեկտրոնային առևտրի ամենամեծ շուկան է աշխարհում: Այն ապահովում է համաշխարհային առցանց գործարքների գրեթե 50 %-ը: Էլեկտրոնային առևտուրը ծաղկում է ինտերնետային ծառայությունների և բջջային տեխնոլոգիաների արագ զարգացման, աճող գնողունակությամբ միջին խավի ակտիվ ընդլայնման շնորհիվ: Չնայած կարգավորման դժվարություններին՝ 3.1 տրիլիոն դոլար արժողությամբ այս ոլորտը ներդրումների համար խոստումնալից կմնա առաջիկա առնվազն մի քանի տարիներին:

Ուժերի դասավորությունը

Շատ ընկերություններ են գործում Չինաստանի էլեկտրոնային առևտրի ոլորտում, բայց շուկան խիստ կենտրոնացած է: Հիմնական խաղացողներն են Alibaba-ն (BABA), որը վերահսկում է տեղական առևտրի շրջանառության 40 %-ն իր երկու հարթակների՝ Taobao-ի և Tmall-ի միջոցով, JD.com-ը (JD) և PDD Holdings-ը (PDD), որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը 20 % է: Այս երեք ընկերությունների համաշխարհային մասնաբաժինը կազմում է 40 %: Ներքին շուկայի ևս 10 %-ը պատկանում է ByteDance-ին: Նրա Douyin հավելվածը և համանուն հարթակը, որը Չինաստանից դուրս հայտնի է որպես TikTok, եզրափակում է լավագույն հնգյակը:

Չինաստանում հաճախորդների ներքին մրցակցությունը մեծ է, բայց ընկերություններն այն կառավարում են մասնագիտացած մոտեցումներով: Alibaba-ն բոլոր խաղացողների շարքում առաջին տեղում է իր լայն էկոհամակարգի շնորհիվ, որը ներառում է Tmall-ի օգտագործումը պրեմիում ապրանքանիշերի և Taobao-ն՝ առաջարկների ավելի լայն շրջանակի համար: JD.com-ը մասնագիտանում է արագ առաքման և որակյալ ապրանքների վաճառքի մեջ: PDD Holdings-ն իր մոդելի առանցքում դնում է առավելագույն խնայողություններով և խաղային տարրերով խմբային զեղչերը:

Չինական էլեկտրոնային առևտրի առանձին հատված է առցանց պատվերների և սննդի առաքման ծառայությունը: Այստեղ **70 %-ը** վերահսկում է Meituan-ը, Alibaba-ի «դուստր» Ele.me-ն՝ **25 %-ը**:

Հաջողության գաղտնիքները

Տեխնոլոգիան և նորարարությունը կարևոր դեր են խաղում Չինաստանում առցանց առևտրի զարգացման գործում: Վեր-

ջին տարիներին «նոր էլեկտրոնային առևտրի» հատվածը, որը մասնագիտանում է սոցիալական ցանցերի և ուղիղ հեռարձակումների միջոցով վաճառքի մեջ, արագորեն աճում է: Այս մոտեցումը մեծացնում է հաճախորդների վստահությունը և ստեղծում ապրանքանիշի հետ անմիջական փոխազդեցության էֆեկտ: Սա այն մոդելն է, որը ByteDance-ն օգտագործում է իր Douyin հարթակի համար:

Նայելով այս նվաճումներին՝ «հին գվարդիան» նույնպես ակտիվորեն զարգացնում է սթրիմինգային առևտուրը, սակայն այս ուղղությամբ նախաձեռնությունը բաց է թողել: Մինչև դա շուկայի առաջատարներն ակտիվ օգտագործում են վաճառքի կուտակված տվյալները և հաճախորդների բազայի չափը՝ որպես մրցակցային առավելություն: Սա թույլ է տալիս արդյունավետ օգտագործել ԱԲ (AI) ալգորիթմները վերլուծելով օգտատերերի վարքագիծը և նախասիրությունները: Դրա շնորհիվ Alibaba-ն և JD.com-ը հաճախորդներին տալիս են անհատական առաջարկներ՝ ավելացնելով հաճախորդների գոհունակությունը և ներգրավվածությունը:


Էլեկտրոնային առևտրի ներկայացուցիչները դիվերսիֆիկացնում են բիզնես մոդելները, մշակում լոգիստիկայի և ֆինթեքի ոլորտները: Մեծ տվյալներն օգնում են պահանջարկի կանխատեսումներին և մատակարարման շղթայի օպտիմալացմանը: Ֆինտեխնոլոգիաների ինտեգրումն առցանց առևտրի էկոհամակարգում թույլ է տալիս առաջարկել անվտանգ և հարմար վճարային համակարգ, առցանց վաճառողներին էլ տալիս է վճարումները մշակելու և գնումների համար վարկեր տրամադրելու վրա գումար վաստակելու նոր եղանակներ:

Պետական ճնշում

Չինական էլեկտրոնային առևտրի ոլորտի համար լուրջ խնդիրներ է ստեղծում պետական կարգավորման խստացման արշավը, որը սկսվել է 2020-ի վերջին: Պետության ճնշման աճի իրական պատճառներն անհայտ են: Պաշտոնական պատճառը մենաշնորհները վերացնելու և օգտատերերի տվյալները պաշտպանելու ցանկությունն է:

Պետական վերահսկողությունը ուժեղացվում էր տեխնոհսկաների էկոհամակարգերի միջև խոչընդոտների հարկադիր վերացման, օգտատերերի տվյալներն արտասահման փոխանցելի առանց կարգավորող մարմնի թույլտվության արգելելու, անձնական տեղեկությունները հավաքելու և պահելու պահանջների խստացման, ալգորիթմական խորհրդատվության օգտագործման սահմանափակմամբ: Ոլորտի համար

Չինական e-commerce խոշորագույն ընկերությունների ներկայության աշխարհագրությունը



Աղբյուրը՝ ընկերությունների տվյալներ, Freedom Finance Global-ի հաշվարկներ

լրացուցիչ դժվարություններ են առաջացրել առցանց հեռարձակումների միջոցով առևտրային հարթակներ գովազդող հայտնի ստրիմերների քրեական հետապնդումները:

Մշուշոտ հույսեր

2023-ի սկզբից իշխանությունը մեղմացրել է իր տոնը խոշոր խաղացողների նկատմամբ: Պետությունը լրջորեն զբաղվել է տնտեսության վերականգնմամբ՝ որոշելով տեխնոլոգիական ոլորտը դարձնել իր լոկոմոտիվը: Բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարում են, որ աջակցում են մասնավոր բիզնեսին, մասնավորապես՝ թվային տնտեսության հատվածին, էլեկտրոնային առևտրի ոլորտում խոշոր ընկերությունները կատարում են կառավարության ներկայացրած բոլոր պահանջները: այս ամենը վկայում է դիմակայության այս փուլի ավարտի մասին: Կառավարությունը հասել է իր նպատակին և չի խանգարի ոլորտի զարգացմանը միջնաժամկետ հեռանկարում: Սակայն ընկերությունները ստիպված կլինեն հաշտվել նախկին վիճակին վերադառնալու անհնարինության հետ:

Ներքին պահանջարկն այժմ դարձել է Չինաստանում առցանց առևտրի ֆինանսական ցուցանիշների վրա ազդող հիմնական գործոնը: Կորոնավիրուսի սահմանափակումների վերացումից հետո քաղաքացիները դեռ նախընտրում են խնայել ոչ անհրաժեշտ ապրանքների վրա, որոնք կազմում են առցանց խանութների տեսականու հիմքը: Առաջատար խաղացողների պայքարը տեղական շուկայի մասնաբաժնի համար սրվել է:

Այս ուղղությամբ կարևոր է PDD Holdings-ի վրա գնային ճնշումը մեծացնելու համար վաճառողներին սուբսիդավորելու JD.com-ի ծրագիրը, ByteDance-ի մուտքը սննդի առաքման շուկա, որտեղ գերիշխում է Meituan-ը՝ Դույնում նման ծառայությամբ: 2023-ի կեսից ընկերություններն ակտիվ ներդրումներ են կատարել գովազդի, ակցիաների և զեղչերի ծրագրերում: Սա նրանց թույլ է տալիս եկամուտի աճը պահպանել ընդունելի մակարդակի վրա, բայց հարվածում է ոլորտի եկամտաբերությանը:

Զարգացման ուղիներ

Ներքին մրցակցության աճի պայմաններում չինական հարթակները տեսնում են զարգացման 2 ճանապարհ: Առաջինն ընտրել են JD.com-ը և Alibaba-ն. օպերացիոն ծախսերի կրճատում՝ շեշտը դնելով ներքին շուկայի վրա: PDD Holdings-ն ընտրել է երկրորդ ուղին. առանց որևէ գումար խնայելու դեպի Զարավարնեյան Ասիա և Եվրոպա (ներառյալ Թուրքիան), Միացյալ Նահանգներ ընդլայնվելու համար:

Այսպիսով, չնայած վերջին շրջանում ի հայտ եկած խնդիրներին, չինական էլեկտրոնային առևտուրը շարունակում է կատարելագործվել և զարմացնել իր ծավալով ու նորարարությամբ: Տեխնոլոգիական առաջատարությունը, բիզնես մոդելների բազմազանությունը և օգտատիրական փորձի վրա շեշտը դնելը Չինաստանին տալիս են գլոբալ էլեկտրոնային առևտրի վերափոխման համար անհրաժեշտ առանցքային խթանիչներ: Այս ոլորտը զգալի ներուժ ունի, կան բոլոր հնարավորությունները, որ ամբողջ ոլորտը 2025-ին մտնի զարգացման նոր շրջան: Research and Markets վերլուծական գործակալության փորձագետները չինական էլեկտրոնային առևտրի շուկան 2024-ին գնահատել են 3.1 տրիլիոն դոլար: Զաջորդ չորս տարիներին դրա տարեկան աճը կանխատեսվում է 5.5 %:

Այս տարի պետությունը, որը նախկինում զսպում էր աճը, կսկսի խթանել առցանց առևտուրը երկրում: Արտահանումից կախվածության նվազեցումը և դեպի ներքին պահանջարկ վերաուղղորդումը ենթադրում են մանրածախ գնումները խթանող ծրագրերի զգալի ընդլայնում թե՛ դրամական ծավալի, թե՛ ապրանքային ընդգրկման առումով: Պետական աջակցության նոր փուլի շրջանակի վերաբերյալ ամբողջական տեղեկությունը կհայտնվի, երբ ներկայացվեն Չինաստանի ՅՆԱ-ի աճի պաշտոնական նպատակները 2025-ին: Որոշակի հանգամանքների դեպքում սա կարող է դրականորեն խթանել էլեկտրոնային առևտրի հատվածը: 🇨🇳

Հեղափոխություն դրամապանակում

Ո՞րն է ՉԺՀ ֆինթեքի առավելությունը



Միխայիլ Պարամունով
Freedom Finance Global-ի
ավագ վերլուծաբան

Չինաստանն առաջատար է ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտում: Դա ներառում է նաև բանկային առցանց գործառնությունները, ինտեռնետային վճարումները, քրաուլենդինգը՝ և թվային արժույթները: Ինչպես են նրանք արել դա, և ո՞վ կարող է այստեղ առաջ անցնել Չինաստանից:

Գերազանցիկներ և լավ սովորողներ

Անցած տարի թվային գործարքներով շրջանառվող գրեթե յուրաքանչյուր երրորդ դոլարը բաժին էր հասնում չինական շուկային՝ ավելի քան \$3.5 տրիլիոն: Համեմատության համար, 2017-ին չինական մասնաբաժինը չի հասել 25 %-ի, փոխանցումների ծավալն էլ չի գերազանցել \$850 միլիարդը: 2024-ին նման գործարքների ընդհանուր շրջանառությունը ԱՄՆ-ում կազմել է \$2.6, Եվրոպայում՝ \$2.1 տրիլիոն:

Թվային վճարումներից բացի, Չինաստանն ակտիվ զարգացնում է քրաուլենդինգը՝ այս առումով զբաղեցնելով համաշխարհային շուկայի գրեթե կեսը: ԱՄՆ մասնաբաժինն այստեղ կրկնակի փոքր է, Եվրոպայինը՝ 2.5 անգամ:

Թվային բանկինգի հատվածում Չինաստանը զբաղեցնում է համաշխարհային շուկայի մոտ մեկ երրորդը, Միացյալ Նահանգները՝ մոտ 15 %-ը, բոլոր եվրոպական երկրները միասին՝ մոտ 25 %-ը: Բջջային ծառայությունների օգտատերերի թվով Չինաստանի առաջատար երեք բանկերը 2023-ին այդ ծառայությունները տրամադրել են ավելի քան 350 միլիոն մարդու: Ֆինթեքի այլ հատվածներում՝ թվային ներդրումներում և ակտիվներում, Չինաստանի մասնաբաժինը դեռ այդքան մեծ չէ, բայց այդ ոլորտները ևս արագ զարգանում են: Հատկապես հետաքրքիր է թվային յուան (e-CNY) ներդնելու Ժողովրդական բանկի նախաձեռնությունը, որը փորձարկվում է մի քանի տարածաշրջաններում: Դրա օգտագործումն ապահովում է ակնթարթային և էժան գործարքներ՝ էլեկտրոնային ստորագրությունների և կողավորման շնորհիվ բարձրացնելով անվտանգությունը:

Առաջադիմության պատճառները

Չինաստանում ֆինթեք արդյունաբերության աճը պայմանավորված է էական գործոններով՝ բանկային ծառայություններին բնակչության զգալի մասի սահմանափակ հասանելիություն, միջին խավի աճ, պետական աջակցություն ու առցանց ծառայությունների տարածման միտում ամբողջ աշխարհում:

Թվային վճարումների ոլորտում երկրի առաջատարությունը ուղղակիորեն կապված է ակտիվ ներդրումների, հիմնական

խաղացողների նորարարական լուծումների, համացանցի տարածման և բջջային սարքերի բարձր մակարդակի հետ:

Լավագույների մեջ լավագույնը

Ոլորտում առաջատար դիրքերը զբաղեցնում են Alibaba Group-ին (BABA) պատկանող Alipay-ը և Tencent-ի WeChat Pay բաժինը: Դրանք կազմում են երկրում բջջային վճարումների 90 %-ը: Այս հարթակներն առաջարկում են միկրովարկային և ապահովագրական, ներդրումների կառավարման ծառայություններ: Ամեն հավելված 1.3+ միլիարդ ակտիվ օգտատեր ունի աշխարհում: Ֆինանսական ծառայությունները հաճախ ինտեգրված են սոցիալական ցանցերում: Օրինակ՝ WeChat-ում օգտատերերը կարող են ոչ միայն շփվել, այլև վճարել, տաքսի պատվիրել, հյուրանոցներ ամրագրել և տոմսեր գնել: Այս ամենը մեկ հավելվածում է, ինչը զգալիորեն մեծացնում է վճարումների շրջանառությունը:

Թվային ընդլայնում

Չինական ֆինթեք ընկերությունները չեն սահմանափակվում իրենց հսկայական ներքին շուկայով և ակտիվ ընդլայնում են իրենց ներկայությունը դրանից դուրս: Alipay-ը և WeChat Pay-ը հասանելի են ամբողջ Ասիայում, նաև Եվրոպայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրներում: Alipay-ի օգտատերերի մոտ կեսը (ավելի քան 600 միլիոն) Չինաստանից դուրս է: WeChat-ի համար այս բաժինը կազմում է մոտավորապես 40 % կամ ավելի քան 500 միլիոն մարդ:

Alipay-ը և WeChat Pay-ը 2023-ին գործընկերային հարաբերություններ հաստատեցին միջազգային վճարային համակարգերի՝ Visa (V) և Mastercard (MA)-ի հետ, ինչն օտարերկրյա օգտատերերին թույլ տվեց իրենց վարկային և դեբետային քարտերը կապել այս հարթակների հետ՝ Չինաստանում անխափան գործարքներ կատարելու համար: Մինչև այդ, WeChat Pay-ն իր համակարգը միավորել էր Shopify (SHOP) հարթակի հետ: Սա հեշտացրել էր չինացի առևտրականների մուտքը միջազգային շուկաներ և պարզեցրել օտարերկրյա գնորդների վճարումները: 2024-ի վերջին ընկերությունը գործընկերային հարաբերություններ հաստատեց շվեդական Klarna-ի հետ, որը մասնագիտացած է «Գնիր հիմա, վճարիր հետո» ծառայությունների ոլորտում: Միջազգային ընդլայնումը Չինաստանի ֆինթեք շուկայի առջև ծառայած հիմնական հիմնախնդիրներից մեկին՝ հագեցածությանն ուղղված պատասխան է: Ներդրողների համար սա նշանակում է կայուն աճ և շահութաբեր ներդրումների նոր հնարավորություններ:

* Վարկավորման ձև, ըստ որի՝ մասնավոր ներդրողները առցանց հարթակներով վարկեր են տրամադրում բիզնեսներին կամ անհատներին:

Մրցավազք հայ-թերքի հետ



Ագիգա Ամանգելյան
Freedom Broker Պավլոգարի անհատական ավագ մենեջեր

Որ ուղղություններով է ընթանում տեխնոլոգիական գլոբալ առաջատարության պայքարը

Վերջին տասնամյակներում Չինաստանը, որպես բարձր տեխնոլոգիական արտադրանք արտադրող և սպառող խոշորագույն միավոր, ակտիվ ներդրումներ է կատարել նորարարության մեջ: Երկիրը գրեթե ամենուրեք օգտագործում է առաջադեմ տեխնոլոգիաներ՝ սպառողական էլեկտրոնիկայից մինչև ժամանակակից արդյունաբերական սարքավորումներ: Մենք վերլուծել ենք Չինաստանի համար ամենախոստումնալից բարձր տեխնոլոգիական հատվածները:

Երկաթե բանականությունների մարտը

Չինաստանն արհեստական բանականության (ԱԲ) ոլորտում արագ զարգանում է կառավարության աջակցության և առաջատար դառնալու ցանկության շնորհիվ: Այստեղ գիտնականներն ավելի ակտիվ են անցկացնում իրենց հետազոտությունները, քան այլ երկրներում նրանց գործընկերները: Բնակչությունը գրեթե անվերապահ հավանություն է տալիս ԱԲ օգտագործմանն առօրյա կյանքում: Չինական DeepSeek ներյոնային ցանցը հետևում է արևմտյան ChatGPT-ին և արդեն ստացել է դրա «գլխակեր» մականունը: ՉԺՅ ԱԲ-ն ավելի է ծան է մշակվում և որոշ ուղղություններով ինտելեկտուալ առումով գերազանցում է իր արևմտյան մրցակցին:

Միայն վերջին 10 տարիներին Չինաստանում ստեղծվել է ավելի քան 1400 ԱԲ ստարտափ, և դրանցում ներդրված միջոցների ծավալը գերազանցել է այս ուղղությամբ ամբողջ աշխարհում ներդրումների ծավալի 20 %-ը: Այս առումով Չինաստանը զիջում է միայն Միացյալ Նահանգներին:

Չինական ԱԲ ընկերությունները մեծ հաջողությունների են հասել համակարգչային ապագայի և խոսքի ճանաչման զարգացման, ինքնավար կառավարման համակարգերի գործում: Ուժեղ մրցակցության պատճառով նրանք հաճախ կենտրոնանում են մեկ նեղ ոլորտի վրա: Այսպես, Baidu-ն (BIDU) մեծ տարբերությամբ առաջատար է ինքնավար վարորդական տեխնոլոգիաների ոլորտում, SenseTime-ն առաջարկում է պատկերի ճանաչման լավագույն լուծումները, iFlytek-ը հաջողության է հասել ձայնային տեխնոլոգիաների հատվածում: Tencent-ի և Alibaba-ի (BABA) պես ինտերնետային խոշոր կորպորացիաները նույնպես մշակում են լեզվական իրենց սեփական մեծ մոդելները և չաթրոտերը, որոնք պահանջարկ ունեն երկրում:


Էլեկտրոնիկայի արկածները

Նորաձև արհեստական բանականության համեմատ կիսահաղորդիչները գոյություն ունեն տասնամյակներ շարունակ:

Սակայն կիրառությունների բազմազանության պատճառով (կենցաղային և արդյունաբերական կենցաղային տեխնիկա, ավտոմոբիլային արդյունաբերություն, համակարգչային լուծումներ, 5G կապ, ռոբոտներ և այլն) այս արդյունաբերությունը ռազմավարական նշանակություն ունի այլ երկրներից կախվածությունը նվազեցնելու գործում:

Չինաստանն էլեկտրոնիկա արտադրող ամենամեծ երկիրն է աշխարհում, հետևաբար կիսահաղորդիչների սպառման առաջատարն է: Միկրոսխեմաներ օգտագործող արտադրանքի ավելի քան 60 %-ն արտադրվում է Չինաստանում, ուստի այս հատվածում առաջատար դիրքը հատկապես կարևոր է երկրի համար: Ջարմանալի չէ, որ «Արտադրված է Չինաստանում 2025» պետական ռազմավարությունը նպատակ էր դրել կիսահաղորդիչների ինքնաբավությունը մինչև 2020 թվականը հասցնել 40, մինչև 2025-ը՝ 70 %-ի: Սակայն ստորև ներկայացված գրաֆիկից երևում է, որ այս նպատակին դեռ չի հասել: Պատճառներից մեկն այն է, որ ԱՄՆ-ն սահմանափակել է չիպերի արտադրման համար

Երկրների և տարածաշրջանների մասնաբաժինը կիսահաղորդիչների արտադրության տարբեր փուլերում



Միկրոսխեմաների նախագծում



Չիպեր դրոշմող սարքավորումների մշակում




Նումքի արտադրություն



Թիթեղների արտադրություն



Նավաբույս, փաթեթավորում, փորձարկում



Աղբյուրը՝ Boston Consulting Group (2022)

անհրաժեշտ սարքավորումների մատակարարումը Չինաստան: Մինևույն ժամանակ, ցանկալիի և իրականի միջև եղած տարբերությունն ապահովում է կառավարության աջակցությունն այս ոլորտին և ստեղծում է աճի լավ ներուժ: Ըստ Bloomberg-ի՝ 20 գերարագ զարգացող կիսահաղորդչային ընկերություններից 19-ը 2022-ին Չինաստանում էին: Ամերիկյան պատժամիջոցները միայն օգնել են, որ Չինաստանն այս ոլորտում ինքնաբավ դառնա: Երկիրն արդեն փորձարկում է իր սեփական էքստրեմալ ուլտրամանուշակագույն ֆոտոլիտոգրաֆը: Այս գերմեքենան հնարավորություն է տալիս արտադրել ամենաժամանակակից միկրոսխեմաները: Չինաստանը դեռ ներմուծում է այս սարքավորումները: Երկրի կիսահաղորդչային արդյունաբերության զարգացումը ներդրողներին ընձեռում է եկամտի լավ հնարավորություններ: Այս շուկայում խաղաղույթ կատարելու պարզ տարբերակ է ETF-ում ներդրում կատարելը: Օրինակ՝ Global X China Semiconductor ETF-ի արժեթղթերը կարելի է գնել Յոնկոնգի ֆոնդային բորսայում: Այս ֆոնդը հետևում է FactSet China Semiconductor ինդեքսին, որում կիսահաղորդչային հատվածի չինական առաջատար ընկերություններն են:

Huawei-ը Պեկինում 2024-ին գործարկեց 5.5G **աշխարհի ամենամեծ** առևտրային առաջադեմ ցանցը, որի տվյալների փոխանցման արագությունը **10 անգամ գերազանցում է** ստանդարտ 5G ցանցին:

Համակողմանի կապեր

Չինաստանն առաջատար դեր է խաղում գլոբալ 5G բարձր արագությամբ անլար կապի ստեղծման գործում: 2024-ի վերջին դրան միացված էր ավելի քան մեկ միլիարդ օգտատեր, ինչն ապահովեց երկրի առաջատար դիրքն աշխարհում: 5G կապն օգտագործում են խելացի քաղաքները, ինքնավար տրանսպորտը: Այն պահանջարկ ունի արդյունաբերական ինտերնետում և առողջապահական համակարգում: Հինգերորդ սերնդի ցանցերի տեղակայմանը զուգահեռ երկիրն ակտիվ աշխատում է հաջորդ՝ 6-րդ սերնդի ներդրման վրա: Չինական ընկերություններն արդեն գրանցել են այս ոլորտում արտոնագրերի ընդհանուր թվի 40 %-ը:

ԶԺՀ նորարարական հեռահաղորդակցության շուկայի հիմնական խաղացողներն են Huawei-ն ու ZTE-ն: Նրանք ստեղծում են անհրաժեշտ ենթակառուցվածքներ, մշակում ցանցային լուծումներ և 5G-ն ակտիվ խթանում երկրում և դրսում: Ղազախստանում ZTE-ի գործադիր տնօրենի հետ հարցազրույցը կարդացեք 46-րդ էջում: Ցանցերը տեղակայում են China Mobile-ը, China Telecom-ը և China Unicom-ը:

Ինքնաշխատ

Չինական արդյունաբերական ռոբոտաշինությունն ամենամեծն է աշխարհում: Արդյունաբերական ռոբոտների գլոբալ արտադրության 50 %-ից ավելին բաժին է հասնում ՉԺՀ-ին: Պետությունը խրախուսում է այս հատվածի զարգացումը: Ի վերջո, արդյունաբերական ավտոմատացումը փոխհատուցում է ՉԺՀ մրցակցային առավելություններից մեկի կորուստը՝ էժան աշխատուժը, որովհետև այն թանկանում է ըստ բարեկեցության աճի: Չինաստանում ռոբոտաշինության օգտագործման հիմնական ոլորտներն են արտադրությունը, առողջապահությունը, լոգիստիկան և գյուղատնտեսությունը: Երկրում այս շուկայի հիմնական խաղացողներն են SIASUN Robot & Automation-ը, ESTUN Automation-ը և EFORT Intelligent Equipment-ը:

Շուկայի խնդիրները

Չինաստանի տեխնոլոգիական ոլորտը հզոր ուժ է, որը շարունակում է ձևավորել համաշխարհային տնտեսության ապագան: Նորարարության ձգտումը, որին աջակցում են խոշոր կորպորացիաներն ու պետությունը, թույլ է տալիս պահպանել առաջատար դիրքը հիմնական ոլորտներում: ԲՏԱ առջև ծառայած խնդիրներ են չինական իշխանությունների հարուցած խստացումը և աշխարհաքաղաքական ռիսկերը: Զարգացած երկրները պատժամիջոցներ են կիրառում չինական կապի ոլորտի դեմ՝ արգելելով իրենց իրավասության տակ գտնվող այն ծառայությունները, որոնց միջոցով գուցե հավաքում են օգտատերերի տվյալները: Լաև փորձում են դանդաղեցնել Չինաստանի զարգացումը կիսահաղորդիչների և արհեստական բանականության ոլորտում: Ի պատասխան՝ Չինաստանն ակտիվացնում է սեփական տեխնոլոգիաներն ու արևմտյան արտադրանքի անալոգները ստեղծելը: Չնայած դժվարություններին, երկիրն ունի հարմարվելու և զարգանալու ներուժ՝ համաշխարհային տեխնոլոգիական ասպարեզում մնալով կարևոր խաղացող: 🇨🇳

Արդյունաբերական ռոբոտներով գերառատ 5 երկրները



Աղբյուրը՝ International Federation of Robotics (2023)



Չինաստանի տեխնոլոգիական գոտին

Քաղաքներ, որտեղ տեղակայված են ևորագույն տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունները, հետազոտական կենտրոնները և ստարտապիսները



Արհեստական բանականություն



Անվային հաշվարկներ



Էլեկտրոնային առևտուր



Ավտոմոբիլային արդյունաբերություն



Տնտեսական տեխնոլոգիաներ



Նոր կյուբեր*



Ֆինսթեք



Էլեկտրոնիկա




Հեռահաղորդակցություն



Կիսահաղորդիչներ

Աղբյուրը՝ ընկերությունների տարեկան հաշվառություններ

* Բազմաթիվ իստակություններով նոր կյուբեր, որոնք մշակվել են տեխնոլոգիաների բարելավման և նոր ապրանքների ստեղծման համար



Լիցքավորում ապագայի համար



Իյա Ատամյանովսկի

Freedom Finance Global-ի զարգացման բաժնի
վաճառքի բաժանմունքի ղեկավար

Զինական կանաչ էներգետիկան
փոխում է խաղի կանոնները

Զինաստանը նախատեսում էր վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժինը մինչև 2020-ն ավելացնել մինչև 15%: 2023-ին այս ցուցանիշը երկրում հասել է 31%-ի, ընթացիկ տասնամյակի վերջին կարող է գերազանցել 50%-ը: Արևային էներգիան առաջատարն է արտադրության ծավալով և աճի տեմպով:

Նպատակներ և իրականություն

2016-ին ստորագրվեց Փարիզի համաձայնագիրը, որը սահմանում էր կլիմայի փոփոխության դեմ պայքարի գլոբալ ռազմավարությունը: Միջազգային համաձայնագրերի համաձայն՝ Զինաստանը պարտավորվել է մինչև 2030-ը դադարեցնել ածխաթթու գազի արտանետումների աճը: Երկրի ղեկավարների հայտարարությունները վկայում են, որ Զինաստանը նախատեսում է մինչև 2060-ը հասնել ածխածնային չեզոքության: Զինաստանը կարևոր դեր է խաղում գլոբալ տաքացման դեմ պայքարում. այն արտադրում է աշխարհում մաքուր էլեկտրաէներգիայի մոտ կեսը: Երկիրն ունի արևային և հողմային էներգիայի համաշխարհային արտադրության հզորությունների 40%-ից ավելին:

Զինաստանի գերիշխանության հիմնական գործոններից մեկը պետության ակտիվ մասնակցությունն է համաշխարհային կանաչ էներգիայի ոլորտին: Այս արդյունաբերության ամենակարևոր հատվածն արևային էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Տիեզերական ներուժ

Զինաստանի արևային էներգիայի արտադրությունն աճի տեմպով առաջատար է աշխարհում: Վերականգնվող էներգիայի աղբյուրների շարքում այն նաև ամենաարագ զարգացող հատվածն է երկրի ներսում: Եվ զարգացման տեմպի նվազում չի նկատվում: Միջազգային էներգետիկ գործակալությունը (ՄԷԳ) կանխատեսում է, որ այս ոլորտի հզորությունը 2022-2027 թթ. կրկնապատկվի:

Բիզնեսի համար էլեկտրաէներգիայի գնագոյացման ոլորտում Պեկինի իրականացրած բարեփոխումները, նաև արդյունաբերությանը տարածաշրջանային մակարդակով տրվող ակտիվ աջակցությունը ստեղծում են կայուն և երկարաժամկետ եկամուտների աճի պայմաններ և մեծացնում ներդրումային ներուժը: Արևային էներգիայի պահանջարկն աճում է կոմունալ ծառայությունների շնորհիվ. Զինաստանի մեծ մասում վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի արժեքը ցածր է ածխի կարգավորվող գներից:

Արևային ներդրումներ

ՄԷԳ-ի գնահատականով՝ 2016-2021 թթ. Զինաստանը 47.2 միլիարդ դոլար է ներդրել արևային մոդուլների արտադրության մեջ, ընդհանուր էներգետիկ այս հատվածի ընդհանուր ֆինանսավորումը մնացյալ աշխարհում կազմել է ընդամենը 12 միլիարդ դոլար: Բոլոր արտադրողների մեջ այս արտադրանքի չինական բաժինը 75-97%-ի միջակայքում է: Այս ոլորտում աշխարհի լավագույն 10 ընկերությունները չինական են: Առաջատար են JinkoSolar (JKS), JA Solar Technology, Trina Solar, LONGi Green Energy Technology, Daqo New Energy (DQ) և GCL Technology ընկերությունները:

Էներգետիկ գործակալության փորձագետները կանխատեսում են, որ 2022-2027-ի վերջը արևային վահանակների արտադրության մեջ Զինաստանի ներդրումները կհասնեն 89 միլիարդ դոլարի, մինչդեռ մնացած աշխարհում այդ ցուցանիշը կկազմի 47 միլիարդ դոլար:

Միայն 2023-ին **Զինաստանի գործարկած արևային կայանների հզորությունը գերազանցել է ԱՄՆ բոլոր տարիների գումարային ցուցանիշը:**
2023-ին՝ 216.9 ԳՎտ, ընդհանուր՝ 609.5 ԳՎտ, ԱՄՆ-ում ընդհանուր բոլոր տարիների ցուցանիշը՝ 179 ԳՎտ

Կողմնակի ազդեցություն

Զնայած բոլոր հաջողություններին և հեռանկարներին, չինական վերականգնվող էներգիան որոշակի դժվարությունների է բախվում: Վերջին ժամանակներում ակտիվ զարգացման պատճառով ոլորտին սպառնում է գերարտադրություն: Օրինակ՝ երկրում արտադրվող արևային էներգիայի սարքավորումների ծավալները կրկնակի գերազանցում են դրաներին պահանջարկը: Իր հերթին, այդ արտադրանքի արտահանումը բարդանում է, քանի որ արտասահմանյան գործընկերներն ավելի ու ավելի հաճախ են սահմանափակում չինական էներգետիկ սարքավորումների մատակարարումը: Այս ամենի պատասխանը ոլորտում Զինաստանի ռազմավարական առաջնահերթությունների փոփոխումն է՝ արտահանման փոխարեն կենտրոնանալով ներքին շուկայի զարգացման վրա: 🇺🇸



Երկարաժամկետ ներդրում՝ երաշխավորված եկամտով

Բարձր եկամտաբերություն՝ մինչև 4,302 %
եվրոյով և մինչև 7,194 % ԱՄՆ դոլարով

Առավելություններ՝

- ✔ Բարձր տոկոսադրույք գործարքներից՝ մինչև 4,302 %
եվրոյով և մինչև 7,194 % ԱՄՆ դոլարով,
- ✔ Ցածր մուտքի շեմ, արագ բացման գործընթաց,
- ✔ Միջնորդավճարի բացակայություն:



[ffin.am/saving/
long-term](https://ffin.am/saving/long-term)

Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից,
լիցենզիա՝ ՆԸ 0021, գործում է Freedom Broker ապրանքանշանի ներքո:
Մանրամասները՝ ffin.am,
հեռ. +37412252252



**FREEDOM
BROKER**

Զարգացում անիվների վրա



Դմիտրի Պոզդնյակով
Freedom Finance Global-ի
վերլուծաբան

Չինաստանն ինչպես է ղեկավարում համաշխարհային ավտոշուկան

Նույնիսկ կես դար առաջ Չինաստանը գործնականում չէր արտադրում մարդատար մեքենաներ: Բայց 2004-ին տեղական ավտոարդյունաբերությունն արդեն մրցում էր Գերմանիայի հետ՝ երրորդ տեղի համար: 2024-ին երկիրն ուներ աշխարհի առաջատար ավտոարտադրողի կարգավիճակ: Այսօր այն մրցում է Ճապոնիայի ու Գերմանիայի հետ՝ խոշորագույն արտահանողի կոչման համար: Բացի այդ, Չինաստանն առաջատարն է այս ոլորտի ամենախոստումնալից և արագ զարգացող հատվածում՝ էլեկտրամեքենաների արտադրության մեջ:

Ճանապարհի դեպի ինքը քեզ

Ավտոարդյունաբերությունը կազմում է Չինաստանի ՀՆԱ-ի մոտ 10 %-ը և երկրի արդյունաբերական աճի հիմնական շարժիչ ուժերից է: Այս ոլորտի ակտիվ զարգացումը սկսվել է 1979-ին՝ օտարերկրյա ներդրումներով համատեղ ձեռնարկությունների (ՀՁ) մասին օրենքի ընդունումից հետո: Հաշվի առնելով տեղական շուկայի չափը և այդ ժամանակ աշխատուժի էժան լինելը՝ օտարերկրացիներն ավելի քան շահագրգռված էին համագործակցությամբ: Եվ ի հայտ եկան FAW-Volkswagen-ը, Changan Suzuki-ն, Shanghai Volkswagen-ը, Dongfeng Citroën-ը: Կարգավորող նոր բազայի ներդրման ժամկետները հաշվի առնելով՝ ՉԺՀ-ում մեքենաների զանգվածային արտադրությունը սկսվեց 1990-ից հետո: Այդ տասնամյակի վերջին արտասահմանյան մեքենաների բոլոր պահեստամասերի կեսից ավելին արտադրվել է Չինաստանում: 2000-ականները նշանավորվեցին ոլորտի հետագա ազատականացմամբ՝ Չինաստանում բիզնեսով զբաղվել ցանկացող արտասահմանյան ավտոարտադրողների համար: Նրանց հնարավորություն տրվեց բացել դիլերային ցանցեր: Մեքենաների ներմուծման սակագներն ու քվոտաները նույնպես նվազեցվեցին: Սակայն Չինաստանն ավելի հեռուն գնաց: 21-րդ դարի առաջին տասնամյակի վերջին ռազմավարական հետաքրքրությունը տեղափոխվեց մրցունակ մեքենաներ արտադրելու վրա:

Էլեկտրաշաս

Չինական ավտոընկերությունները հաջորդ մի քանի տարիները նվիրեցին իրենց ինքնության զարգացմանը: Շեշտը դրվեց էլեկտրամեքենաների արտադրության վրա: 2009-ից ի վեր պետությունը լայնածավալ սուբսիդիաներ է տրամադրում էլեկտրական և հիբրիդային մեքենաներ արտադրող ընկերություններին: Սա աստիճանաբար կրճատել է ներքին

այրման շարժիչներով մեքենաների քանակը, ինչը հանգեցրել է մթնոլորտ վնասակար արտանետումների նվազմանը և խիտ բնակեցված քաղաքներում շրջակա միջավայրի բարելավմանը: Այս մոտեցումն ապացուցել է իր արդյունավետությունը. շուկայում հայտնվել են միմիայն էլեկտրամեքենաների արտադրության մեջ մասնագիտացած խաղացողներ:


Չինաստանը շարունակում է էներգիայի նոր աղբյուրներով մեքենա արտադրողներին աջակցել օդի աղտոտվածությունը, նավթի ներմուծումից կախվածությունը նվազեցնելու և սեփական բարձր տեխնոլոգիական արդյունաբերություններ ստեղծելու ծրագրերով: Բացի այդ, պետությունը ֆինանսավորում է լիցքավորման կայանների կառուցումը և խրախուսում էլեկտրամեքենաների մարտկոցների արդիականացումը: Կառավարությունը նաև ներդրումներ է կատարում էկոլոգիապես մաքուր մեքենաների պահանջարկի խթանման գործում: 2010-ից ի վեր այն տրամադրել է մինչև 60 հազար յուան (8.2 հազար դոլար) սուբսիդիաներ՝ տեղական արտադրության լիովին էլեկտրական մեքենայի յուրաքանչյուր գնման համար: Մինչև 2023 թ. այս պրակտիկան փոխարինվել է 20 հազար յուանի (2.7 հազար դոլար) միանվագ վճարով՝ ՆԱՇ՝ մեքենան էլեկտրամեքենայով փոխարինելու համար: Բացի այդ, էլեկտրամեքենա գնողն ազատվում է մինչև 30,000 յուան (4100 դոլար) հարկից:

Չինաստանում կա էլեկտրամեքենա արտադրող 100-ից ավելի ընկերություն, սակայն ոլորտը խիստ կենտրոնացած է. առաջատար **10 ընկերությունների** մասնաբաժինն այս ոլորտում **գերազանցում է 75 %-ը, առաջատար 20-ինն** էլ կազմում է 90 %-ից ավելին:

Ավտոէլեկտրաֆիկացիայի հաջողությունները

Չինաստանը դարձել է էլեկտրամեքենաների ամենամեծ շուկան աշխարհում. 2023-ին դրանց վաճառքն այստեղ կազմել է համաշխարհային ցուցանիշի մոտ 60 %-ը: Չինաստանի ավտոարտադրողների ասոցիացիայի տվյալով՝ 2020-ի հունվարից մինչև 2024-ի դեկտեմբերն այս ապրանքների վաճառքը 34 հազարից աճել է մինչև 973 հազար միավոր (+4684 %), հիբրիդներինն էլ՝ 13 հազարից մինչև 622 հազար (+4684 %): Միջին գնային մակարդակից բարձր էլեկտրամեքենաների հատվածում գերակշռում են երիտասարդ ընկերություններ:

Քանի մեքենա է արտադրում Չինաստանը



Աղբյուրներ՝ International Organization of Motor Vehicle Manufacturers (OICA), China Association of Automobile Manufacturers (CAAM)

որը, որոնք մասնագիտանում են միմիայն էկոլոգիապես մաքուր մեքենաներ արտադրելու մեջ: Այստեղ հիմնական խաղացողներն են «մեծ եռյակի» անդամները՝ Nio (NIO)-ն, XPeng (XPENG)-ը և Li Auto (LI)-ն, որոնք մրցում են Tesla-ի չինական ստորաբաժանման հետ (TSLA): Նրանք գիտեն ինչ հակադրել ամերիկյան առաջատարին: Nio-ն և XPeng-ն արագ ընդլայնում են իրենց մոդելային շարքը՝ նոր ապրանքանիշեր ստեղծելով շուկայի տարբեր հատվածների համար: Անցած տարվա վերջին Nio-ն ներկայացրեց ընտանեկան էլեկտրամեքենան՝ ONVO-ն, 2025-ի առաջին կեսին էլ նոր շարք թողարկեց Firefly ապրանքանիշի ներքո: Ընկերությունն ակտիվ ընդլայնում է իր աշխարհագրական ներկայությունը և գրավում Մերձավոր Արևելքի շուկան: XPeng-ը թողարկել է MONA էլեկտրամեքենաներ, որոնք նախատեսված են երիտասարդների համար:

Ավելի բյուջետային էլեկտրամեքենաներ հիմնականում առաջարկում են չինական ավտոարդյունաբերության առաջատարների մասնագիտացած EV-ստորաբաժանումները՝ BYD, GAC և Geely Automobile ընկերությունները: Այսպիսով, BYD-ն անցյալ տարվա դեկտեմբերին վաճառել է 509 հազարից ավելի էլեկտրական և հիբրիդային մեքենա, որը կազմել է այլընտրանքային էներգիայի աղբյուրներ օգտագործող մեքենաների ընդհանուր վաճառքի ծավալի 1/3-ից ավելին:

BYD-ի առաջատար դիրքն ապահովվում է բարձր ուղղահայաց ինտեգրմամբ՝ մարտկոցների համար հումքի մշակումից մինչև պատրաստի մեքենաներ, նաև ենթաբրենդային ռազմավարությամբ: Արտադրանքը վաճառվում է BYD, նաև Denza, Leopard, Yangwang ապրանքանիշերով: Էլեկտրամեքենաների հատվածում առաջընթացին մասամբ նպաստել է բջջային հեռախոսների համար անցած դարավերջին լիթիում-իոնային մարտկոցներ արտադրելու փորձը: Այժմ ավտոհսկան զանգվածաբար օգտագործում է LFP տիպի մարտկոցներ, որոնք նախկինում համարվում էին անհուսալի: Ներքին շուկան նվաճելով BYD-ն ընդլայնում է արտահանումն այլ երկրներ: Ընկերության արտադրանքն արդեն հայտնի է Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, նրա ներկայությունն աճում է Հնդկաստանում:

Geely Automobile-ը տիրապետում է Polestar, Smart, Zeekr և Radar ապրանքանիշերին, իրավունքներ ունի Volvo ապրանքանիշի նկատմամբ: Ընկերության էլեկտրամեքենաները լայնորեն ներկայացված են համաշխարհային շուկաներում, և 2024-ին ընկերությունը Լյու Յորքի ֆոնդային բորսայում իրականացրեց իր ZEEKR Intelligent Technology (ZK) պրեմիում ստորաբաժանման IPO-ն: Արտահանման աճը կարելի է բացատրել արտասահմանյան մեքենաների համեմատ չինական մեքենաների մրցունակ գներով և տեխնիկական հարուստ հագեցմամբ:

Ապագային դեմ հանդիման


Չինական ավտոհեղափոխությունը հանգեցրեց բարձր մրցակցության, որը տանում է դեպի գնային պատերազմի: Սրանից շահում են սպառողները, քանի որ արտադրողները ստիպված են իջեցնել գները: Էլեկտրամեքենաների հատվածում մրցակցությունը հանգեցրել է վարորդին օժանդակող լուծումների ներդրման և ինքնավար վարորդական համակարգերի սահմանափակման: Հնարավոր է, որ ավտոմոբիլային զարգացման ոլորտում ՉԺՀ քայլերն ուղղված լինեն հենց այս տեխնոլոգիայի զարգացմանը: Երկրում արտադրված որոշ պրեմիում էլեկտրամեքենաներ արդեն հագեցած են ավտոպիլոտ աշխատող քաղաքային վարորդական համակարգերով: ԱՄՆ-ում Tesla-ն մշակում և ներդնում է նման լուծումներ: Այսպիսի մեքենաներն ինքնավար են, բայց որոշակի իրավիճակներում դեռ պետք է վարորդի անհապաղ միջամտությունը: Ինքնավար տրանսպորտի շուկան կարող է նոր «մարտադաշտ» դառնալ ավտոարտադրողների և միջազգային տեխնոլոգիական կորպորացիաների համար: Baidu-ն (BIDU) և Alphabet-ը (GOOGL) հաջողությունների են հասել ավտոպիլոտի ֆունկցիայի փորձարկման գործում: Չինական ինտերնետային հսկան իր Apollo Go ստորաբաժանման միջոցով միայն 2023-ի հուլիս-սեպտեմբերին ներքին շուկայում գրանցել է 988 հազարից ավելի ռոբոտ-տաքսի ուղևորություն: Apollo RT6 մոդելի գինը չի հասնում 30 հազար դոլարի (ՉԺՀ-ում էլեկտրամեքենայի միջին գինը), մինչդեռ դրանով ուղևորությունն արդեն իսկ ավելի էժան է, քան սովորական տաքսունը:

Xiaomi-ն նույնպես ուժերն է փորձում ավտոմոբիլային ոլորտում: 2024-ին սկսել է SU7 դեբյուտային էլեկտրամեքենայի մատակարարումները և արդեն ընդլայնել է իր արտադրությունը՝ հատելով 100 հազար միավորի շեմն ու երկրում վաճառքի ծավալով զբաղեցնելով 15-րդ տեղը:

ՉԺՀ ավտոարդյունաբերության առաջընթացը կապված է որոշակի ռիսկերի հետ: Չինաստանից արտահանման արագ աճը սպառնում է այլ երկրներում ներմուծման տուրքերի սահմանմամբ կամ բարձրացմամբ: Սա հղի է գերարտադրության ձգնաժամով և վաճառքի ծավալի կրճատմամբ: Դրա հետևանքը կլինի ավտոարտադրողների ֆինանսական ցուցանիշների վատթարացումը: Եվ չնայած հանրային ու մասնավոր շահերի միջև հավասարակշռություն պահպանելու առումով իշխանության մոտեցումն ապացուցել է իր արդյունավետությունը երկրի ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման գործում, դժվար է ասել՝ Չինաստանը կկարողանա՞ առաջիկա տասնամյակներում պահպանել առաջատար դիրք ավտոմոբիլային համաշխարհային շուկայում: 🇨🇳

** Electric vehicles - էլեկտրամեքենաներ

Հիբրիդային և էլ. մեքենաների խոշորագույն արտադրողները Չինաստանում




*Մասնաբաժինը շուկայում



Աղբյուրը՝ China Passenger Car Association

Էլեկտրամեքենաների մարտկոցներ արտադրող խոշորագույն ընկերությունները



**Մասնաբաժինը շուկայում Աղբյուրներ՝ International Energy Agency (IEA); China Association of Automobile Manufacturers; CPCA; CnEVPost



Իլյա Զուբկով
Freedom Finance Global-ի
ավագ վերլուծաբան

Կենսական ոլորտ

Ինչով է հետաքրքիր ՉԺՀ կենսատեխնոլոգիական հատվածը

Չինաստանում նորարարական դեղորայքի արդյունաբերությունը զարգացման վաղ փուլում է, և այլ ոլորտների համեմատ երկրի ՀՆԱ-ում այս ոլորտի մասնաբաժինը դեռ փոքր է: Առավել խոստումնալից են համարվում գենետիկ ինժեներիայի և կենսատեխնոլոգիայի նվաճումները, որոնք օգտագործվում են ուռուցքաբանության, փոխապատվաստման և իմունոլոգիայի մեջ:

Զափման միավորներ

ՉԺՀ կենսատեխնոլոգիայի ոլորտի եկամուտը 2023-ին կազմել է \$74.1 միլիարդ, տարեկան միջին աճի տեմպը (CAGR) 2018-ից ի վեր հասել է 10.4 %-ի. այս գնահատականն են տվել Grand View Research-ի փորձագետները: Երկիրը տիրում է նորարարական դեղամիջոցների համաշխարհային շուկայի ավելի քան 23 %-ին: 2023-ին այստեղ հաստատվել է 89 նոր դեղամիջոց, և դա մոտավորապես 7 անգամ ավելի շատ է, քան 2018-ին: Վերջին տասնամյակում կենսադեղագործական արտադրանքի ոլորտում հետազոտությունների և զարգացման (R&D) ծախսերը տասնյակ միլիոններից աճել են մինչև տասնյակ միլիարդավոր դոլարներ:

Նորարարության շարժիչ ուժեր

Չինաստանը դարձել է ցողունաբջջային և գենետիկական տեխնոլոգիաների համաշխարհային առաջատարը՝ հաջողությամբ մշակելով CAR-T թերապիան, որն օգտագործվում է ուռուցքաբանական և իմունային հիվանդությունների դեմ: 2023-ին այս ոլորտում երկիրը գրանցել է 300-ից ավելի կլինիկական փորձարկում:

Արդյունաբերության առաջատարներն են Legend Biotech-ը (LEGN) և Innovent Biologics-ը, որոնց մշակումները պահանջարկ ունեն

չարկ ունեն արտասահմանում: CAR-T մեթոդների ստեղծման տեղայնացումը զգալի չափով նվազեցնում է բուժման արժեքը: ԱՄՆ-ում այն կազմում է \$0.5-1 միլիոն, իսկ Չինաստանում՝ \$55-350 հազար:

Չինական կենսատեխնոլոգիական ընկերությունների գործունեության խոստումնալից մեկ այլ ոլորտ է ուռուցքաբանական և հազվագյուտ հիվանդությունների դեմ օգտագործվող mRNA տեխնոլոգիան: Abogen Biosciences-ը և Walvax Biotechnology-ն նշանակալի նվաճումներ են գրանցել այս ոլորտում:

Երկիրը զգալի հաջողություններ ունի CRISPR տեխնոլոգիաների միջոցով գեների խմբագրման գործում՝ մշակելով հեմոֆիլիայի և քաղցկեղի որոշ տեսակների դեմ տարբեր տեսակի թերապիաներ: Նմանատիպ բուժման 30+ մեթոդներ կլինիկական փորձարկումների տարբեր փուլերում էին 2023-ին: Շարունակվում է Արհեստական բանականության (ԱԲ) գործիքների ակտիվ ինտեգրումը կենսատեխնոլոգիային: Ըստ կանխատեսումների՝ Չինաստանում դեղերի հայտնաբերման և հետազոտությունների համար ԱԲ ծառայությունների շուկան մինչև 2028 թ. կկազմի մոտ \$810 միլիոն՝ տարեկան 34 % աճի տեմպով:

Լուրջ ներուժ

Grand View Research-ի փորձագետների կարծիքով՝ մինչև 2030 թ. չինական կենսատեխնոլոգիական ընկերությունների եկամուտն առնվազն կենսապատկվի՝ հասնելով \$262 միլիարդի, տարեկան միջին աճի տեմպն էլ գրեթե կկրկնապատկվի հաջորդ հինգ տարիներին՝ հասնելով 19.8 %-ի: Եթե սրան գումարվի նաև կառավարության աջակցության ավելացումը, ապա կարող ենք ասել, որ այս ոլորտը ներդրողների համար ունի կապիտալի երկարաժամկետ աճի լուրջ պոտենցիալ:

Չինական էմիտենտներն ու ETF-ները կենսատեխնոլոգիաների ոլորտում



Չինական ուրբանիստիկա

Ինչ ապագա ունի անշարժ գույքի խոշորագույն շուկան



Ռոման Լուկյանչիկով
Freedom Finance Global-ի վերլուծաբան

Չինաստանում քաղաքների և ենթակառուցվածքների շեշտակի զարգացման տնտեսական հետևանքները հակասական են ընկալվում: Ի՞նչ հեռանկարներ ունի երկրի քաղաքաշինական հատվածը, և արժի՞ ներդրումներ կատարել այս սեկտորի ընկերություններում:

Երկաթբետոնե թվեր

Անշարժ գույքի ոլորտը կարևոր նշանակություն ունի Չինաստանի համար: Այն ընդգրկում է տնտեսության բազմաթիվ հատվածներ՝ մետալուրգիայից և շինանյութերի արտադրությունից մինչև զարգացում և անշարժ գույքի բիզնես: ԱՄՅ տվյալով՝ ոլորտի մասնաբաժինը Չինաստանի ՀՆԱ-ում կազմում է 31 %, դրա ծավալը 2023-ին կազմել է \$60 տրիլիոն: Հարակից ոլորտների ձեռնարկությունները պատասխանատու են երկրի աշխատատեղերի մոտ 10 %-ի համար: Այս ոլորտն ապահովում է Չինաստանի մարզերի բյուջեների եկամուտների 30-40 %-ը: Այն գոյանում է հողերի վաճառքի արդյունքում կառուցապատողներից գանձվող հարկերից և անշարժ գույքի գործարքներից ստացվող այլ վճարներից: Հաշվի առնելով ոլորտի ծավալը՝ որևէ անկայունություն լուրջ ռիսկեր է հարուցում ամբողջ տնտեսության համար: Սա երաշխավորում է կառավարության որոշակի աջակցությունը, եթե առաջանում են խնդիրներ, որոնք վերջին տարիներին միայն ավելացել են:

Ի՞նչ խնդիրների մասին է խոսքը

Չինաստանում քաղաքների զարգացման և բնակարանային շինարարության պետական ռազմավարությունը տարիներ շարունակ խթանել է անշարժ գույքի պահանջարկը և աջակցել տնտե-

սական աճին: 2010-2023 թթ. երկրի քաղաքային բնակչությունն աճել է ավելի քան 200 միլիոնով: Քաղաքաշինության բարձր տեմպերը և տարածաշրջանների, հիմնականում մեգապոլիսների և ափամերձ տարածքների անհավասար զարգացումը հանգեցրել են նոր բնակարանների պահանջարկի կտրուկ աճի և ստեղծել շուկայում փուչիկի ձևավորման նախադրյալներ:

Չնայած ոլորտի գերաժի վերահսկողության անընդհատ խստացմանը, 2020-ին Չինաստանի խոշոր քաղաքներում բնակարանի միջին գինն արդեն գերազանցել է բնակիչների մեծ մասի 40 տարվա եկամուտի շեմը: ՉԺՀ-ում այս հարաբերակցությունը զգալիորեն ավելի բարձր էր, քան մյուս երկրների մեգապոլիսներում:


Քանի՞ տարվա եկամուտը թույլ կտա տուն գնել*, 2020



Միջուրը՝ Numbco

Չինաստանի անշարժ գույքի շուկայի առանձնահատկությունը դարձել է նախնական վաճառքի մոդելը: Ըստ այդմ, բնակարանները ձեռք են բերվում նախագծման փուլում: Այս պայմաններում շատ կառուցապատողներ, շահույթի հետևից ընկնելով, ֆինանսավորել են նախագծեր՝ ներգրավելով մեծ ծավալի փոխառություններ: Սա հանգեցրել է նրանց պարտքի արագ աճի՝ ՉԺՀ ֆինանսական համակարգին սպառնալով կառուցապատողների գանգվածային անվճարունակությամբ: Այս ռիսկերը մեղմելու համար 2020-ից ի վեր պետությունը վարում է «երեք կարմիր գծի» քաղաքականությունը: Այն սահմանափակում է նոր վարկերի տրամադրումը կառուցապատողներին, եթե նրանք գերազանցել են իշխանության սահմանած պարտքի բեռի սահմանաչափը: Սակայն, երբ այս մեխանիզմն ընդունվեց, ոլորտի 30 խոշորագույն խաղացողների կեսն այլևս չէր կարող բավարարել այս չափանիշներից առնվազն մեկը: Բացի այդ, Չինաստանում կորոնավիրուսի երկարաժամկետ սահմանափակումները զգալիորեն թուլացրել են քաղաքացիների գնողունակությունը: Կառուցապատողների վաճառքը կտրուկ նվազել է: Եկամուտների անկման պատճառով նրանցից շատերը

Չինաստանում անշարժ գույքի վաճառքը, տրիլիոն յուան 18.2



Ստորոգյալներ՝ National Bureau of Statistics of China, Bloomberg

* Աշխարհի խոշոր քաղաքներում տան միջին գին և տարեկան միջին եկամուտի հարաբերակցությունը

չեն կարողացել մարել շինարարության համար վերցրած վարկերը: Նոր վարկերի միջոցով պարտքերի վերաֆինանսավորումն անհնար է դարձել նույն «երեք կարմիր գծի» հատման պատճառով: Սա հանգեցրել է շինարարական ընկերությունների շրջանում իրացման ճգնաժամի և վճարումների ուշացման:

Իրական խնդիրներ

Չինաստանի անշարժ գույքի շուկայի ճգնաժամը լայն ուշադրություն գրավեց վաճառքի ծավալով երկրի երկրորդ խոշորագույն կառուցապատող China Evergrande-ի սնանկացումից հետո: Ընկերությունն ակտիվորեն օգտագործեց ագրեսիվ վարկավորման մոդելն իր բիզնեսն ընդլայնելու համար և կուտակեց \$300+ միլիարդի պարտք: Ավելի խիստ կարգավորումները և Չինաստանում անշարժ գույքի պահանջարկի նվազումը վատթարացրին կառուցապատողի անկայուն վիճակը: 2021-ի վերջին China Evergrande-ը չկարողացավ կատարել իր պարտավորությունները վարկատուների նկատմամբ, կասեցրեց հազարավոր նախագծերի շինարարությունը, ինչն ազդեց բնակարանների միլիոնավոր գնորդների վրա: Պետությունը միջամտեց սոցիալական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար, և 2024-ի հունվարին հրամայեց լուծարել China Evergrande-ը:

Նմանատիպ խնդիրների բախվեց նաև 2023-ի դրությամբ ոլորտի առաջատար Country Garden-ը: Երկար ժամանակ ֆինանսապես կայուն համարվող ընկերությունը նույնպես տուժեց շուկայի անկման և անկայուն պարտքի բեռի պատճառով: Մինչև պարտատուների անվճարունակության մասին հայտարարելը, նրա ընդհանուր պարտքը գերազանցել էր \$200 միլիարդը: Իրավիճակը լուծելու համար Country Garden-ը ակտիվներ վաճառեց, պարտքերը վերակառուցեց ու նույնիսկ աջակցության խնդրանքով դիմեց կառավարությանը, սակայն ընկերության ապագան այդքանից հետո էլ մնում է անորոշ:


Ելք կա՞

Այնուամենայնիվ, չինական ոչ բոլոր կառուցապատողներն են բախվում ոլորտի համար վերջին տարիներին բնորոշ դժվարություններին: Պետական աջակցություն ստացող Poly Developments-ը կամ China Resources Land-ը ֆինանսավորման հասանելիության և եկամտի բազմազան աղբյուրների շնորհիվ ուժեղ դիմադրողականություն են ցուցաբերել, թեև նրանց բաժնետոմսերն այսօր կրկնակի էժան են 2021-ից: Պատճառը երկրում անշարժ գույքի գների երկարատև անկումն է:

Այնուամենայնիվ, ոլորտի հեռանկարը մշուշոտ է: 2023-ից ի վեր իշխանությունը միջոցներ է ձեռնարկում այն կայունացնելու և աջակցություն ցուցաբերելու համար: Պահանջարկը խթանելու նպատակով նվազեցնում է հիփոթեքային տոկոսադրույքը, դրանց համար նախավճարի պահանջները, վերացնում խոշոր քաղաքներում երկրորդական շուկայի տների գնման սահմանափակումները: Կառուցապատողների տրամադրվում են արտոնյալ վարկեր՝ նախագծերն ավարտելու համար, ստեղծվել են հատուկ օգնության ֆոնդեր, ի հայտ է եկել պարտքերի վերակառուցման հնարավորություն:

Սակայն հակաճգնաժամային միջոցառումները չափազանց դանդաղ են ընդունվում, պետությունը դժկամորեն է մեծ միջոցներ հատկացնում այդ նպատակների համար, հատկացումներն էլ հազիվ մեղմում են բացասական հետևանքները, սակայն լիովին չեն լուծում խնդիրը: Սա վկայում է ոչ միայն վա-

Չինաստանի խոշորագույն 70 քաղաքներում տների միջին գնի փոփոխությունը



ճառքի, այլև գների անկումը, ինչն արագացել է 2024-ին: Կարճաժամկետ հեռանկարում շուկայի վերականգնումը կախված կլինի կառուցապատողների՝ պարտքի բեռը նվազեցնելու և սպառողների վստահությունը բարձրացնելու կարողությունից, նաև իշխանության՝ 2025-ին ազգային տնտեսության ընդհանուր աճը խթանելու ցանկությունից:

Ջեռահար լույսեր

Քաղաքային զարգացման նորարարական մոտեցումները կարող են չինական անշարժ գույքի արդյունաբերության համար դրական շարժիչ ուժ դառնալ առաջիկա 10-20 տարիներին: 30 միլիոն բնակչությամբ Չունցինը, ժամանակակից ենթակառուցվածքները համատեղում է առաջադեմ տեխնոլոգիաների և կայուն ճարտարապետության զարգացման մեգաթրագրերի հետ: Քաղաքային իշխանությունն ակտիվ խթանում է խելացի տան հայեցակարգը՝ էներգախնայողության և ավտոմատացման համակարգերի ինտեգրմամբ, խրախուսում է շրջակա միջավայրն անվտանգ դարձնելու ձգտումը, աջակցում է ինտեգրված տրանսպորտային ենթակառուցվածքների ստեղծմանը: Խոստումնալից օրինակ է Մեծ ծոցը, որտեղ մշակվում են մեգապոլիսները ճեպընթաց երկաթուղային ցանցով կապելու նախագծեր, ներդրվում են էներգաարդյունավետ շինտեխնոլոգիաներ: Շենչժենը ներդրում է ինտելեկտուալ երթևեկությամբ և ենթակառուցվածքների կառավարմամբ խելացի քաղաքի հայեցակարգը:

Ժամանակի ընթացքում սա թույլ կտա գնորդներին առաջարկել ավելի ժամանակակից բնակարաններ և հարմարավետ միջավայր՝ մեծամասնության համար ընդունելի գներով, ինչը կբարձրացնի պահանջարկը և, համապատասխանաբար, վաճառքի ցուցանիշը:

ԶԺՅ անշարժ գույքի շուկան փոփոխությունների շեմին է: Զարգացման նկատմամբ հավասարակշռված մոտեցումը, նորարարությանն աջակցելը և ռաջիոնալ կարգավորումները կապահովեն ոլորտի կայուն աճը և կկանխեն ճգնաժամերը: Իհարկե, Չինաստանի այս ոլորտում ներդրողները դեռ պետք է զգույշ լինեն, իրականացնեն թողարկողների մանրակրկիտ վերլուծություն և պատրաստ լինեն բարձր ռիսկերի: Այնուամենայնիվ, չնայած դժվարություններին, այստեղ ներուժը հսկայական է, և սա կառուցապատողների բաժնետոմսերում երկարաժամկետ ներդրումների հնարավորություններ է բացում: 📈

Ավտոմեքենաշինություն

Էլ. առևտուր

Զբոսաշրջություն

Տեղեկատվական ինտերնետ-ռեսուրսներ

Էլեկտրոնային խաղեր և մուլտիմեդիա

Անշարժ գույք

Կենսատեխնոլոգիաներ

NE Holdings (BEKE)
\$26.5 մլրդ *

Li Auto (LI)
\$28.6 մլրդ

JD.com (JD)
\$65 մլրդ

NetEase (NTES)
\$61.5 մլրդ

XPeng (XPEV)
\$19.8 մլրդ

Alibaba Group (BABA)
\$318.7 մլրդ

PDD Holdings (PDD)
\$156.4 մլրդ

Trip.com Group (TCOM)
\$377 մլրդ

Չինական թոփ-10 ընկերություններն ԱՄՆ բորսաներում

*Կապիտալիզացիան 2025-ի մարտի սկզբին

BeiGene (ONC)
\$30 մլրդ

Baidu (BIDU)
\$30.1 մլրդ

\$830 մլրդ

ԱՄՆ բորսաներում
ցուցակված
չինական 265
ընկերությունների
շուկայական
ընդհանուր
կապիտալիզացիան
2025

Թոփ-5 չինական ETF-ները

ըստ ակտիվների ծավալի

FXI iShares
Larg-Cap China
Խոշորագույն ընկերություններ

\$7.3 մլրդ.

MCHI iShares
China MSCI
Լայն շուկա

\$5.5 մլրդ.

KWEB KraneShares
China Internet
Ինտերնետ ընկերություններ

\$5.4 մլրդ.

ASHR Xtrackers
CSI 300 China
300 փոփոխային բաժնետոմսեր

\$2.8 մլրդ.

CQQQ Invesco
China tech
Տեխնոլոգիական ոլորտ

\$0.7 մլրդ.

+26.6%

FXI-ը 2024-իս
դարձավ
ԱՄՆ շուկայում
չինական ETF-ների
շրջանում **աճի տեմպի**
բացարձակ ռեկորդակիր

«ԶԺՅ-ն կյանքի կկոչի «Արտադրված է Չինաստանում 2025» կարգախոսը, կդառնա նորարարությունների ոլորտի առաջատար»:



Տնտեսագիտության դոկտոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ժամանակակից Չինաստանի ուսումնասիրության կենտրոնի գլխավոր գիտաշխատող Անդրեյ Օստրովսկին՝ Չինաստանի աշխարհաքաղաքական հեռանկարի մասին

Լուսանկարը՝ Անդրեյ Օստրովսկու անձնական արխիվից

— Չինաստանից բոլոր ներմուծումների վրա 20 % մաքսատուրք սահմանելու վերաբերյալ Դոնալդ Թրամփի վերջին որոշումը ցնցել է շուկան: Պեկինն ինչպե՞ս կարձագանքի:

— ԶԺՅ-ն ունի բավականին կոշտ արձագանքի տարբերակ: Ունենալով, ըստ էության, մենաշնորհային դիրք հազվագյուտ մետաղների, մասնավորապես՝ լանթանիդների՝ շուկայում (համաշխարհային շուկայի մոտ 85 %-ը), Պեկինը կարող է դադարեցնել մատակարարումները Միացյալ Նահանգներ, ինչը բարձր տեխնոլոգիական արտադրանքի ամերիկյան արտադրողներին հարված կհասցնի ոչ միայն ՏՏ, այլև ռազմարդյունաբերական ոլորտում: Նման միջոցառումներ են ներդրվել Ճապոնիայի նկատմամբ մի քանի տարի շարունակ, ինչի հետևանքով ճապոնական տնտեսությունը հսկայական վնասներ է կրել և ստիպված է եղել տեղի տալ Չինաստանի հետ ծագած վեճում:

— Ո՞վ կհաղթի ԱՄՆ-ԶԺՅ առևտրային պատերազմում:

— Հստակ պատասխան չկա: Ոմանք կարծում են, թե ԱՄՆ-ն ավելի լավ դիրք ունի, քանի որ չինական տնտեսությունն ավելի շատ է կախված արտաքին հարաբերություններից: Այնուամենայնիվ, Չինաստանը հայտարարել է դեպի ներքին շուկա վերակողմնորոշվելու ծրագրերի մասին: Շուկա, որն աշխարհում ամենամեծն է: Պահանջարկի ճիշտ խթանման դեպքում սա սպառման հսկայական ներուժ կստեղծի:

— Այդ վերակողմնորոշումը երկար կտևի: ԶԺՅ-ն կկարողանա՞ ԱՄՆ արտահանման անկումը փոխարինել այլ երկրների հետ առևտրի աճով:

— ԶԺՅ-ն իրականացնում է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը: Սա կարող է ոչ միայն ապահովել արտաքին առևտրի լրացուցիչ աճ՝ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի, Արևմտյան Աֆրիկայի, Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրների հետ, այլև զգալիորեն խթանել երկրի տնտեսապես հետամնաց այն ներքին շրջանների զարգացումը, որտեղով անցնում են նախագծի երթուղիները: Նույնիսկ Պանամայի ջրանցքի վրա ԱՄՆ լիակատար վերահսկողության վերադարձը դժվար թե փոխի իրավիճակը: Չինաստանն արդեն սկսել է այլընտրանքային նախագիծ՝ Նիկարագուայի միջոցով Խաղաղ օվկիանոսից Ատլանտյան օվկիանոս ջրանցք կառուցելու համար:

— Համաշխարհային տնտեսության վրա իրավիճակն ինչպե՞ս կազդի կարճաժամկետ հեռանկարում:

— Սկզբում համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպը, իհարկե,

կնվազի: Սակայն ապագայում, Չինաստանի և «Մեկ գոտի» ծրագրի գործընկերների, նաև ԱՄՆ, Ասիայի ու Լատինական Ամերիկայի այլ երկրների միջև առևտրի ծավալների աճի պատճառով սա կարող է փոխհատուցվել:

— ԶԺՅ ֆոնդային շուկան կտուժի՞ հակամարտությունից:

— Ես չեմ խոսի չինական ֆոնդային շուկայի վրա ամերիկյան ֆոնդային շուկայի հիմնարար ազդեցության մասին: Դրանց կապը հիմնականում որոշվում է փոխադարձ հոգեբանական ազդեցությամբ, ինչը պայմանավորված է Չինաստանի գնած ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի հսկայական ծավալով, արտաքին առևտրի հաշվեկշռի կառուցվածքով, որից երևում է, որ ԱՄՆ-ն զգալի կախվածություն ունի չինական ներմուծումներից:

— Ուղղակի կախվածություն չունենալը Պեկինի քաղաքականությունն է:

— ԶԺՅ ֆինանսական համակարգը հիմնականում փակ է: Սա ներառում է յուրանի սահմանափակ փոխարկելիություն, կապիտալի փակ շարժ և օտարերկրյա պորտֆելային ներդրումների ներհոսքի սահմանափակումներ: Ամերիկյան ընկերությունների բաժնետոմսերը և պարտատոմսերը չեն շրջանառվում Չինաստանում: Սակայն, շատ չինական թողարկողների արժեթղթեր ցուցակված են Միացյալ Նահանգներում: Այս ամենը որոշում է ամերիկյան ֆոնդային շուկայի շատ ավելի մեծ կախվածությունը չինականից, քան հակառակը:

— ՏՏ ոլորտում իրավիճակն ավելի սուր է: Չինական DeepSeek ներդրումային ցանցի թողարկումը հանգեցրեց ԱՄՆ բաժնետոմսերի փլուզման:

— Հունվարին Թրամփն իր հեռուստատեսությամբ հայտարարեց \$500 միլիարդի ներդրումներով Stargate ԱԲ նոր ծրագրի մասին: Պարզվեց, որ ԶԺՅ-ում զգալիորեն պակաս գումարով DeepSeek ընկերությունն արդեն մշակել է ԱԲ զարգացման ծրագիր, որը գերազանցում է ChatGPT-ին: Միևնույն ժամանակ, 2025-2030 թթ. համար Չինաստանն այս հատվածի զարգացմանը հատկացնում է \$137 միլիարդ, և, DeepSeek-ի արհեստական բանականությունից բացի, Պեկինն ունի նաև Alibaba-ի բավականին հզոր Qwon 2.5 արհեստական բանականությունը: Սա հաստատում է Չինաստանի որոշակի գերազանցությունը ԱԲ ոլորտում: Ըստ երևույթին, ԶԺՅ-ն ոչ միայն կիրականացնի Made in China 2025 կարգախոսը, այլև համաշխարհային առաջատար կդառնա նորարարությունների ոլորտում: 🇺🇸

«ԶԺՅ-ն տեխնոլոգիապես շատ զարգացած է, բայց հիշում ենք պատմական դժվարին ժամանակաշրջանը»:



Չինաստանում ռազմավարության և բանակցությունների խորհրդատու, Սկոլկովոյի կառավարման դպրոցի գործարար պրակտիկայի հրավիրված պրոֆեսոր Եգոր Պերներզևը՝ Չինաստանի հետ գործընկերային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունների մասին

Լուսանկարը՝ Եգոր Պերներզևի անձնական արխիվից

— ԶԺՅ տեխնոլոգիական առաջընթացը փոխել է մեր պատկերացումներն այս երկրի մասին: Խոսքն այլևս տեխնոլոգիաների սովորական պատճենահանման մասին չէ...

— Բոլորն ամեն ինչ պատճենում են: Չինաստանի շնորհիվ ամբողջ աշխարհն ասաց՝ մենք ուզում ենք այնտեղ արտադրել, այնտեղ ներդրումներ կատարել: Չինական արդյունաբերությունը կազմում է աշխարհի 30, բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ 40 %-ը: Այս բարդ մեքենան պետք չէ դիտարկել զուտ այն գաղափարի համատեքստում, թե չինացիները պատճենել են ամեն ինչ: Սա պատմականորեն շատ զարգացած երկիր է տեխնոլոգիայի առումով: Մենք պարզապես Չինաստանը հիշում ենք շատ դժվարին պատմական ժամանակաշրջանում: Բայց դրանից առաջ... վառող, կողմնացույց, թուղթ, տպագրություն, թղթադրամ, փոստ. այս ամենը գալիս է Չինաստանից:

— Ի՞նչն է ավելի շահավետ օտարերկրացիների համար այս պահին՝ առևտուրը Չինաստանի հե՛տ, թե՛ բիզնեսի զարգացումն այդ երկրում:

— Երբ խոսվում է առևտրի մասին, որպես կանոն, նկատի է առնվում, որ չինական ընկերությունները ՌԴ-ում ապրանք են գնում ու վաճառում իրենց ներքին շուկայում: Այսինքն՝ սա երկրի ներսում վաճառքի մասին է: Վա՛տ է: Ոչ: Բայց պետք չէ սա շփոթել ապրանքն իրապես արտասահմանյան շուկա դուրս բերելու հետ:

— Չինաստանի ներսում վաճառքն ավելի՞ շահութաբեր է:

— Խնդիրը շուկան զգալն է: Եթե չինացիներն ինչ-որ բան են գնում, և իրենք են ներմուծում, նշանակում է, որ նրանք արդեն ունեն այդ շուկան, գիտեն ում և ինչպես վաճառել: Կարո՞ղ ենք ինքներս գործադրել այս մեխանիզմը: Այո: Մեզ դա պե՛տք է՝ ռազմավարական հարց է, կարողությունների, ռեսուրսների և շուկայի գնահատման հարց:

— Չինաստանում արտադրության ներուժ կա՞:

— Դրա մեջ տրամաբանություն կա, եթե ապրանքները նախատեսված են համաշխարհային շուկայի համար, և դրանք ակտիվորեն արտահանելու խնդիր կա: Արտադրելով Չինաստանում՝ ստանում ենք արտադրական ավելի ցածր ծախսեր, բաղադրիչների ավելի էժան բազա և բարձր տեխնոլոգիական արտադրության առավելություններ: 10 խոշորագույն նավահանգիստներից 7-ը Չինաստանում են: Բացի այդ, տեղացի աշխատողները գիտեն ինչպես հաջողությամբ վաճառել արտասահմանում և կատարյալ խոսում են տարբեր լեզուներով:

— Իմաստ ունի՞ ծառայությունների ոլորտում բիզնեսով զբաղվել Չինաստանում:

— Այո, ծառայությունների շուկան աճում է ավելի արագ, քան ապրանքներինը: Մասնավորապես՝ Դրոգստանից մի ձեռնարկատեր Չինաստանում բացել է էլիտար և շատ թանկ պարային դպրոցներ և բավականին հաջողակ է: Սպորտի ոլորտում էլ ներուժ կա: Բնակչության բարեկեցությունն աճում է, որոշ ուղղություններ Չինաստանում առայսօր թերզարգացած են: Օրինակ՝ հոկեյը, դահուկավազքը, զբոսաշրջությունը:

— Լեզվական արգելքն ինչպե՞ս է հաղթահարվում:

— Մի՛ վախեցեք վարձել չինացի տնօրենների և մասնագետների: Երբեք դեռ շատ թանկ չեն, բայց նրանց մակարդակն արդեն շատ բարձր է: Երբեք հաճախ անգլերեն ավելի լավ են խոսում, քան մենք: Եվ եթե ուզում եք սովորել չինարեն, իմացե՛ք, որ խոսակցականը շատ ավելի հեշտ է, քան գրավորը:

— Մտածողությա՞ն մասին ինչ կասեք: Օրինակ՝ ռուսական օդին լավ չի վաճառվում այնտեղ:

— Կառուցվածքային առումով չինական մանրածախ առևտուրը նման է համաշխարհայինին: Սակայն ավելի լավ է, որ չինացիները համաձայնության են գալիս միմյանց հետ: Օդին վաճառվում է երկրի հյուսիսի՝ Ռուսաստանի սահմաններին ավելի մոտ քաղաքների հյուրանոցներում, ռեստորաններում և սրճարաններում: Մշակութային առումով դժվար է օդին Չինաստանում դարձնել հաջողակ ապրանք: Երբեմն նրանք ասում են, որ դրա հոտը հիվանդանոց է հիշեցնում: Թանկ ու որակյալ ապրանքի համար արդյունավետ պատմություն է պետք: Երբ դա ունենանք, Չինաստանում օդին կվաճառենք բարձր գներով:

— Ի՞նչ խորհուրդ կտաք պորտֆելային ներդրողներին, որոնք առանց այս բոլոր նրբերանգների ուզում են գումար վաստակել չինական տնտեսական բումից:

— Ես ներդրումային խորհուրդներ չեմ տալիս: Բայց կարծում եմ, որ Ուորեն Բաֆեթի իրական արժեքի հայեցակարգը ճիշտ է: Ըստ դրա, ընկերությունը պետք է ունենա աշխատող բիզնես մոդել, այն առաջ տանելու կարողություններ, հիանալի թիմ և սպառման ակնհայտ շուկա: Դրանից հետո կարող եք փորձել գումար վաստակել՝ կատարելով որոշակի խաղաղույթ: Եթե ոչ՝ լավագույն տարբերակը ֆոնդային ինդեքսներում ներդրում կատարելն է: Ես հենց դա եմ անում՝ հասկանալով, որ Չինաստանը ընդհանուր առմամբ աճելու է ու բարդանալու: 🇨🇳

Խաղ յուանով

Չինական արժույթը միջազգային շուկայում կճնշի ԱՄՆ դոլարը



Ելենա Բեյակս
Ներդրումների խորհրդատու,
Freedom Finance Global

Վերջին տարիներին միջազգային հաշվարկներում կայուն աճում է յուանի մասնաբաժինը: Տարբեր երկրներ այն ներառում են իրենց ոսկեարժույթային պաշարներ: Սակայն Պեկինն իր արժույթի միջազգայնացումը խթանում է միայն իր ապրանքների առաջխաղացումը շուկայում ապահովելու համար անհրաժեշտ չափով՝ չվնասելով ազգային ինքնիշխանությանը և չմեծացնելով կախվածությունը զարգացած երկրներից:

Թարգմանության դժվարություններ

Ժամանակակից յուանը 1948-ի վերջին սկսեց թողարկել այդ ժամանակ հիմնադրված Չինաստանի ժողովրդական բանկը (ՉԺԲ), որը նորաստեղծ ՉԺՅ ազգային դրամական շուկան կարգավորողն էր: «Յուան» նշանակում է «շրջան» կամ «կլոր մետաղադրամ»: Այս անունով արծաթե փողերը Չինաստանում հայտնվել են 1835-ին, և մինչև 1935-ը դրա փոխարժեքը կապված էր արծաթի արժեքի հետ: Այնուհետև տեղի ունեցավ դրամավարկային բարեփոխում, ինչի արդյունքում սկսեցին տպվել թղթային փողեր: 1948-ին նոր յուանը կապված էր ոսկու գների հետ, 1994-ին այն ամուր կապված էր ԱՄՆ դոլարի հետ, 2005-ից ի վեր Չինաստանը յուանի արժեքը հաշվարկում է 13 երկրների արժույթների զամբյուղի հարաբերությամբ: Պաշտոնապես չինական փողը կոչվում է renminbi (RMB), որը հայերեն տառադարձությամբ հնչում է «ժենմինբի» և չինարեն նշանակում է «ժողովրդական փող»: RMB թղթադրամները թողարկվում են 1, 5, 10, 20, 50 և 100 յուան անվանական արժեքներով: Այսինքն՝ յուանը չափման միավոր է, բայց համաշխարհային շուկայում այս բառն օգտագործվում է որպես renminbi-ի հոմանիշ: ISO 4217-ում՝ արժույթների եռատառ դասակարգման միջազգային ստանդարտում, դրամական այս միավորը նշվում է ոչ թե RMB, այլ CNY: Միջազգային կանոնների համաձայն, առաջին երկու տառերը երկրի կոդն են (CN՝ Չինաստան), երրորդը՝ արժույթի անվանման առաջին տառը (Y՝ Յուան):

Բայց սա ամենը չէ: Չինական յուանն ունի երկու տարբերակ: Մեկը՝ onshore-ային, որը հայտնի է միջազգային CNY նշումով և օգտագործվում է մայրցամաքային Չինաստանի ներսում հաշվարկների համար, մյուսը՝ offshore-ային, որը CNH անունով 2009-ից շրջանառության մեջ է Յոնկոնգում, Մակաոյում և երկրի մի քանի այլ շրջաններում:

Յուանի երկրորդ «մոդիֆիկացիայի» ի հայտ գալով էլ սկսվեց միջազգային շուկաներում չինական արժույթով հաշվարկների տարածման պատմությունը, որը շարունակվում է մինչև այսօր:

Դուրս գալով ջրի երես

2008-ի ճգնաժամը ցույց տվեց միջազգային ֆինանսական համակարգի անկայունությունը և ցնցեց ԱՄՆ դոլարի բացարձակ հուսալիության հանդեպ վստահությունը: Սա Չինաստանին դրդեց սկսել յուանի միջազգայնացման գործընթացը՝ տնտեսական և քաղաքական օգուտներ ստանալու համար: Ազգային արժույթի օգտագործումը միջազգային գործարքներում բարձրացնում է երկրի հեղինակությունը, հեշտացնում անդրսահմանային գործառնությունները և թույլ է տալիս ազդել օտարերկրյա գործընկերների վրա:

Միջազգայնացման առաջին քայլը Չինաստանի և Յոնկոնգի միջև յուանի առևտրի սահմանափակումների վերացումն էր 2009-ին: Դա ուղեկցվեց օֆշորային յուանի (CNH) ստեղծմամբ, որտեղ H տառը նշանակում էր Յոնկոնգ: 2010-ին Յոնկոնգի կենտրոնական բանկը և դրամաշրջանառության պետական մարմինը համաձայնության եկան քլիրինգի վերաբերյալ, և բորսայում հայտնվեց USD/CNH արժույթային զույգը: Այնուհետև օֆշորային շուկաները սկսեցին գործել Յրվ. Կորեայում, Սինգապուրում և Մեծ Բրիտանիայում:

Արժույթների հիմնական տարբերությունը շրջանառության աշխարհագրությունն է ու այլ արժույթների նկատմամբ փոխարժեքը: Ցամաքային յուանը շրջանառվում է միայն Չինաստանի ներսում, որից դուրս դառնում է օֆշորային: Չինական յուանի գինն ամեն օր սահմանում է Չինաստանի ժողովրդական բանկը՝ մինչև 2 % շեղումով: Այսպիսով, Չինաստանի կենտրոնական բանկը վերահսկում է փոխարժեքը՝ պահպանելով դրա կայունությունը, ինչը յուանը գրավիչ է դարձնում միջազգային գործընկերների համար, բայց միևնույն ժամանակ սահմանափակում է դրա փոխարկելիությունը:

Օֆշորային յուանի արժեքն ավելի անկայուն է, կախված է շուկայում առաջարկից և պահանջարկից, բայց շատ չի շեղվում ցամաքայինից: Ֆինանսական հաշվարկներում CNY-ից CNH և հակառակ փոխարկումները կատարվում են արժույթային զույգի ընթացիկ փոխարժեքով:

Նպատակներ և գործիքներ

Չնայած որոշակի ազատականացմանը, յուանի լիարժեք փոխարկելիությունը դեռ չինական կարգավորող մարմինների ծրագրերում չէ: Պեկինը պահպանողական է արտաքին քաղաքականության փոփոխության հարցերում, նրա նպատակն է հասնել ֆինանսական ինքնաբավության: Ջանքեր են գործարկվում երեք ոլորտներում:

✔ Ազգային արժույթի օգտագործման ընդլայնում համաշխարհային առևտրում և ներդրումներում, յուանով միջազգային հաշվարկների ենթակառուցվածքի ստեղծում և խթանում:

✔ Զարգացող երկրների հետ տնտեսական գործակցության խորացում:

✔ Յուանի դերի ընդլայնում հումքի գնագոյացման մեջ: Յուանով հաշվարկների ենթակառուցվածք ստեղծելու համար 2015-ին առաջարկվել է կիրառել CIPS (cross-border internet payment system-անդրասահմանային ինտերնետային վճարային համակարգ): Այն հայտնիությամբ դեռ չի կարող մրցել SWIFT-ի հետ, բայց այս համակարգն արդեն օգտագործում է 1600-ից ավելի ֆինանսական հաստատություն: Պահանջարկը մեծացնելու համար CIPS գործարքների արագությունը, արժեքը և անվտանգությունը պետք է համապատասխանեն իրենց արևմտյան մրցակցի մակարդակին:

2000-ականների վերջից Չինաստանը միջազգային գործընկերներին առաջարկում է առևտուր անել յուանով: Առաջընթացը հատկապես նկատելի է զարգացող երկրների հետ հաշվարկներում: Լավ գործիք են երկկողմ արժույթային սվոփի համաձայնագրերն այլ երկրների ԿԲ հետ: Առևտրային գործընկերներին սա թույլ է տալիս յուանի պակասի դեպքում էժամ վարկեր վերցնել՝ օգտագործելով իրենց ազգային արժույթը:

Այս սխեմայով հաշվարկները նվազեցնում են դոլարից կախվածությունը և արժույթային ռիսկերը: 30 երկիր (Ռուսաստան, Իրան, Վենեսուելա, Անգոլա, Նիգերիա) ՉԺՀ հետ նավթի առևտուր է անում յուանով: Արևմտյան պատժամիջոցների սահմանումից հետո ռուսական բանկերը միջազգային հաշվարկներում գրեթե ամբողջությամբ անցել են յուանի: Վճարումների դոլարային համակարգից ազգային արժույթներով հաշվարկների անցնելը Չինաստանը խթանում է նաև Շանհայի համագործակցության կազմակերպության միջոցով, որին Չինաստանից բացի անդամակցում են Ռուսաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Բնդկաստանը, Պակիստանը և Իրանը: Նաև BRICS-ի միջոցով (Բրազիլիա, Ռուսաստան, Բնդկաստան, Չինաստան, Զարավային Աֆրիկա, Եգիպտոս, Եթովպիա, Իրան և ԱՄԷ):

Արդյունքը գոհացուցիչ է

Օֆշորային յուանի ի հայտ գալուց երեք տարի անց չինական արժույթը զբաղեցրեց 13-րդ տեղը միջազգային վճարային հիմնական միավորների վարկանիշում՝ 0.74 % մասնաբաժնով: 2025-ին յուանը զբաղեցրեց չորրորդ տեղը. հունվարի դրությամբ դրա մասնաբաժինը կազմում էր 3.79 % կրկնապատկվելով վերջին 5 տարում:

Դեպի պահուստ

2016-ից ի վեր յուանը ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ճապոնական իենի և բրիտանական ֆունտի հետ ներառվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փոխառության հատուկ իրավունքների (SDR) զամբյուր: Փաստը, որ երկրներն իրենց ոսկեարժույթային պաշարները (GFR) պահում են այս կամ այլ արժույթով, նշանակում է ճանաչել դրա կարևորությունը միջազգային հաշվարկների և ներդրումների համար:


Այնուամենայնիվ, ՉԺՀ-ում լիարժեք փոխարկելիության բացակայության և կապիտալի շարժի վրա գործող վերահսկողության պատճառով տարբեր երկրների ոսկեարժույթային պաշարներում յուանի մասնաբաժինը մնում է շատ փոքր: Ըստ ԱՄՀ հաշվարկի՝ 2024-ի 3-րդ եռամսյակի վերջին այն ընդհանուր առմամբ կազմել է 2.17 %՝ համապատասխանաբար դոլարի և Եվրոյի 57.39 %-ի և 20.02 %-ի դիմաց:

Ի՞նչ սպասել

Հաճախ քննարկվում է, թե յուանը կարող է փոխարինել ԱՄՆ դոլարին: ՉԺՀ տնտեսությունը վաղուց աշխարհի խոշորագույններից է, ինչը ստեղծում է միջազգային շուկաներում իր արժույթի ազդեցության ուժեղացման պայմաններ: Փոխարկման խնդիրները և երկրում յուանի մուտքի ու ելքի սահմանափակումները նվազագույնի են հասցնում կանխատեսելի ապագայում յուանի՝ առաջատար դիրք գրավելու շանսը: Աշխարհաքաղաքական գործոնը զգալի ճնշում է գործադրում ներդրումներում և ոսկեարժույթային պաշարներում յուանը ներառելու գրավչության վրա: Ոսկեարժույթային պաշարներում ներառված ակտիվները պետք է լինեն հնարավորին չափ լիկվիդային և հուսալի, որպեսզի համապատասխանեն երկրի պարտքի կառուցվածքին, վճարային հաշվեկշռին և, իհարկե, լինեն եկամտաբեր: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը փետրվարի սկզբին չինական բոլոր ներմուծումների սակագները բարձրացրեց 10 %՝ առևտրային նոր պատերազմ սկսելով Չինաստանի դեմ: Մարտի 4-ից ներմուծման սակագները բարձրացվել են մինչև 20 %: Հետևանքը, ամենայն հավանականությամբ, կլինի չինական կարգավորող մարմինների պատասխանը, նաև յուանի աստիճանական թուլացումը դոլարի նկատմամբ: Այսուամենայնիվ, հնարավոր է, որ Չինաստանի նկատմամբ կոշտ դիրքորոշումը Թրամփի բանակցային քաղաքականության մի մասն է: Դրա արդյունքը, ինչպես և սպասվում էր, կլինի Պեկինի՝ զիջումներ անելու ավելի մեծ պատրաստակամությունը և ԱՄՆ-ի համար ավելի բարենպաստ պայմանների ամրագրումը վերջնական համաձայնագրում:

Դժվար է կանխատեսել, թե որքան կտևի բանակցային գործընթացը, և ինչպիսին կլինեն գործարքի պայմանները, բայց յուանի ապագան կախված կլինի դրանցից: 🇨🇳

Առաջատար արժույթների մասնաբաժինը միջազգային վճարումներում 2025-ի հունվարին



Աղբյուրը՝ SWIFT

Մեկ բորսան լավ է, երկու բորսան՝ ավելի լավ



Ալեմ Բեկտեմիրով

Freedom Finance Global-ի վերլուծաբան

ՉԺՀ թողարկողներն ինչո՞ւ են ընտրում
զուգահեռ ցուցակման մոտեցումը

NASDAQ-ում IPO-ի ժամանակ, 2024-ին, ներդրողներից հավաքվել է \$17.2 միլիարդ, Նյու Յորքի ֆոնդային բորսայում (NYSE)՝ \$15.6 միլիարդ, Յոնկոնգում՝ \$10.7 միլիարդ: ԱՄՆ-ում ցուցակումը թողարկողին ապահովում է բաժնետերերի լայն բազայից օգտվելու հնարավորություն, բարձր իրացում և հեղինակություն: Այնուամենայնիվ, ՉԺՀ ընկերություններն ավելի ու ավելի հաճախ են ընտրում զուգահեռ ցուցակումը (սովորաբար Ամերիկայում և Հոնկոնգում), չնայած դա ենթադրում է լրացուցիչ ծախսեր: Եկեք հասկանաք, թե ինչու:

Ոչ առանց քաղաքականության

Կրկնակի ցուցակումը նորույթ չէ: Դրա ակնհայտ առավելություններն են նոր ներդրողների բազան, շուկայում տեսանելիության բարձրացումը և առևտրային գործունեության ավելի երկար տևողությունը (եթե բորսաները տարբեր ժամային գոտիներում են): Սակայն, ՉԺՀ-ից թողարկողների դեպքում առաջին պլանում են քաղաքական պատճառները:

2024-ին չինական 53 ընկերություն ԱՄՆ-ում իրականացրել է IPO և ներգրավել **\$1.8 միլիարդ**: Համեմատության համար՝ 2023-ին ամերիկյան շուկայում տեղաբաշխվել են չինական 34 էմփ-տենտներ՝ ներգրավելով **\$855 միլիոն**:

ԱՄՆ և Հոնկոնգի բորսաներում զուգահեռ ցուցակումները ժողովրդականություն սկսեցին ձեռք բերել ԱՄՆ-ում չինական ընկերությունների համար կանոնակարգերի խստացման ֆոնին: Ջրի երես դուրս եկան տվյալներ, որ չինական որոշ ընկերություններ կեղծել են իրենց հաշվետվությունները: Ի պատասխան՝ ԱՄՆ իշխանությունը 2021-ի վերջին ընդունեց «Օտարերկրյա կորպորացիաների հաշվետվողականության մասին» (HFCAA) օրենքը: Այն արտասահմանյան մասնակցությամբ հանրային ընկերություններին հարկադրում էր հետևել ցուցակվելու կամ ցուցակված լինելը պահպանելու հաշվետվողականության ավելի խիստ նորմերի: Դա ենթադրում էր, որ հաշվետվությունը պետք է հաստատի միայն ԱՄՆ-ում արտոնագրված աուդիտորը: Բացի այդ, դա նշանակում էր էմփտենտի ներքին շուկայում ստուգումների արդյունքների հասանելիություն. տվյալներ, որոնք նախկինում չէին բացահայտվում: Եվ Չինաստանից մոտ 80 ընկերություն,

նաև էլեկտրոնային առևտրի հսկա Alibaba-ն (BABA), բախվեցին ցուցակված մնալու խնդրին:

Սա զգալիորեն թուլացրեց չինական բիզնեսների շահագրգռությունը ԱՄՆ-ում ցուցակվելու նկատմամբ: 2022-ին Չինաստանից միայն վեց ընկերություն է IPO իրականացրել ԱՄՆ բորսաներում: Հավաքված միջոցների ծավալը կազմել է մոտ \$230 միլիոն: Մինչդեռ 2021-ին այդ ցուցանիշը \$12.85 միլիարդ էր:

Մի քանի ճակատով

ԱՄՆ կարգավորող մարմինները խստացնում են իրենց վերահսկողությունը չինական բիզնեսի նկատմամբ մի շարք ոլորտներում: 2021-ի հունվարից NYSE-ն, կառավարության որոշմամբ, արգելել է ԱՄՆ ներդրումները չինական զինված ուժերի հետ կապված ընկերություններում՝ ցուցակումից հանելով China Telecom-ը, China Mobile-ը և China Unicom-ը: 2021-ի մարտին նույն պատճառով ԱՄՆ-ում դադարեցվել է CNOOC Limited նավթագազային ընկերության բաժնետոմսերի առևտուրը: 2022-ին պետական ավիաընկերություններ China Eastern Airlines-ը և China Southern Airlines-ը կամավոր հետ են կանչել իրենց դեպոզիտար ստացականները Նյու Յորքի ֆոնդային բորսայից: Փոքր ընկերությունների համար, որոնք կապ չունեն չինական պետական ձեռնարկությունների հետ, շատ ավելի հեշտ է ցուցակվելը և ԱՄՆ ֆոնդային բորսաներում մնալը:

Alibaba-ն և նրա հետևորդները

Alibaba-ն 2014-ին առաջին անգամ ցուցակվեց ԱՄՆ շուկայում, 2019-ին այն երկրորդային ցուցակում ստացավ Հոնկոնգում: Այս որոշման պատճառները կապված էին շուկայի հետ: Մասնավորապես՝ ընկերությունը ձգտում էր ավելացնել այն տարածաշրջաններից ներդրողների թիվը, որտեղ կուտակել էր հաճախորդային մեծ բազա: 2022-ին ընկերությունը Հոնկոնգի ֆոնդային բորսայում իր երկրորդային ցուցակումը փոխեց առաջնայինի: Եվ սա տեղի ունեցավ հիմնականում քաղաքական գործոնների ազդեցության տակ: Այս գործողությունները թողարկողին տալիս են Վաշինգտոնի և Պեկինի միջև լարված հարաբերությունների ռիսկերը մեղմելու ավելի շատ հնարավորություններ:

Alibaba-ին հաջորդեցին JD.com (JD), NetEase (NTES), Baidu (BIDU), Trip.com (TCOM), Li Auto (LI) և XPeng (XPEV) ընկերությունները, նաև առցանց շուկան՝ ձգտելով պակասեցնել քաղաքական ռիսկերը և ընդլայնել ներդրողների բազան Ասիայում: Ընկերությունների շարժառիթները հիմնականում աշխարհաքաղաքական էին, սակայն ներքին պատճառները ևս որոշակի

դեր ունեցան Յոնկոնգի ֆոնդային բորսայի գրավչության բարձրացման գործում: Այստեղ մուտք գործելու պայմանները 2018-ից մեղմացվել են: Նախկինում հարթակը պահանջում էր, որ ցուցակման դիմորդի բիզնեսը շահութաբեր լիներ վերջին երեք տարիներին: Սա փակում էր տեղաբաշխման հեռանկարը, օրինակ, կենսատեխնոլոգիական ընկերությունների համար, և նրանց ստիպում էր ներդրողներ փնտրել ԱՄՆ-ում: Այս մոտեցումը փոխվեց և ավելացրեց շահագրգիռ թողարկողներին: Stock Connect ծրագիրը պարզեցրեց մայրցամաքային Չինաստանից ներդրողների մուտքը Յոնկոնգի ֆոնդային բորսա:

Չինաստանի ռեկորդներն Ամերիկայում

- ✔ **Alibaba**-ն 2014-ի սեպտեմբերին ԱՄՆ-ում անցկացրեց չինական ընկերության ամենամեծ IPO-ն՝ ստանալով \$21.8 միլիարդ: Առևտրի մեկնարկից հետո առաջին ամսում իր բաժնետոմսերի աճը գերազանցեց 45 %-ը, և վեց տարվա ընթացքում գնանշումները հասան պատմական առավելագույնի՝ \$319.32 (+370 % տեղաբաշխման գնի նկատմամբ):
- ✔ **JD.com**-ը ԱՄՆ բորսաներում տեղաբաշխման ծավալի առումով չինական երկրորդ խոշորագույն ընկերությունն է՝ ներգրավելով \$1.8 միլիարդ: IPO-ից հետո առաջին ամսում բաժնետոմսերն աճել են ավելի քան 35 %: \$108.29 պատմական առավելագույնը սահմանվել է 7 տարում՝ 470 % աճի արդյունքում:
- ✔ **Baidu**-ն ԱՄՆ ֆոնդային բորսայում հայտնվեց 2005-ի օգոստոսին և 4.04 միլիոն ամերիկյան դեպոզիտար ստացականների տեղաբաշխմամբ ներգրավեց \$109.1 միլիոն: Սակայն առաջին իսկ օրը գնանշումները 4.5 անգամ աճեցին (\$27-\$122.54):
- ✔ **Pinduoduo**-ն (PDD) ԱՄՆ շուկա մտավ 2018-ի հուլիսին՝ ներդրողներից ստանալով \$1.6 միլիարդ՝ մեկ բաժնետոմսի համար \$16 գնով: Առաջին ամսում բաժնետոմսերը թանկացան 72 %, \$212.6 պատմական առավելագույնին հասան 2021-ի փետրվարին (տեղաբաշխման գինն աճեց 1229 %):
- ✔ **Li Auto**-ն 2020-ի հուլիսին իրականացրեց IPO և ներգրավեց \$1.1 միլիարդ դոլար՝ մեկ բաժնետոմսի համար \$11.5 գնով: Սկզբում բաժնետոմսերն առանձնապես չոգևորեցին ներդրողներին, բայց չորս ամիս անց դրանց գինը բարձրացավ +300 %:

Էպիկական ձախողում

Չինացի թողարկողների շատ հաջող տեղաբաշխումներից բացի կային նաև խնդրահարույցները: Տխուր հետևանքներով IPO-ի վառ օրինակ էր Luckin Coffee-ի տեղաբաշխումը 2019-ի մայիսին, որի ընթացքում NASDAQ-ում ներգրավվեց \$562 միլիոն: 2020-ի հունվարին ընկերության բաժնետոմսերը հասան առավելագույնը \$50-ի՝ 558 % եռամսյակային վաճառքի տպավորիչ աճի մասին հաղորդագրությունների ֆոնին: 2020-ի ապրիլին թողարկողը խոստովանեց, որ իր ֆինանսական հաշվետվությունները կեղծել է ավելի քան \$300 միլիոնով: Չինական կարգավորող մարմինները նաև հայտնաբերեցին մոտ \$140 միլիոնի կասկածելի վճարումներ Luckin Coffee-ի հիմնադիրների հետ աղոտ կապեր ունեցողներին: Եվ ընկերության բաժնետոմսերի գինը գահավիժեց 75 %: Դրանք ցուցակումից հանվեցին 2020-ի հունիսին, թողարկողն էլ տուգանվեց \$180 միլիոն՝ ներդրողներին խաբելու համար:

Վատ ավարտով սերիալ

Չատուկ հիշատակման է արժանի ԱՄՆ շուկա մուտք գործելու նպատակով չինական ընկերությունների հակադարձ

միաձուլման մոտեցումը, որը հայտնի է նաև հակադարձ IPO անունով: Այն իրականացնելու համար մասնավոր ընկերությունը ձեռք է բերում հանրային ընկերություն և ցուցակվում է առանց բարդ ու երկար ստուգումների: 2008-ի ֆինանսական ճգնաժամից անմիջապես հետո ՉԺՅ մի քանի հարյուր ընկերություն այս ձևով մտավ ԱՄՆ ֆոնդային բորսաներ: ՉԺՅ կառավարությունն Արժեթղթերի և Բորսաների հանձնաժողովին (SEC) արգելեց վերահսկել նրանց: Կարգավորման բացակայությունը հանգեցրեց բազմաթիվ չարաշահումների, որոնք քողարկվեցին աուդիտորների «Մեծ քառյակի» չինական դուստր ձեռնարկությունների դրական կարծիքներով:


Նման դեպքերը 2009-2012 թթ. ներդրողներին պատճառեցին \$500 միլիարդի կորուստ: Հակադարձ IPO մեխանիզմն օգտագործող չինական ընկերություններն ունեցան հեղինակության և փողի կորստ: Հաջորդ տարիներին SEC-ը ԱՄՆ շուկայից հեռացրեց հարյուրավոր նման խաղացողներին: Բորսա մուտք գործելու չափանիշները խստացվեցին, և 2012-ի դեկտեմբերին դատական հայցեր հարուցվեցին աշխարհի առաջատար աուդիտորների չինական դուստր ձեռնարկությունների դեմ: 2015-ի փետրվարին հայցերի կարգավորման ընթացքում նրանք տուգանվեցին \$500,000 և պարտավորվեցին շտկել իրենց գործունեության մեթոդները:


Որքան՝ հեռու, այնքան՝ շատ

Այսպիսով, Ամերիկայում բաժնետոմսեր տեղաբաշխող չինական ընկերությունների գործունեությունը հիմնականում կախված է աշխարհաքաղաքականությունից: Հնարավոր ռիսկերը Չինաստանի գործարարներին դրոլում են որպես արտասահմանյան ցուցակման նախընտրելի կենտրոն ընտրել Յոնկոնգը: Այս ընտրությունը խթանվում է նաև ԱՄՆ-ում տոկոսադրույքների նվազեցման հեռանկարով և տնտեսության զարգացմանն ուղղված չինական պետական աջակցությամբ: Սա թույլ է տալիս կանխատեսել, որ Յոնկոնգի ֆոնդային բորսայում IPO-ների միջոցով հավաքված միջոցների ծավալը կաճի տարեկան հասնելով մինչև \$18.2 միլիարդի:

2024-ին Հոնկոնգում իրականացվել է 69 IPO, ընկերությունները ներգրավել են մոտ **\$11.2 մլրդ**: 2023-ին կատարվել է 70 տեղաբաշխում՝ ներգրավելով **\$5.9 մլրդ**:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ չինական որոշ ընկերություններ, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիական հատվածում գործողները, կշարունակեն տեղաբաշխումներ իրականացնել ԱՄՆ շուկայում: Երանք ընտրությունը հիմնավորվում է տեղական ներդրումային համայնքի բարձր հետաքրքրությամբ նորարարական բիզնես մոդելների նկատմամբ, նաև ԱՄՆ որպես միջազգային շուկայի երկարատև հեղինակությամբ և արդար արժեքի ճշգրիտ գնահատման համար համեմատելի ընկերությունների առկայությամբ: 🇺🇸





Ճանաչի՛ր ներդրումները հեշտ, հասանելի և գործնական ձևով

Մասնակցի՛ր անվճար օնլայն դասընթացին
և բացահայտիր թե՛

- ✓ Ինչպե՞ս է աշխատում ֆոնդային շուկան,
- ✓ Ի՞նչ դեր ունեն բրոքերները,
- ✓ Ինչպե՞ս են ազդում փոխարժեքն ու գնաճը քո ներդրումների վրա:

Ձևավորիր քո առաջին ներդրումային պորտֆելը գիտակցված մոտեցմամբ:



[ffin.am/academy/
say-hello-to-investments](https://ffin.am/academy/say-hello-to-investments)



Ռիսկերի լաբիրինթոս

Չինական շուկայի վտանգավոր հնարավորությունները



Յուրի Իչկիտիձե
Freedom Finance Global-ի
մակրոտնտեսագետ

Չինաստանի տնտեսությունն աշխարհում ամենաարագ զարգացողներից է: Երկիրը յուրացնում է նոր տեխնոլոգիաները, նրա ֆոնդային շուկան ընդլայնվում է և բացվում օտարերկրյա ներդրողների համար: Տեղական ընկերությունների բաժնետոմսերն ավելի շատ են մտնում համաշխարհային ինդեքսներ: Երկարաժամկետ աճի վրա հույս դնողների համար չինական ընկերությունների բաժնետոմսերի միջոցով ներդրումների դիվերսիֆիկացիան արդարացված քայլ է: Սակայն այդ ակտիվները կապված են լուրջ ռիսկերի հետ: Սա կարևոր է հաշվի առնել կորուստները նվազագույնի հասցնելու և ներդրումային պորտֆելի կայուն աճն ապահովելու համար:

Այլևս էժան է

Վերջին տասնամյակներում չինական տնտեսության արագ զարգացման պատճառով ցածր բազան է, մասնավորապես՝ բնակչի համեստ եկամուտը: Էժան աշխատուժը Չինաստան ուղղակի օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հիմնական գործոններից էր: Սակայն ժամանակի ընթացքում տեղական աշխատուժը զգալի թանկացել է, և այժմ կապիտալ ներդրողների համար ավելի շահավետ է ներդրումներ կատարել Ասիայի պակաս զարգացած երկրներում:

Խնդիրը լուծելու համար Չինաստանը նախատեսում է փոխել իր զարգացման մոդելը և նորարարական արտադրանք հավաքող «գործարանից» վերածվել դրանք մշակողի: Սակայն ամեն տարի ավելի դժվար է դառնում նոր գիտելիք և նորագույն տեխնոլոգիաներ ձեռք բերելը: Չինաստանում նորարարությունների մեծ մասն ապահովել են արևմտյան ընկերությունները, բայց այժմ նրանք կրճատում են իրենց ներդրումները:

Արտահանման սպառնալիք

Վիճակը չի բարելավում նաև որպես աճի հիմնական շարժիչ ուժ արտահանման վրա Պեկինի շեշտադրումը: Չինաստանի առևտրային խոշորագույն գործընկերներն արևմտյան երկրներն են (տե՛ս էջ 8-9): Նմանատիպ կենտրոնացումը քաղաքական կամ տնտեսական անհամաձայնությունների դեպքում կարող է սպառնալ չինական տնտեսության կայունությանը: Չնայած իշխանությունը ռազմավարական որոշում է կայացրել վերակողմնորոշվել և կենտրոնանալ ներքին պահանջարկի վրա, վերափոխվելու համար ժամանակ է պետք, ուստի երկար կպահպանվի երկրի կախվածությունն արտահանումից: Չինաստանի համար ամենաանմիջական ռիսկն առևտրային նոր պատերազմն է ԱՄՆ-ի դեմ: Նախագահի

պաշտոնը ստանձնելուց գրեթե անմիջապես հետո Դոնալդ Թրամփը սկսեց ներմուծման մաքսատուրքեր սահմանել Չինաստանի դեմ: 2018-2020 թթ. ԱՄՆ-ՉԺՀ առևտրային առաջին պատերազմի հետևանքով չինական ապրանքների մատակարարումներն ԱՄՆ, որոնք նվազել էին ներմուծման մաքսատուրքերի բարձրացման պատճառով, ավելի կտրուկ նվազեցին և շարունակում են մնալ ավելի ցածր մակարդակի վրա, քան հակամարտությունից առաջ:

Անարդյունավետ ներդրումներ


Լուրջ ռիսկ է ներքին ներդրումների ցածր արդյունավետությունը, ինչը պայմանավորված է տնտեսության մեջ պետական հատվածի բարձր մասնաբաժնով: Չինական պետական ձեռնարկությունները տիրապետում են երկրի ակտիվների 39 %-ը, սակայն դրանց եկամտաբերությունն անհամեմատ ցածր է. նման ընկերությունները, ըստ Համաշխարհային բանկի, ապահովում են ՀՆԱ-ի միայն 23-28 %-ը:

Չինաստանի ներքին ներդրումների զգալի մասն ուղղվել է շինարարությանը՝ հասնելով մինչև «ապագայի համար» դատարկ քաղաքների կառուցում, և անշարժ գույքի շուկայի ճգնաժամից հետո այժմ բարդ վիճակում է (այս մասին ավելի մանրամասն խոսել ենք 24-25 էջերում):

Աձող պարտք

Ներքին ներդրումներն անարդյունավետ են: Դրանք իրականացվում են նաև փոխառությունների ավելացման հաշվին, ինչը նվազեցնում է երկրի ներդրումային գրավչությունը: ՉԺՀ պետական պարտքը ավելի ցածր է, քան զարգացած երկրներինը, սակայն արագ աճում է: 2010-ին այն կազմում էր ՀՆԱ-ի 34, 2024-ին՝ 84 %-ը, ԱՄՆ կանխատեսումով 2027-ին կհասնի 100 %-ի: Իրավիճակն ավելի բարդ է չինական կորպորատիվ հատվածում: 2024-ի կեսին ոչ ֆինանսական ընկերությունների պարտքը ՀՆԱ-ի համեմատ հասել է 292 %-ի՝ գերազանցելով ԱՄՆ ու ԵՄ ցուցանիշները:

Բիզնեսի պարտքը ՀՆԱ-ի համեմատ



Աղբյուրը՝ Միջազգային հաշվարկների բանկ (2024)

Ժողովրդագրական դժվարություններ

Երկարաժամկետ խնդիր է ժողովրդագրական ցուցանիշների բացասական դինամիկան, որը բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: 2022-ին, 60 տարվա ընթացքում առաջին անգամ ՉԺՀ բնակչությունը նվազել է նախորդ տարվա համեմատ, և Հնդկաստանը դարձել է ամենախիտ բնակեցված երկիրը: Այս միտումը շարունակվել է հետագա տարիներին: 2023-ի վերջին ՉԺՀ բնակիչների թիվը նվազել է 2.08 միլիոնով՝ հասնելով 1.409 միլիարդի, 2024-ին՝ 1.39 միլիոնով՝ հասնելով 1.408 միլիարդի:

Բացասական միտումը մասամբ հրահրել է մինչև 2015 թ. իրականացված «Մեկ ընտանիք՝ մեկ երեխա» քաղաքականությունը, սակայն հիմնական պատճառը, ինչպես զարգացած երկրներում, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումն է: Խնդիրը կարող էին լուծել միգրանտները, սակայն դրան խոչընդոտում են խոշոր քաղաքներում գերբնակեցումը և տարածաշրջանների տնտեսական անհավասար զարգացումը:

Քաղաքական ռիսկեր

Դժվարությունները սրվում են չինական ղեկավարության ավտորիտար գործելակերպով: 1949-ից ի վեր երկրում իշխանությունը կենտրոնացած է Կոմկուսի ձեռքին, որն էլ կայացնում է տնտեսական, սոցիալական և արտաքին քաղաքականության ռազմավարության կարևոր որոշումները: Կառավարության և կուսակցության քննադատությունը լռեցվում է, գաղափարախոսական ճնշումը՝ սրվում, պետությունն ավելի ու ավելի է միջամտում քաղաքացիների անձնական կյանքին: Տնտեսական ազատ զարգացումը խրախուսելու փոխարեն այս ամենը կարող է հանգեցնել օրենսդրական և կարգավորող միջավայրի խստացմանն ու վերահսկողության ուժեղացմանը, և, որպես արդյունք, երկարաժամկետ ներդրողների վստահության անկմանն ու ՉԺՀ գրավչության նվազմանը:

Արտաքին քաղաքականության մեջ, զարգացած երկրների հետ հարաբերությունները բարելավելու փոխարեն, Չինաստանը հենվում է «հնքնաբավության» սկզբունքի վրա, ուժեղացնում վերահսկողությունը Հոնկոնգի նկատմամբ և ագրեսիվ հայտարարություններ անում Թայվանի վերաբերյալ: Ի պատասխան՝ միջազգային հանրությունը կարող է պատժամիջոցներ կիրառել, սահմանափակել առևտուրը և առաջացնել կապիտալի արտահոսք, ինչը մեծացնում է տնտեսական և քաղաքական անկայունության ռիսկերը: Սա բացասաբար կանդրադառնա չինական ընկերությունների բիզնեսի, նրանց շուկայական կապիտալիզացիայի և ներդրումների շահութաբերության վրա:

Համաշխարհային բանկը Չինաստանի կարգավորիչ միջավայրը գնահատում է բավականին ցածր՝ 5 միավորից **տալով 1.75:**

Կարգավորող անակնկալներ

Չինաստանի իշխանությունը հակված է անսպասելի փոխել առանձին ոլորտների կանոնները, ինչը հանգեցնում է նրանց բաժնետոմսերի արագ անկման: Օրինակ՝ 2020-ի վերջին Alibaba (BABA) խմբի հիմնադիր Ջեք Ման քննադատեց Չինաստանի ֆինանսական ղեկավարությանը, ինչը հանգեցրեց նրա ֆինթեք ստորաբաժանման (Ant Group) IPO-ի չեղարկմանը և ռեկորդային \$2.75 միլիարդի հակամենաշնորհային տու-

գանքի: Այս ֆոնին ընկերության բաժնետոմսերը հաջորդած մի քանի տարիներին 80 % անկում ապրեցին: Մեկ այլ օրինակ է դպրոցական կրկնուսույցի և վճարովի լրացուցիչ կրթության սահմանափակումը 2021-ին: Այս քայլերի պատճառով կրթության ոլորտի ընկերությունների մեծ մասի բաժնետոմսերը մեկ օրում 50-70 % անկում գրանցեցին ու մինչև օրս չեն վերականգնվել: Պետական վերահսկողության բարձր աստիճանը բնորոշ է նաև ֆոնդային բորսաների գործառնություններին. ամենահայտնի միջամտություններից մեկը տեղի է ունեցել 2015-ին, երբ Շանհայի և Շենչժենի բորսաներում չինական բաժնետոմսերի խոշոր անկման ժամանակ ներդրողներին արգելվեց զբաղեցնել կարճ դիրքեր:


Իրավական անորոշություն

ՉԺՀ-ում օտար ներդրողի համար կան իրավական ռիսկեր: Օրենքը նրանց արգելում է տիրապետել տեղական որևէ ընկերության, և այս «տաբուն» շրջանցելու համար ստեղծվել է VIE (Variable Interest Entity) կառույցը: Օֆշորային գոտում ստեղծվում է նոմինալ հոլդինգ, որտեղ արտասահմանյան ներդրողները բաժնետոմսեր են գնում: VIE-ն ստանձնում է ՉԺՀ-ում գործող ընկերության կառավարումը և ստանում շահույթ, բայց այդ ընկերության բաժնետիրական կապիտալի նկատմամբ որևէ իրավունք չունի: Օգտագործելով այս բացը, օպերացիոն ընկերությունները փորձել են VIE սեփականատերերին ձեռնունայն թողնել: Ամենահայտնի դեպքը Yahoo-ի հետ էր, որը 2011-ին կորցրեց իր բաժնեմասը Alipay-ում: Alibaba-ն վճարային համակարգի վերահսկողությունը փոխանցեց չինական անկախ նոր ընկերության, և Yahoo-ն պարզապես չկարողացավ կանխել դա, քանի որ VIE-ի սեփականությունը Alipay-ի կապիտալի նկատմամբ որևէ իրավունք չէր տալիս:

Թափանցիկության բացակայություն

Չինական ընկերությունները սահմանափակ տվյալներ են տրամադրում իրենց գործունեության մասին, ինչը դժվարացնում է նրանց ֆինանսական վիճակի վերլուծությունը: Բացի այդ, բիզնեսի մեծ մասը վերահսկում են պետությունը, հիմնադիրները կամ ընտանեկան խմբերը, ինչը կարող է հանգեցնել շահերի բախման: Տնօրենների խորհրդի անկատար կառուցվածքը (անկախության սկզբունքի անտեսումը) վտանգում է արտաքին բաժնետերերի շահերը: Տեղեկության սահմանափակ հասանելիությունը բարդացնում է ներդրողների համար տեղեկացված որոշումներ կայացնելը և մեծացնում կորուստների ռիսկը:

Շանտեր կան

Չինական ընկերությունների բաժնետոմսերում ներդրումներ կատարելու ռիսկերը, անշուշտ, անհնար է լիովին վերացնել: Այնուամենայնիվ, միանգամայն հնարավոր է բարձրացնել ներդրումային անվտանգության մակարդակը: Դրա համար հարկ է պորտֆելը դիվերսիֆիկացնել ըստ ոլորտների, ընտրել հուսալի ընկերություններ, վերահսկել դրանց հաշվետվությունները և հետևել ֆոնդային շուկայի միտումներին: Մտնելով Չինաստանի տնտեսություն՝ հարկ է ուսումնասիրել կարգավորիչ պայմանները, ուշադիր հետևել քաղաքական իրավիճակին: Անհրաժեշտ է նաև հասկանալ երկրում բիզնես վարելու առանձնահատկությունները: Ներդրումներ կատարելու հարցում ողջամիտ մոտեցումն այս դեպքում ոչ թե զուտ խորհուրդ է, այլ տվյալ շուկայի ներուժն օպտիմալ օգտագործելու պարտադիր պայման: 

Արևելք-Արևմուտք

ԱՄՆ-Չինաստան առևտրային հակամարտության հակիրճ պատմությունը



Ասար Արուս
Freedom Finance FC ֆինանսական վերլուծության բաժնի կրտսեր վերլուծաբան

Դոնալդ Թրամփի Սպիտակ տուն վերադարձով առևտրային նոր հակամարտություն է ծավալվում Չինաստանի հետ: Այս դիմակայությունն ի՞նչ հետևանքներ կունենա դրա կողմերի և համաշխարհային տնտեսության համար:

Խնդրի պատմությունը

Վերջին տասնամյակներում ԱՄՆ-ՉԺՀ առևտուրը համաշխարհային տնտեսության զարգացման ամենակարևոր գործոններից է: ԱՄՆ տվյալով՝ մինչև 2018 թ. ԱՄՆ-ՉԺՀ առևտրային շրջանառությունը (արտահանում և ներմուծում) գերազանցել է \$650 միլիարդը: Ամեն ինչ գլխիվայր շրջվեց 2018-ի հունվարի 23-ին, երբ նախագահ Թրամփը 30 % մաքսատուրք սահմանեց Չինաստանում արտադրված արևային վահանակների ներմուծման վրա: Հենց այս քայլով սկսվեց Պեկինի ու Վաշինգտոնի առևտրային պատերազմը:

Սպիտակ տան այս գործողությունների տնտեսական հետևանքները զգացվեցին շատ արագ: Պատժամիջոցներից առաջ ԱՄՆ ներմուծվող չինական ապրանքները գերազանցում էին \$500 միլիարդը, բայց 2019-2020 թթ. այս ցուցանիշը հասավ \$450-470 միլիարդի:

Rhodium Group-ի տվյալով՝ Թրամփի առաջին ժամկետում Չինաստանի ներդրումային առաջնահերթությունները ենթարկվեցին զգալի փոփոխությունների:

- ԱՄՆ ակտիվներում Չինաստանի ներդրումները 2016-ի ամենաբարձր ցուցանիշների համեմատ 2020-ին նվազեցին գրեթե չորս անգամ: \$10.9 միլիարդը դարձավ նվազագույն ցուցանիշը 2011-ի վերջից ի վեր:

- ԱՄՆ-ում չինական վենչուրային ներդրումները 2020-ին նվազեցին՝ հասնելով \$800 միլիոնի: Սա ամենացածր ցուցանիշն է 2014-ից ի վեր: Չինական ստարտափներում ամերիկյան ներդրումները նույնպես նվազեցին՝ հասնելով \$1.3 միլիարդի:

Վեճերի առիթը

Պեկինի հետ առևտրային հակամարտությունը սկսել է Դոնալդ Թրամփի վարչակազմը. դժգոհության պատճառներն են՝


- ✓ **Առևտրային անարդար գործելակերպը**, նաև չինական արտադրողների համար սուբսիդիաները և շուկայում ամերիկյան ընկերությունների սահմանափակումները:
- ✓ **Մտավոր սեփականության իրավունքների խախտումը**: ԱՄՆ-ն Չինաստանին բազմիցս մեղադրել է գործընկերներին տեխնոլոգիաների փոխանցման հարկադրելու, անօրինական պատճենահանման և կիբերլուծեսության մեջ:
- ✓ **Առևտրային դեֆիցիտը կրճատելու ցանկությունը**: Վաշինգտոնը դժգոհ է, որ արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունը Չինաստանի օգտին է:

Ընդհանուր առմամբ, քաղաքական դրդապատճառները եղել և մնում են Դոնալդ Թրամփի դիրքորոշումների անբաժանելի մասը: Նա ակտիվ և նպատակասլաց առաջ է մղում հակաչինական օրակարգը և շարունակում է դրան հետևել նախագահական իր նոր ժամկետում:



Ի՞նչն է փոխվում

Չինաստանից ներմուծման մաքսատուրքերի բարձրացումից ԱՄՆ-ը շահում է այն առումով, որ պաշտպանում է իր ազգային արդյունաբերությունը և ավելացնում ներքին



Չինաստանի հետ ԱՄՆ առևտրի վիճակագրությունը 2013-ի հունվարից մինչև 2024-ի սեպտեմբեր

արտադրությունը: Միևնույն ժամանակ, այս քայլերը հանգեցնում են ապրանքների թանկացման և պատասխան սահմանափակումների:

Չինաստանը կորցնում է իր արտաքին առևտրից ստացած եկամուտների մի մասը, բայց միևնույն ժամանակ մշակում է ներքին աջակցության ծրագրեր (հատկապես կիսահաղորդիչների ոլորտում) և ընդլայնում իր ապրանքների սպառման շուկաները:

Համաշխարհային տնտեսության համար այս դիմակայության սրումը նշանակում է աճի հետագա դանդաղում մատակարարման գլոբալ շղթաների խափանումներով և հանգեցնում է առևտրային նոր դաշինքների ձևավորման:

Կողմ ու դեմ

Երկու գերտերությունների հակամարտությունը հիմնականում ազդել է բարձր տեխնոլոգիական և նորարարական արդյունաբերությունների վրա:

ԱՄՆ-ն արգելել է ամերիկյան տեխնոլոգիաներ փոխանցել Huawei-ին, ZTE-ին և այլ ընկերությունների՝ դա բացատրելով կիբերանվտանգության ռիսկերով և իր առաջնահերթություններով: Ամերիկյան գերժամանակակից չիպերի մատակարարման սահմանափակումները Չինաստանին ստիպել են ինքնուրույն ստանալ անհրաժեշտ տեխնոլոգիաները կիսահաղորդիչների արդյունաբերության մեջ: ԱՄՆ-ից արտահանման ծավալների կրճատումը բացասաբար է անդրադարձել էլեկտրոնիկայի, սարքավորումների և թեթև արդյունաբերության ձեռնարկությունների արտադրողների եկամուտների վրա:

Ըստ ԲԲ տվյալի՝ առևտրային հակամարտության հետևանքով Չինաստանի ՀՆԱ-ի աճը 2019-ին դանդաղել է՝ գրանցելով նվազագույն ցուցանիշները վերջին տասնամյակում: Այս գործոնի բացասական հետևանքները մեղմելու համար Չինաստանի իշխանությունը հայաքցն ուղղել է այլ շուկաներ, և արտահանման հոսքերը դիվերսիֆիկացնում է դեպի Հարավարևելյան Ասիայում իր հարևանների, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների շուկաներ:

Անուղակի վնաս

Աշխարհի առաջատար տնտեսությունների համար լայնածավալ այսօրինակ իրադարձություններն ազդել են հետևյալ ոլորտների վրա.

- ✔ **Արժույթի տատանումներ:** Չինաստանի ժողովրդական բանկը ստիպված է ավելի հաճախ միջամտել դրամավարկային քաղաքականությանը կամ փոխել դրա պարամետրերը՝ յուանի փոխարժեքի կայունությունը պահպանելու համար:
 - ✔ **Արտասահմանյան ներդրումների ներգրավում:** Չինաստանը մնում է մեծ շուկա և ունի արտադրական մեծ հզորություններ, սակայն այս շուկայում ներդրումային որոշումներն ավելի ու ավելի շատ են ենթարկվում քաղաքական և պատժամիջոցային ռիսկերին:
 - ✔ **Պետական բանկերի դերը:** Պատժամիջոցների և առևտրային հակամարտությունների համատեքստում մեծանում է պետական խոշոր ֆինանսական հաստատությունների կարևորությունը: Նրանք տրամադրում են սուբսիդավորված վարկեր և աջակցում ռազմավարական ոլորտներին:
- ՀԲ-ն նշում է, որ առևտրային սահմանափակումները և ամերիկյան առաջատար տեխնոլոգիաները չինական բիզնեսներին փոխանցելու արգելքները կարճաժամկետ հեռանկարում ավելի կդանդաղեցնեն Չինաստանի ՀՆԱ-ի աճը: Միևնույն ժամանակ,

երկարաժամկետ հեռանկարում նույն գործոնները կխթանեն ներքին նորարարությունների զարգացումը, եթե պետությունը կարողանա արդյունավետորեն աջակցել ԳՀՓՆԱ-ին՝ և տեխնոլոգիական ստարտափներին:

Գեղեցիկ հեռաստան

Հակամարտության կողմերը պահպանում են առևտրային և ներդրումային սերտ կապեր, որոնք չեն կարող արագ խզվել առանց լուրջ կորուստների: Երկու երկրների ընկերությունները հետաքրքրված են խոշոր շուկաներով և տեխնոլոգիաներով, կանաչ էներգիայի և առողջապահության ոլորտում գործակցությամբ: Այնուամենայնիվ, կան ներմուծման սակագների բարձրացման և տեխնոլոգիական ավելի խիստ սահմանափակումների ռիսկեր, հատկապես կիսահաղորդիչների և հեռահաղորդակցության արդյունաբերություններում, նաև ԱԲ ոլորտի լուծումների վրա կենտրոնացած հատվածում:

Անբարենպաստ իրադարձությունների դեպքում սա կհանգեցնի զուգահեռ էկոհամակարգերի ձևավորման, կթուլացնի գլոբալ մատակարարման շղթաները և կդանդաղեցնի գլոբալ տնտեսության աճը: Սակայն լիակատար «ամուսնալուծության» սցենարը քիչ հավանական է, քանի որ Վաշինգտոնն ու Պեկինը հակամարտությունը չեն սրի: Այստեղ կարևոր դեր կարող են խաղալ ԵՄ-ն, Հարավարևելյան Ասիան, Աֆրիկան և Լատինական Ամերիկան, որոնք դառնում են և՛ պոտենցիալ միջնորդներ, և՛ ներդրումների ու արտադրության այլընտրանքային հարթակներ: Ըստ Global China: Assessing China's Growing Role in the World վերլուծական նախագծի՝ ԱՄՆ-ԶԺՀ հարաբերությունների հեռանկարները մեծապես կախված են նրանից, թե այս երկրները կկարողանա՞ն զարգացնել առևտրի և տեխնոլոգիական կապերի պաշտպանիչ մեխանիզմները՝ միաժամանակ մրցելով աշխարհաքաղաքականության մեջ:

Իրադարձությունների զարգացման տարբերակներ

- ✔ **Փոխկախվածության պահպանում:** Առևտրային հոսքերը և ներդրումները մնում են նշանակալի՝ չնայած ռազմավարական առումով կարևոր ոլորտներում եղած սահմանափակումներին:
- ✔ **Ազդեցության ոլորտների բաժանում:** ԱՄՆ-ն կենտրոնանում է դաշնակիցների վրա՝ Հնդկա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում (Ավստրալիայից մինչև Կանադա և Մեքսիկայից մինչև Մոնղոլիա): Նաև ամրապնդում է գործակցությունը Եվրոպայում: Չինաստանը, իր հերթին, ամրապնդում է իր դիրքերը Հարավարևելյան Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում:
- ✔ **Հակասությունների կարգավորում:** Չնայած կոշտ հռետորաբանությանը, Վաշինգտոնը և Պեկինը փորձում են պահպանել հաղորդակցության ուղիները, որպեսզի թույլ չտան, որ տնտեսական վեճերը վերածվեն լայնածավալ պատերազմի:

ԱՄՆ-ԶԺՀ առևտրային հակամարտությունը փոխում է համաշխարհային տնտեսության ճարտարապետությունը՝ ազդելով դրա անմիջական մասնակիցների հարաբերությունների, գլոբալ մատակարարման շղթաների, ներդրումային հոսքերի և տեխնոլոգիական դաշինքների վրա: Երկու երկրներն էլ պետք է հավասարակշռություն գտնեն մրցակցության և գործակցության միջև՝ հաշվի առնելով առանցքային ոլորտներում փոխադարձ կախվածությունը: 📌

Պեկինյան ոճով ներդրումներ



Նատայա Միչակովա
Freedom Finance Global-ի
առաջատար վերլուծաբան

Չինաստանն ինչու է ներդրումներ անում արտասահմանյան տնտեսություններում

Չինաստանի իրականացրած Going Global՝ ռազմավարությունը երկրին թույլ տվեց երկու տասնամյակում դառնալ միջազգային էքսպանսիայի առաջատար: Ծավալները տպավորիչ են ոչ միայն աշխարհագրական ընդգրկման ու ոլորտային բազմազանության, այլև ներդրումային ծավալների առումով: Արտասահմանյան ուղիղ ներդրումների ծավալով ՉԺՀ-ն այսօր զիջում է միայն ԱՄՆ-ին:

Առաջ դեպի գլոբալ աշխարհ

Չինաստանի գլոբալ ներկայության ընդլայնմանն ուղղված Going Global քաղաքականությունը, ձևավորվել է 1990-ականներին: 1997-ին Չինաստանի այն ժամանակվա ղեկավար Ցյան Ցզեմինը կոչ արեց Չինաստանում ստեղծել և զարգացնել այնպիսի ձեռնարկություններ, որոնք կկարողանան մրցել միջազգային մակարդակում, և այդ նպատակի իրագործումը սահմանեց աշխարհին բացվելու քայլ:

2001-ին այս ծրագրի հիմնական դրույթների իրապարակումից հետո իշխանությունը ռազմավարական նշանակություն ունեցող պետական ընկերությունների շարքից ընտրեց «ազգային չեմպիոնների» մոտ հիսուն թեկնածուի: Մի քանի տարի անց նրանք սկսեցին ակտիվներ գնել արտասահմանում: Շրջադարձային պահը 2004-ին էր, երբ Lenovo Group-ը գնեց համակարգիչներ արտադրող աշխարհի խոշորագույն ընկերություններից մեկի՝ American International Business Machines (IBM)-ի բիզնեսը:

Going Global քաղաքականությունը ժամանակի ընթացքում զարգացավ ընդլայնման տարբեր ձևերով: Սա ստեղծեց համաաշխարհային տնտեսության մեջ Չինաստանի ինտեգրման համար անհրաժեշտ պայմաններ:

Տպավորիչ թվեր

Վիճակագրությունը հստակ ցույց է տալիս Չինաստանի արձանագրած արդյունքները: UNCTAD-ի՝ տվյալով՝ Չինաստանի արտասահմանյան ուղիղ ներդրումները 2023-ին հասել են \$253.7 միլիարդի: Այս գումարը 17 անգամ գերազանցում է 2003-ի ցուցանիշը, երբ տեղական խոշոր կորպորացիաները նոր էին դուրս գալիս իրենց ներքին շուկայից: Տպավորիչ աճը բացատրվում է ցածր բազային էֆեկտով: Միջազգային էքսպանսիան շատ ավելի վաղ սկսած ԱՄՆ արտասահմանյան ներդրումների ծավալը 2023-ի դրությամբ երեք անգամ է գերազանցել 2003-ի ցուցանիշը: Երկու տասնամյակում Չինաստանը դարձել է արտասահմանում ամենամեծ ներդրողներից մեկը:

2023-ին արտասահմանում կատարած ներդրումների ծավալով առաջատար երկրները



Աղբյուրը՝ UNCTAD տվյալներ

Նմանատիպ վիճակ է բոլոր երկրների կուտակած արտասահմանյան ֆինանսական ուղղակի ներդրումներում:

Երկրներն արտասահմանյան ներդրումների վրա որքան են ծախսել 20 տարում (2003-2023)



Աղբյուրը՝ UNCTAD տվյալներ

Գլոբալ ընդլայնման առաջնորդների դրոպապատճառները միայն մասամբ են համընկնում: Երկու տնտեսություններն էլ նոր շուկաների կարիք ունեն: Սակայն, ի տարբերություն Միացյալ Նահանգների, Չինաստանը դեռ համարվում է զարգացող երկիր, ուստի նրա համար հատկապես կարևոր են նոր տեխնոլոգիաները բիզնեսին հասանելի դարձնելը և միջազգային հաշվարկներում յուրան առաջ մղելը:

* Միջազգային շուկա դուրս գալու ռազմավարություն
** ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով

Արդյունաբերությամբ հաշվի՞ր

Չինական ամենաուղիղ ներդրումները ստացել են էներգետիկայի, մետալուրգիայի, հանքարդյունաբերության և տրանսպորտի ոլորտները: Բայց ընդլայնման մոդելը ժամանակի ընթացքում փոխվում է: Չինական ընկերություններն արդեն փոխել են իրենց ռազմավարությունը. արտասահմանում գործող բիզնեսները գնելու փոխարեն նրանք սկսել են զրոյից ստեղծել նոր ձեռնարկություններ կամ բացել իրենց կորպորացիաների մասնաճյուղերը:

Չինական բիզնեսի արտասահմանյան ներդրումները 2005-2024, մլրդ \$

Ոլորտ	Գործող բիզնեսի գնում	Նոր ձեռնարկություն ստեղծում
Էներգառեսուրսներ	464.9	415.5
Մետալուրգիա և հանքարդյունաբերություն	191.5	44.9
Տրանսպորտ	185.1	232.1
Ֆինանսական հատված	117.6	109.4
Անշարժ գույք	89.5	2.5
Գյուղատնտեսություն	86.9	24.9
Տեխնոլոգիաներ	78.4	18.6
Ժամանց	62.0	6.9
Ջրուսաշրջություն	46.1	9.1
Լոգիստիկա	45.9	7.2
Առողջապահություն	31.8	7.1
Քիմիա	14.4	25.5
Այլ	79.3	55.6

Աղբյուրը՝ American Enterprise Institute (AEI), Global China Investment Tracker տվյալները

Ուշագրավ աշխարհագրություն

Ըստ American Enterprise Institute-ի տվյալի՝ Չինաստանն ընդլայնման նպատակով ամենամեծ միջոցները վերջին 20 տարում ներդրել է հետևյալ 5 երկրում.

- ✓ ԱՄՆ (\$200.7 մլրդ)
- ✓ Ավստրալիա (\$106.8 մլրդ)
- ✓ Մեծ Բրիտանիա (\$104.7 մլրդ)
- ✓ Բրազիլիա (\$72.6 մլրդ)
- ✓ Շվեյցարիա (\$61.9 մլրդ)

Աշխարհահռչակ եվրոպական ապրանքանիշերը՝ Volvo, Phillips, Nokia, կանադական BlackBerry-ն, ամերիկյան Hummer-ը, Motorola-ն, Riot Games-ը, AMC-ն, Legendary Entertainment Group-ը հայտնվել են չինական ձեռնարկությունների վերահսկողության տակ:

ԱՄՆ հետ առևտրային հակամարտության և ԵՄ-ում արտա-

սահմանյան ներդրումների ավելի խիստ ստուգման պատճառով չինական ներդրումների կառուցվածքը փոխվել է: 2009-ին զարգացած երկրներ է ուղղվել ներդրումների 53 %-ը, զարգացող երկրներ՝ 47 %-ը, մինչդեռ մինչև 2023 թ. այդ հարաբերակցությունը դարձել է 28 % և 72 %: Չինաստանից ֆինանսավորման ամենամեծ ծավալները ստացել են Սաուդյան Արաբիան (\$56.3 մլրդ), Պակիստանը (\$52.3 մլրդ), ԱՄԷ-ն (\$38.5 մլրդ), Ինդոնեզիան (\$32.8 մլրդ) և Ալժիրը (\$30.8 մլրդ):

Ավելի լայն շրջանակ

ԶԺՅ ներդրումային առաջնահերթություններն ասիական շուկայում մեծապես կապված են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրով առևտրային երթուղու կառուցման հետ, որին մասնակցում են Ինդոնեզիան և Վիետնամը: Տարածաշրջանում էլեկտրամեքենաների ժողովրդականության արագ աճը խթանում է կապիտալի ներհոսքը հավաքման գործարանների շինարարություն: BYD-ն արտադրություն է հիմնել Ինդոնեզիայում և Թայլանդում, Great Wall Motors-ն էլ՝ Մալայզիայում: Աֆրիկայում լիթիումի և պղնձի հանքավայրերը կարևոր են Չինաստանի համար: Huayou Cobalt հանքարդյունաբերական ընկերությունը Չինաբաբվեում ձեռք է բերել մի քանի հանքավայրեր և այնտեղ գործարկել է լիթիումի խտանյութի գործարան: Հունքի անխափան մատակարարումն ապահովելու համար Չինաստանն արդիականացնում է տրանսպորտային ենթակառուցվածքները: Քենիայում Մոմբասա-Նայրոբի երկաթուղին կառուցել է չինական CRBC շինարարական կորպորացիայի վերահսկմամբ գործող համատեղ ձեռնարկությունը՝ տեղական իշխանության միևնույն քաժնեմասով: 2024-ից ի վեր CCECC-ը վերակառուցում է Զամբիայի երկաթուղին: ԶԺՅ նավթային ընկերությունները սերտորեն գործակցում են Բրազիլիայի նավթագազային խոշորագույն կորպորացիայի՝ Petrobras-ի հետ: BYD-ը ֆինանսավորում է այս երկրում ավտոմոբիլային ձեռնարկությունների ստեղծումը, նրա մրցակից Chery-ն էլ 2024-ին մուտք է գործել Արգենտինայի շուկա: Լատինական Ամերիկայում Չինաստանի ընդլայնման մեջ Արևմուտքը տեսնում է նաև այլ նպատակներ: Յուանի խթանում, արտաքին տնտեսական հարաբերությունների ապադուլարացում և ԱՄՆ ազդեցության նվազեցում Նոր Աշխարհի պետություններում:

Կապիտալի երթուղային թերթիկ

AEI-ը կանխատեսում է, որ չինական բիզնեսները կշարունակեն ներդրումներ կատարել ենթակառուցվածքների զարգացման մեջ այն երկրներում, որոնք միացել են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը (ավելի մանրամասն՝ 6-7 էջերում): Մալայզիան, ԱՄԷ-ն և Պակիստանն ունեն այս ռազմավարության շրջանակում ֆինանսավորում ներգրավելու ամենամեծ հնարավորությունները:

Ռուսական հանքարդյունաբերական ընկերություններն ու նախագծերը կարող են լինել այս տարի Չինաստանից խոշոր ներդրումներ ստանալու բավականին ակնհայտ թեկնածուներ:

Մեր կարծիքով, չինացի ներդրողները չեն անտեսի արևմտյան երկրները, հատկապես հաշվի առնելով ԵՄ տնտեսության աճի ցածր տեմպն ու եվրոպական խոշոր ձեռնարկություններում առաջացած խնդիրները: Փոխադարձ լարվածության աճի ֆոնին ԱՄՆ-ում չինական ներդրումների աճ ակնկալել պետք չէ՝ առնվազն առաջիկա չորս տարում: 🇺🇸

Չենվելով սեփական ուժերի վրա



Սերգեյ Յաշչենկո
Freedom Finance Global-ի
գարգացման բաժնի փոխտնօրեն

ՉԺՀ հաջողություններն ու խնդիրները
ներմուծման փոխարինման գործում

Լերմուծման փոխարինման պետական ծրագիրը 10 տարի առաջ Չինաստանի համար սահմանեց գերնպատակներ: Պեկինն այլևս չէր ուզում պարզապես հավաքման արտադրամաս լինել Արևմուտքի համար: Նպատակն էր համաշխարհային առաջատար դառնալ նոր տեխնոլոգիաների մշակման գործում: Եկեք պարզենք՝ հաջողվե՞ց դա:

Մեծ նպատակներ

Պեկինի հավակնություններն արտացոլվում են «Արտադրված է Չինաստանում 2025» ծրագրում: Տնտեսական արդիականացման այս ծրագիրը հաստատվել է 2015-ին: Նպատակների մեջ են արտադրության ավտոմատացումը և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը: Դրա շնորհիվ չինական ապրանքները պետք է մրցունակ դառնան արտասահմանում: Առաջնահերթություն էր նաև ռազմավարական ոլորտներում ներմուծվող ապրանքների փոխարինումը տեղական ապրանքներով: Չինաստանը նախատեսում է մինչև 2035-ը լիովին մրցունակ դառնալ համաշխարհային շուկայում: Նպատակ է դրված մինչև 2049 թվականն էլ, երբ կնշվի ՉԺՀ 100-րդ տարին, դառնալ արտադրական գերտերություն:


Ռազմավարական շեշտերը

Պետք է հատուկ զարգացում ապրեին տնտեսության կարևոր ոլորտները. ավիատիեզերական արդյունաբերությունը, նավաշինությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, հեռահաղորդակցությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները, արհեստական բանականությունը, ռոբոտաշինությունը, գյուղատնտեսական բիզնեսը, կենսաբժշկությունը և երկաթուղային ենթակառուցվածքները: Այս ոլորտների համար տրամադրվել են հարկային արտոնություններ: Սուբսիդիաները և էժան վարկերը թույլ են տվել պահպանել արտադրանքի ցածր գները: Արտասահմանում չինական խոշոր նախագծերը ստացել են պետական լուրջ ֆինանսավորում: Ակտիվ ձևով խթանվել է նաև տեղական բիզնեսի ընդլայնումը: Տեղական արտադրողներին պաշտպանելու համար արտասահմանյան ընկերությունների մուտքը ներքին շուկա զգալի չափով սահմանափակվել է:

Երկիմաստ արդյունքներ

2024-ի վերջին Bloomberg Economics-ի փորձագետները հրապարակել են ուսումնասիրություն՝ գնահատելով «Արտադրված է Չինաստանում 2025» ռազմավարության նախնական արդյունքներն առանցքային հատվածներում:

Չինաստանը բարձր տեխնոլոգիական առաջնորդության ճանապարհին: Դինամիկան ըստ տարիների



Աղբյուրներ՝ Bloomberg Intelligence և Bloomberg Economics

Երիտասարդ և խոստումնալից

Ներմուծման փոխարինման ծրագրի արդյունքները կատարյալ չէին: Համեմատաբար վերջերս մեծ հայտ ներկայացրած տեղական ընկերությունները բավականին արժանի մրցակից են արևմտյան տեխնոլոգիական հսկաներին:

Օրինակ՝ Huawei-ը դարձել է աշխարհում կրիչների գլխավոր վաճառողը՝ գերազանցելով Apple-ին (AAPL): Alibaba-ն (BABA), որը Amazon-ի (AMZN) չինական համարժեքն է, հաջողությամբ իր կողմ է գրավում ամերիկյան իր մրցակցի վաճառողներին: Չինաստանում Google (GOOGL)՝ աշխարհի առաջատար որոնողական համակարգը, օգտագործում է բնակչության միայն մի քանի տոկոսը: Մեծ մասը նախընտրում է տեղական Baidu-ն (BIDU): WeChat-ն էլ արդեն հասնում է աշխարհի ամենատարածված մեսենջեր WhatsApp-ին:

Չինաստանը մարտահրավեր է նետում նույնիսկ այն ոլորտներում, որտեղ գերիշխում են արևմտյան ընկերությունները: COMAC C919 օդանավերի արտադրության ծավալը դեռ փոքր է Boeing-ի (BA) և Airbus-ի համեմատ, բայց դրանք 10-20 % էժան են, ինչը կարող է դառնալ նրանց առավելությունը: Այնուամենայնիվ, C919-ը գրեթե ամբողջությամբ պատրաստված է արտասահմանյան բաղադրիչներից, և դրանք փոխարինելու համար պետք են տեխնոլոգիաներ ու գիտական հիմքեր, որոնք Չինաստանում դեռ մշակման փուլում են: 🇨🇳

Ինտեգրման գաղտնիքները

Գիտության և բիզնեսի ներկայացուցիչները՝ չինական շուկայում աշխատանքի առանձնահատկությունների մասին



Ջո Նգայ
McKinsey & Company-ի
ավագ գործընկեր,
Չինաստանում ընկերության
գրասենյակի ղեկավար
Դուլատբեկ Իկբաև
Կենտրոնական Ասիայում
McKinsey & Company-ի
կառավարիչ գործընկեր

Այս տարի Չինաստանի ՀՆԱ-ն կաճի 4-5 %: Այս ցուցանիշի դրական շարժիչ ուժերն են քաղաքաշինությունը, էլեկտրական տրանսպորտային միջոցների, արևային էներգիայի և արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացումը, որտեղ երկիրն արդեն հասել է ակնառու հաջողությունների: Դեռևս կա ներքին սպառման ավելացման ներուժ: Ավելի ու ավելի ակտիվ զարգանում են բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանք արտադրող արդյունաբերությունները (էլեկտրոնիկա, մեքենաշինություն և ավտոմոբիլային արդյունաբերություն): Ստավոր սեփականության և նորարարության արտահանումն աճում է: Կան նաև հիմնախնդիրներ: Աշխարհաքաղաքական լարվածությունը և անշարժ գույքի ոլորտի անկումն առաջիկա մի քանի տարիներին կարող են ճնշում գործադրել ՉԺՀ տնտեսության վրա: Երկարաժամկետ հեռանկարներն ընդհանուր առմամբ դրական են. երկիրը շարունակում է կարևոր դեր խաղալ համաշխարհային տնտեսական զարգացման մեջ և ընդլայնում է առևտրային հարաբերություններն ԱՄՆ-ի՝ Մերձավոր Արևելքի և Լատինական Ամերիկայի հետ: Դիվերսիֆիկացիան ապահովում է ավելի մեծ դիմադրողականություն: Մի քանի միտումների պետք է հետևել: Զարգացման հիմնական վեկտորներից մեկը մնում է ներքին շուկան: Սպառման աճի տեմպով մարզային քաղաքներն այս տարի կարողանում են մեզապոլիսներից գերազանցել եկամուտների աճի, կենսապահովման ծախսերի նվազման և սպառողների տրամադրվածության բարելավման շնորհիվ: Չինաստանը և Կենտրոնական Ասիան, որպես առևտրային երկարաժամկետ գործընկերներ, հետաքրքրված են երկկողմանի ներդրումներով և գործակցության հնարավորություններով: Տարածաշրջանի, նաև Ղազախստանի ներուժը դեռ չի բացահայտվել:



Անտոն Ցեցինովսկի
Ռուսաստանյան արտահանման կենտրոնի
միջազգային համագործակցության և զարգացման տնօրեն
Ռուս-չինական առևտրաշրջանառությունը
2024-ին գերազանցեց իր ռեկորդը՝ հասնելով
\$244.8 միլիարդի: Էներգակիրներից բացի
Չինաստանում պահանջված են ռուսական

այլ ապրանքներ ևս՝ հացահատիկ, արևածաղկի ձեթ, արտադրական արդյունաբերության համար նախատեսված հումք (գունավոր մետաղներ), սինթետիկ կաուչուկ: Մեքենաշինական արտադրանքը, մասնավորապես՝ միջուկային էներգիայի սարքավորումները, նույնպես պահանջված են: Մենք տեսնում ենք ներքին սպառողական ապրանքների, հիմնականում սննդամթերքի, մասնավորապես՝ հրուշակեղենի պահանջարկի աճ: Վերջին 10 տարում դեպի Չինաստան գյուղատնտեսական արտահանման ծավալով Ռուսաստանն աշխարհում 13-րդ տեղից բարձրացել է 8-րդ տեղ, և այդ մատակարարումների ծավալը դրամական արտահայտմամբ աճել է ավելի քան հինգ անգամ: Ռուսական ընկերություններն իրենց գնորդներին գտել են Չինաստանի բոլոր շրջաններում: ՌԴ արտադրանքի հիմնական գնորդներն են Շանհայը, Պեկինը, Շանդոնգը, Չժեցզյանը, Ցզյանտուն, Չեյլունցզյանը և Ֆուցզյանը: Միևնույն ժամանակ, վաճառքը նկատելիորեն կենտրոնացած է. այս շրջանները կազմում են ոչ հումքային, ոչ էներգետիկ արտահանման 75 %-ը: Չինաստանի ներուժը ռուսական ընկերությունների համար դեռ լիովին չի բացահայտվել: Կարևոր է ընդլայնել մատակարարումների աշխարհագրությունը, այլ տարածաշրջանների գործընկերներին և գնորդներին ևս ծանոթացնել ՌԴ-ում արտադրվող ապրանքների բազմազանությանը: Սա ՌԴ արտահանման կենտրոնի խնդիրներից է:



Ալեքսանդր Կուլենցով
Deerma-ի պաշտոնական դիստրիբյուտոր
Navigator (Չինաստան) ընկերության բիզնեսի
զարգացման տնօրեն
2013-ից մեր ընկերությունը միջազգային
շուկաներում առաջ է մղում չինական ապրանքանիշերը՝ ստեղծելով բազմալիքային
բաշխում* և հաջողությամբ համատեղելով
առցանց և անցանց վաճառքը:

Մեր հիմնական գործընկերներից մեկը կենցաղային տեխնիկա արտադրող Deerma-ն է: Դրա արտադրանքը մեզ թույլ է տալիս բավարարել սպառողների ամենատարբեր կարիքները: Արտադրում է փոշեկուլներ, օդորակիչներ, խոհանոցային տեխնիկա, գեղեցկության և առողջության ապրանքներ: Ընկերության հաջողությունը պայմանավորված է նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ և բարձրորակ արտադրանքի լայն տեսականիով, բաշխման ուղիների զարգացած ցանցով: Այսօր տեսականին ընդլայնվում է պրեմիում արտադրանքի և նոր կատեգորիաների թողարկման շնորհիվ: Դրանք ներառում են ինքնամաքման գործառնություն ուղղահայաց փոշեկուլներ, ռոբոտացված փոշեկուլներ, տաք և սառը գոլորշիով խելացի խոնավացուցիչներ և շատ ավելին:

* Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա
** Վաճառքի ռազմավարություն, որը ենթադրում է բոլոր խողովակների համաժամանակյա աշխատանք

2011-ին հիմնադրվելուց ի վեր Deerma-ն ցույց է տվել տպավորիչ վերելք՝ տարեկան վաճառքի 25-35 % աճով: Դա տեղի է ունեցել «բազմապարանջանիչային, բազմակատեգորիական և գլոբալացման» ռազմավարության շնորհիվ: Այս տարի մենք նախատեսում ենք ավելի ակտիվ գովազդել ընկերության արտադրանքը՝ Ղազախստանում, որտեղ տեսնում ենք զգալի հեռանկարներ: Նաև՝ ԱՊՅ այլ երկրներում:

Deerma-ի նոր տեսականին հնարավորություն է տալիս խելացի տան համակարգում ինտեգրել բոլոր սարքավորումները: Սա թույլ է տալիս ստեղծել էներգարդյունավետ և ժամանակակից միջավայր՝ ապահովելով խնայողություն և հարմարավետություն: Բացի տեխնիկայի բարձր որակից և գերազանց սպասարկումից, սպառողներն այս հանգամանքը ևս բարձր են գնահատում:



Լուկաս Ֆուրտենբախ

Furtenbach Adventures զբոսաշրջային ընկերության գործադիր տնօրեն
Մենք առաջարկում ենք էվերեստը բարձրանալու տուրեր հյուսիսից (Չինաստանից)՝ որպես ավելի անվտանգ տարբերակ, քան հարավային երթուղին է (Նեպալից), ուստի ծանոթ ենք Չինաստանում բիզնես վարելու առանձնահատկություններին և ունենք իշխանության հետ աշխատելու փորձ:

Չինաստանի պետական մարմիններում որոշումների կայացման հիերարխիան մեր հիերարխիայից տարբեր է, և որոշումների կայացումը հաճախ ավելի երկար է տևում, քանի որ ներգրավված են մի քանի բաժիններ: Բայց եթե դուք գիտեք դա և նախապես պլանավորում եք, խնդիրներ չեն առաջանում: Լեզվական արգելքը շատ կարևոր է մեր բիզնեսում: Հաղորդակցությունը հատկապես դժվար է գյուղական վայրերում: Սկզբում մեր ընկերության աշխատակիցները չէին խոսում չինարեն: Ժամանակի ընթացքում վիճակը բարելավվել է. բոլոր գործընկերները, որոնց հետ այսօր աշխատում ենք, գերազանց անգլերեն գիտեն:

Իհարկե, կան մշակութային տարբերություններ, ինչպես յուրաքանչյուր երկրում: Բայց դրանց հարմարվելը հիմնականում կախված է մեզնից: Շատ դրական են գնահատում Չինաստանի մեր գործընկերների հետ գործակցությունը, Չինաստանի ու Տիբեթի լեռնագնացության ասոցիացիաների հետ երթուղիների քննարկումը և տեղեկությունների փոխանակումը:



Սյու Հայ

Huawei Technologies Kazakhstan-ի գործադիր տնօրենի տեղակալ
Ընկերության հիմնական նախագծերը Ղազախստանում կապված են երկրի թվային վերափոխման հետ և կենտրոնացած են կրթության, տրանսպորտի, ամպային լուծումների, էներգետիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում:

Կրթության մասով ընկերությունն ակտիվ ներդրումներ է կատարում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման գործում: Մեր ICT ակադեմիաները՝ (Ղազախստանի առա-

ջատար համալսարաններում արդեն 40 այդպիսի ակադեմիական) ուսանողներին թույլ են տալիս ձեռք բերել SS ոլորտի առաջադեմ գիտելիքներ:

Տրանսպորտի ոլորտում Huawei-ն ակտիվ գործակցում է հիմնական խաղացողների հետ՝ թվային առաջադեմ լուծումներ ներդնելու համար: Երկաթուղային թվայնացման կենտրոնը, որը 2024-ին բացվել է Ղազախստանի Թեմիր ժուլի (KTZ) հետ, կարևոր քայլ էր լոգիստիկայի ավտոմատացման, բեռնափոխադրումների արդյունավետության բարձրացման և երկաթուղային խելացի ցանցերի զարգացման ուղղությամբ: Մեր ամպային տեխնոլոգիաներն ընկերություններին թույլ են տալիս օպտիմալացնել բիզնես գործընթացները, կառավարել տվյալները և բարելավել SS ենթակառուցվածքների անվտանգությունը: Huawei-ն ակտիվ ներդրումներ է կատարում կայուն էներգետիկայի տեխնոլոգիաներում՝ Ղազախստանին աջակցելով անխաձային չեզոքության հասնելու գործում:

Բացի այդ, մեր ընկերությունը զբաղվում է Ղազախստանում 5G, IoT (Internet of Things) և ժամանակակից ցանցային լուծումների ենթակառուցվածքների տեղակայմամբ: ԱՊՅ շուկան, որը ռազմավարական նշանակություն ունի մեզ համար, թվային տեխնոլոգիաների զարգացման զգալի ներուժ է ապահովում:



Ալեքսեյ Մասլով

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի տնօրեն
Չինաստանի տնտեսական հեռանկարը դժվար է գերազնահատել, սակայն ցածր բազայից աճի հաշվին հեշտ փող ստանալն այլևս չի աշխատի: Այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ երկիրն իր տնտեսական դիրքերը կորցնի առաջիկա հինգ-յոթ տարիներին: Տնտեսության բնույթը կփոխվի՝ տեխնոլոգիական առումով դառնալով ավելի տարողունակ:

Չինական ֆոնդային շուկան շատ արագ է աճում և, չնայած բազմաթիվ ցնցումներին, ցուցադրում է զարմանալի կայունություն: Այսօր ներդրողների համար ամենագրավիչ ոլորտները կապված են արհեստական բանականության, կենսադեղագործության, զբոսաշրջության, մետաղագործության, բժշկության ու էկոլոգիայի նոր տեխնոլոգիաների հետ:

Չինաստանում արտասահմանցիների՝ բիզնես վարելու ամենախոստումնալից տարբերակը սննդի և փայտամշակման արտադրողների շուկա մուտք գործելն է՝ համատեղ ձեռնարկությունների ձևաչափով: Այնուամենայնիվ, Չինաստանում առանց նախնական նախապատրաստության բիզնես վարելը հեշտ չէ: Խորհուրդ են տալիս առնվազն մանրակրկիտ ուսումնասիրել ձեր գործընկերոջը Չինաստանում: Կարևոր չէ՝ գործ ունեք մեծ, թե փոքր, չինական շուկայում վաղուց աշխատող, թե նոր մուտք գործող ընկերության հետ: Անկախ այդ ամենից՝ անհրաժեշտ է լիարժեք due diligence: Բացի այդ, պատրաստեք թիմը. նրանք պետք է հասկանան օրենսդրության, ներդրումների և բանակցությունների առանձնահատկությունները: Եվ, իհարկե, ընդլայնե՛ք ձեր կապերը: Մի՛ վիատվեք, եթե առաջին կամ նույնիսկ երրորդ փորձից չկարողանաք մուտք գործել չինական շուկա: Ժամանակի ընթացքում ձեռք բերած փորձը և ձևավորված սոցիալական կարգավիճակը կօգնեն հասնել ձեր նպատակին: 🍀

*** Տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների խորացված ուսումնասիրման նպատակով առաջատար համալսարանների հետ իրականացվող միջազգային կրթական ծրագիր
**** Ռիսկերի գնահատում

Ողջամիտ ներդրումներ

Ներդրողների համար ընտրել ենք տնտեսության տարբեր ոլորտներում չինական ընկերությունների ամենաիտաքրքիր բաժնետոմսերը:



Միխայիլ Ղենիսյանով
Freedom Finance Global-ի վերլուծական բաժնի փոխստորեն



Թիրախային գին
\$160
Աճի պոտենցիալ
33.1 %



PDD Holdings-ը (PDD) կառավարում է էլեկտրոնային առևտրի հարթակները՝ Pinduoduo-ն Չինաստանում և Temu-ն արտասահմանում: Սպիտակ տունը սահմանափակվել է ներմուծման 20 % սակագնով, մինչդեռ սկզբնապես նախատեսված էր 60 %, իսկ մինչև \$800 արժողությամբ և սովորաբար անմաքս ապրանքների համար այս միջոցառումը հետաձգվել է: Ուստի պակասել է Temu հարթակի զարգացման դանդաղման ռիսկը, որի համար ԱՄՆ-ում բիզնեսը եկամուտների աճի միջնաժամկետ հիմնական շարժիչ ուժն է: Բացի այդ, տնտեսության աջակցությանն ուղղված Չինաստանի պետական ծրագրերը նպաստելու են երկրորդային անհրաժեշտության էժան ապրանքների ներքին պահանջարկի աճին: Հենց այդ ապրանքներն են Pinduoduo-ի հիմնական տեսականին:



Թիրախային գին
\$30
Աճի պոտենցիալ
23.1 %



KE Holdings-ը (BEKE) մասնագիտանում է ՉԺՀ-ում անշարժ գույքի առցանց և անցանց ծառայություններ մատուցելու մեջ: Ընկերությունը կարող է օգտվել բնակարանային շուկայի հետագա անկումը կանխելու պետական միջոցառումներից: Նրա բիզնեսը կշահի չինական քաղաքներում անշարժ գույքի գնման սահմանափակումների մեղմացումից, քանի որ դա կավելացնի նրա միջնաժամկետ եկամուտները: Բացի այդ, բնակարանների նորոգման նպատակով կենցաղային ապրանքների և կենցաղային տեխնիկայի գնման համար անհատներին 300 միլիարդ յուանի (\$41 միլիարդ) պետական սուբսիդիաների հատկացումը պետք է դրական ազդեցություն ունենա KE Holdings-ի գնանշումների վրա: KE Holdings-ի բիզնեսի 25 %-ը ինտերիերի դիզայնն է և նորոգման ծառայությունը:




Թիրախային գին
\$150
Աճի պոտենցիալ
23.9 %



Futu Holdings-ը (FUTU) առցանց բրոքեր է, որն առաջարկում է ներդրումային ծառայություններ: Այն շարունակում է դիվերսիֆիկացնել իր եկամուտները և 2024-ին կրկնապատկել է նոր հաճախորդներ ներգրավելու ծրագրերը: Նպաստել են մարկետինգային արշավները և նոր ապրանքների թողարկումը Չինականում, Սինգապուրում, Ճապոնիայում և Մալայզիայում: FUTU գնանշումների աճի շարժիչ ուժը կարող են լինել Չինաստանի տնտեսության խթանման միջոցառումները, որոնք կբարձրացնեն ընկերության առևտրային շրջանառությունը: Futu-ն, որն իր հիմնական եկամուտը ստանում է ֆոնդային շուկայում գործարքների սպասարկման տարբեր միջնորդավճարներից, այս զարգացման անմիջական շահառուն է:



Թիրախային գին
\$170
Աճի պոտենցիալ
20.5 %



Alibaba-ի (BABA) եռամսյակային վերջին հաշվետվությունը ցույց է տվել, որ բարեհաջող վերականգնվում է ընկերության հիմնական բիզնեսը՝ ներքին մանրածախ առևտուրը: Հուլիսին շարունակում է զարգացնել իր միջազգային առևտրի և լոգիստիկայի հատվածները, ինչը նպաստում է միջնաժամկետ հեռանկարում իր ֆինանսական աճի արագացմանը: Այս արժեթղթերում ներդրումներ կատարելու լրացուցիչ հետաքրքրություն են ապահովում ընկերության ձեռքբերումներն ԱՄ մոդելների ստեղծման գործում: Դրանք արդեն մոտ են միջազգային լավագույն անալոզներին և ստանում են պետության աջակցությունը, ինչն Alibaba-ին թույլ է տալիս խոստումնալից շուկայում մեծացնել իր մասնաբաժինը:



Երլան Աբդիկարիմով

Freedom Broker-ի ֆինանսական վերլուծությունների բաժնի տնօրեն



Թիրախային գին
\$106.5
Աճի պոտենցիալ
22 %



Baidu-ն (BIDU) Չինաստանի տեխնոլոգիական ոլորտի առաջատարն է: 2024-ի 4-րդ եռամսյակում ընկերությունը 711 միլիոն դոլարի զուտ շահույթ է ստացել ԱՄ տեխնոլոգիաների և ինքնավար վարորդական ծառայությունների զարգացման շնորհիվ: Սա գերազանցել է կանխատեսումը՝ չնայած առցանց մարկետինգի եկամուտի 7 % անկմանը: ԱՄ արտադրանքից ստացված եկամուտի աճը և ինքնավար մեքենաների նախագծման ոլորտում մարտկոցներ արտադրող Contemporary Amperex Technology-ի հետ գործընկերությունը փոխհատուցում են գովազդային բաժնի գրանցած անկումը: Հաշվի առնելով բարձր տեխնոլոգիական ընկերություններին տրվող պետական աջակցությունը և տնտեսական աճի հեռանկարները, BIDU-ի բաժնետոմսերը թվում են թերագնահատված:



Թիրախային գին
\$33.4
Աճի պոտենցիալ
21 %



Li Auto (LI) ընկերությունը մասնագիտանում է պրեմիում հիբրիդների արտադրության մեջ և ակտիվ զարգանում է էլեկտրական մեքենաների հատվածում: Դեկավարությունը հուլիս-սեպտեմբերին նախատեսել էր 4-րդ եռամսյակում մատակարարումների 21-29 % տարեկան աճ՝ \$6.2-6.5 միլիարդ եկամուտով: LI բաժնետոմսերի հանդեպ ներդրողների հետաքրքրության աճը պայմանավորված է փետրվարին նոր ինքնավար վարորդական մոդելի ի հայտ գալով և ամբողջությամբ էլեկտրական առաջին ամենագնացի արտադրության մեկնարկով: Աճի շարժիչ ուժերն են կանաչ էներգետիկային աջակցելու (չինական պետական) քաղաքականությունը, ավտոարտադրողի բիզնեսի հեռանկարների ընդլայնումը:



Թիրախային գին
\$29.3
Աճի պոտենցիալ
40 %



Bilibili-ն (BILI) երիտասարդ լսարանին ուղղված առցանց հարթակ է, որը համատեղում է տեսանյութերի հոսթինգի, սթրիմինգային ծառայության և խաղային էկոհամակարգի հնարավորությունները: Ռեսուրսը թույլ է տալիս մեկնաբանություններ թողնել իրական ժամանակում, ինչը մեծացնում է օգտատերերի ներգրավումը: Ընկերությունը գումար է վաստակում գովազդից, բջջային խաղերից, պրեմիում բաժանորդագրություններից և վիրտուալ ապրանքների վաճառքից: 2024-ի 4-րդ եռամսյակում Bilibili-ն գրանցեց պատմության մեջ իր առաջին մաքուր շահույթը: Վճարովի գործառույթներ օգտագործող ընկերության լսարանը ընդլայնվել է 20 %՝ հասնելով 28 միլիոնի: Թվային տնտեսությանն ուղղված պետական աջակցությունն ամրապնդում է BILI-ի հեռանկարը:



Թիրախային գին
\$78
Աճի պոտենցիալ
31 %



Trip.com-ը (TCOM) տուրերի, տրանսպորտային միջոցների տոմսերի, բնակարանների վարձակալության և կորպորատիվ ծամփորդությունների ամրագրման չինական առցանց ամենամեծ հարթակն է: Ծամփորդական տեխնոլոգիաների ոլորտում առաջատար դիրքն ամրապնդվեց 2024-ի 4-րդ եռամսյակում եկամուտների 23 % աճով (տարեկան մինչև \$1.75 միլիարդ): TripGenie ԱՄ գործիքի շնորհիվ հարթակի օրական օգտատերերի թիվը հասել է 405 միլիոնի: Եկամուտի 15-18 % աճ ենթադրող 2025-ի կանխատեսումները կիրականան վերջին գործարքների, նաև Tourism Malaysia-ի հետ հաստատված գործընկերության շնորհիվ: TCOM-ը համաշխարհային զբոսաշրջության վերականգնման և ծամփորդության ոլորտում նորարարության մեջ ներդրումներ կատարելու հնարավորություն է:

ZTE*

ՈՒԵՅ ՈՒԵՅ

ZTE Ղազախստանի գլխավոր տնօրեն

«Մեր տեխնոլոգիաներն արագացնում են թվային տնտեսության զարգացումը»

Լուսանկարը՝ Ուեյ Ուեյի անձնական արխիվից

— ZTE-ին ե՞րբ և ինչո՞վ գրավեց Ղազախստանի շուկան:

— 2000-ականների սկզբին մեր ընկերությունը, որն այս տարի նշեց իր 40-րդ տարին, արագացրեց ընդլայնումը դեպի արտաքին շուկաներ: Այս ընթացքում ZTE-ի ներկայացուցչություններ բացվեցին ԱՊՀ բազմաթիվ երկրներում, նաև (2000-ին) Ղազախստանում: Այս երկիրն ամենամեծ տնտեսությունն է Կենտրոնական Ասիայում, ՀՆԱ-ի առումով մշտապես առաջատար դիրք է զբաղեցնում տարածաշրջանում և ԱՊՀ երկրներում: Հետևելով, թե ինչպես է Ղազախստանն այսօր զարգանում, կարող եմ ասել, որ այս շուկա մուտք գործելու որոշումը երկարաժամկետ առումով շատ ճիշտ էր:

— Չինական ընկերության համար դժվար էր Ղազախստանում բիզնես վարելու պայմաններին հարմարվել:

— ZTE-ն ունի աշխարհի բազմաթիվ երկրներում աշխատելու փորձ: Այն մեզ թույլ է տվել համեմատաբար հեշտ հարմարվել Ղազախստանի տնտեսական, կարգավորող, գործարար և մշակութային միջավայրին: Բացի այդ, մեր թիմին օգնել են մեր ղազախ գործընկերները, որոնք իրենց ոլորտներում իսկական պրոֆեսիոնալներ են: Այստեղ ZTE-ի աշխատանքի կազմակերպման գործում նրանց ներդրումն անգնահատելի է:

— Նոր շուկաներ մուտք գործելիս՝ ի՞նչ խոչընդոտների եք բխվել:

— Սովորաբար հիմնական դժվարությունները ստեղծվում են բարձր մրցակցային միջավայրով: Սակայն մյուս կողմից դա մեզ դրդում է մեր հաժախորդներին և գործընկերներին առաջարկել ավելի արդյունավետ և մրցունակ լուծումներ:

— Որո՞նք են այն հիմնական նախագծերը, որոնք իրականացնում եք Ղազախստանում և ԱՊՀ այլ երկրներում:

— Վերջին մի քանի տարիներին մեր բիզնեսը Ղազախստանում զգալի չափով ընդլայնվել է: Նշանակալի նախագծերից կարելի է առանձնացնել Giga City-ն, որն Ակմոլայի և Թուրքեստանի շրջաններում Beeline բջջային ցանցի ար-

դիականացման նախագիծն է: Այն ունի 1800-ից ավելի բազային կայաններ: Խոշոր քաղաքներում ներդրվել է նաև FDD Massive MIMO տեխնոլոգիան (մի քանի անտենաներ միաժամանակ ազդանշան են հաղորդում և ընդունում): Այն զգալի չափով մեծացնում է ցանցի հզորությունը, ինչը դրական ազդեցություն է ունենում կապի որակի վրա: Ուզբեկստանում մենք 5G տեխնիկական լուծումների մատակարարներից մեկն էինք Սամարղանդում կայացած ՇՀԿ՝ գազաթնաժողովում՝ ապահովելով կապի գերազանց որակ:

— Չինաստանից եկող հեռահաղորդակցության նորագույն տեխնոլոգիաներին պատրաստ են այս շուկաները: Հետ չե՞ն մնում:

— ԱՊՀ երկրները համաշխարհային միտմանը վստահ հետևում են այն առումով, որ երկրների իշխանությունները թվայնացումը համարում են սոցիալ-տնտեսական զարգացման արդյունավետ շարժիչ ուժ: Եվ Ղազախստանը, անկասկած, այս առումով տարածաշրջանային առաջատար է: Հաջողության կարևոր գործոն էր նորարարական թվային ենթակառուցվածքի կառուցումը: Ղազախստանում ինտերնետի հասանելիությունը հասել է 92.3 %-ի, հանրային բոլոր ծառայությունների 90 %-ից ավելին մատուցվում է էլեկտրոնային եղանակով, և դրանց 86 %-ը հասանելի է սմարթֆոնով: Սրանք լուրջ նվաճումներ են: Եվ թվային Ղազախստան կառուցելու մեծ ռազմավարությունը հաստատում է տնտեսության բոլոր ոլորտները լիարժեք թվայնացնելու ուղղությամբ առաջ շարժվելու վճռականությունը: Այնուամենայնիվ, դեռ կա ենթակառուցվածքների զարգացման մեծ ներուժ: Օրինակ՝ 5G ոլորտում:

— Չինաստանում վիճակը տարբեր է: Ղազախստանը տեխնոլոգիական առումով հիմնականում ինչո՞վ է տարբերվում:

— Այս պահին տարբերությունը հեռահաղորդակցության շուկայի հզորությունն է ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման արագությունը: Չինաստանն ունի աշխարհում

* Չինաստանի հեռահաղորդակցության խոշորագույն ընկերություններից մեկը
** Շանհայի համագործակցության կազմակերպություն

ամենամեծ բջջային օգտատերերի բազան: 2019-ին, երբ ազգային հեռահաղորդակցության օպերատորները սկսեցին կառուցել առևտրային 5G ցանցեր, երկիրը դարձավ այս, նաև 5G սարքերի արտադրության ոլորտում համաշխարհային մրցավազքի առաջատարներից: Չինաստանն արդեն տեղակայել է հինգերորդ սերնդի կապի ցանցի 4.25 միլիոն բազային կայան, և մեր ընկերությունը եղել է դրա սարքավորումները մատակարարող հիմնական օղակներից մեկը:

— ZTE-ն շատ ակտիվ է նորարարությունների ոլորտում՝ մեծ ներդրումներ կատարելով R&D-ի մեջ^{*}: ԱՊՅ երկրներում օգտագործում եք չինական, թե՛ տեղական մշակումներ:**

— Մեր ընկերությունն աշխարհում ամենամեծ խաղացողներից է տեղեկատվական և հաղորդակցային առանցքային տեխնոլոգիաների ոլորտում: 2024-ի 1-ին կեսի դրությամբ ZTE-ն ամբողջ աշխարհում դիմել է ավելի քան 90,000 արտոնագրի, որոնցից 46,000-ը հաստատվել են: Մենք ամեն տարի մեր գործառնական եկամուտի 20 %-ից ավելին ներդնում ենք R&D-ի մեջ: Հետազոտական մեր հիմնական հնարավորությունները կենտրոնացած են Չինաստանում, բայց որոշ ոլորտներում գործակցում ենք արտասահմանյան գործընկերների հետ: Մասնավորապես՝ Ղազախստանում ստեղծվել է ZTE-ի և Ալ-Ֆարաբիի անվան Ղազախստանի ազգային համալսարանի համատեղ նորարարական կենտրոն, նաև 5G առաջադեմ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն: Այս հարթակները թույլ կտան ընդլայնել հետազոտությունների և զարգացման ուղղությամբ գործակցությունը և դազախական շուկայի համար կպատրաստեն բարձր որակավորում ունեցող տեխնիկական մասնագետներ: Ի վերջո, ուսանողները դեռ սովորելու ընթացքում են ծանոթանում ZTE-ի ամենաառաջադեմ տեխնոլոգիաներին:

— Առաջադեմ ի՞նչ տեխնոլոգիաների մասին է խոսքը:

— Օրինակ՝ ZTE-ն աշխարհում առաջինը գործարկեց ԱԲ օպտիմալացմամբ առևտրային 5G բազային կայանը: 5G ցանցերի հետ ԱԲ տեխնոլոգիաների ինտեգրումը թույլ է տալիս արագացնել տվյալների փոխանցումը, բարձրացնել դրանց մշակման արդյունավետությունը և նվազեցնել ցանցային սարքավորումների էներգասպառումը: Մեկ այլ առավելություն է ներդրումային ցանցի ձկուն փոխազդեցությունն օգտատերերի հետ: Սա հնարավորություն է տալիս օպտիմալացնել 5G ցանցի արդյունավետությունը՝ հաշվի առնելով կոնկրետ բիզնես-սցենարներ:

— Ի՞նչ խնդիրներ է առաջ բերում արհեստական բանականությունը, որ ներթափանցել է հեռահաղորդակցություն:

— Մենք լավ գիտակցում ենք այն նշանակալի դերը, որն այսօր ունի ԱԲ-ն արդյունավետ և էկոլոգիապես մաքուր կապի ցանցեր կառուցելու գործում: Պլանավորում ենք ԱԲ-ն օգտագործել հանուն փոխակերպող փոփոխությունների: Նաև ակտիվ մասնակցել դրա օգտագործման գլոբալ ստանդարտների, կանոնների և էթիկական սկզբունքների ստեղծմանը:

— Բացի 5G ցանցերից, կա՞ն այլ ապրանքներ, որտեղ ևս օգտագործում եք ԱԲ:

— Ինտելեկտուալ հաշվիչ ենթակառուցվածքներ, Nebula ին-

տելեկտուալ լուծում, ինտելեկտուալ գործարաններ, խելացի տերմինալ սարքեր:

— Ձեր կարծիքով, ի՞նչ նոր տեխնոլոգիաներ կնպաստեն թվային տնտեսության զարգացմանը:

— Իմ կարծիքով՝ ԱԲ-ից և 5G-ից բացի, թվային տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեն մեծ տվյալները, ամպային հաշվարկների ինտելեկտուալ լուծումները, բանացանցը, բարձր արդյունավետությամբ չիպսեթները:

— Առաջիկա 5-10 տարիներին ի՞նչ սպասել հեռահաղորդակցության ոլորտում, որո՞նք են միտումները:

— Կանխատեսումները միշտ սխալվելու ռիսկ ունեն, բայց կարող ենք մեծ վստահությամբ ասել, որ մեր ոլորտը կշարունակի վերափոխվել վերը նշված տեխնոլոգիաների ազդեցության տակ:


— Ի՞նչ է դա նշանակում գործնականում:

— Օպերատորները կօպտիմալացնեն ցանցի կառավարումը և կավտոմատացնեն հաժախորդների սպասարկումը՝ օգտագործելով արհեստական բանականություն: Անլար կապի տեխնոլոգիայի հինգերորդ սերունդը կներդրվի ամենուր, ակտիվ կկառուցվեն մասնավոր ցանցեր: Առաջիկա տարիներին կշարունակվի արդեն սկսված 6G ձևաչափի ստանդարտների մշակումը: Ավանդական ապարատային ենթակառուցվածքներից ամպային ենթակառուցվածքների անցնելուն զուգահեռ կապի օպերատորներն ավելի ու ավելի ակտիվ կօգտագործեն ցանցային լուծումները, որոնք հիմնված են կոնտեյներացման, վիրտուալացման վրա: Կիրառական տեխնոլոգիաները և ցանցի կայունությունը կդառնան ավելի կարևոր առաջնահերթություններ:

— Ինչպե՞ս եք տեսնում ZTE-ի դերը համաշխարհային հեռահաղորդակցության ապագա շուկայում:

— Թվային փոխակերպումն ամեն օր ստեղծում է նոր բիզնես մոդելներ, և դրանց մեծ մասի համար պետք է օգտագործել հեռահաղորդակցության ցանցերը: Այս ենթակառուցվածքը բազմաթիվ մեգանախագծերի իրականացման անբաժանելի մասն է՝ ինքնավար տրանսպորտային միջոցներ, էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային առողջապահություն: Մեր օգտագործած նորագույն տեխնոլոգիաները կարող են զգալիորեն արագացնել թվային տնտեսության զարգացումը և տնտեսական, բնապահպանական և սոցիալական կայունություն ապահովել: Այս ամենը ZTE-ի դերը համաշխարհային թվային փոխակերպման մեջ դարձնում է առանցքային:

— Որո՞նք են ընկերության առաջիկա տարիների նպատակները:

— Մենք կշարունակենք ներդրումներ կատարել առաջադեմ տեխնոլոգիաների հետազոտության և զարգացման մեջ և տրամադրել նորարարական ինտեգրված լուծումներ գլոբալ օպերատորներին, պետական և առևտրային ձեռնարկություններին, նաև մասնավոր սպառողներին: Այսօր ZTE-ն գործում է 160+ երկրներում: Մեր խնդիրը շուկայում մեր մասնաբաժնի ավելացումն է և ապրանքների ու լուծումների փաթեթի ընդլայնումը: Այս ամենը թույլ կտա ամրապնդել մեր՝ հեռահաղորդակցության ոլորտում համաշխարհային առաջատարներից մեկի դիրքերը և կապահովի բիզնեսի կայուն աճ: 

*** Research and Development - Հետազոտություն և զարգացում

Ինչով է ապրում Freedom Holding Corp.-ը. հիմնական իրադարձությունների դայջեսթ

Freedom Holding-ի եռամսյակային եկամուտը նոր ռեկորդ է սահմանել

2025 թ. ֆինանսական տարվա 3-րդ եռամսյակում (2024-ի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը) հոլդինգի եկամուտը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 57%՝ հասնելով \$655.2 մլն դոլարի:

- ✔ Բրոքերային բիզնեսն ապահովել է \$213.3 մլն (+29%), հաճախորդների հաշիվների թիվը հասել է 618 հազարի:
- ✔ Բանկային հատվածի եկամուտը կազմել է \$206.4 մլն (+47%), հաճախորդների բազան ընդլայնվել է՝ հասնելով 1.4 միլիոնի:
- ✔ Freedom Life և Freedom Insurance ընկերությունների ապահովագրական եկամուտներն աճել են 106%՝ հասնելով \$197.8 միլիոնի, հաճախորդների թիվն էլ՝ 972 հազարի:
- ✔ Բիզնեսի մյուս ոլորտների (առցանց վճարումներ, էլեկտրոնային առևտուր, զբոսաշրջություն, հեռահաղորդակցություն) ներդրումը հոլդինգի եկամուտներում կազմել է \$37.7 մլն (+120%):

Հոլդինգի զուտ շահույթը կազմել է \$78.1 մլն, ընկերության ակտիվները՝ \$9.14 մլրդ:

S&P Global-ը բարելավել է հոլդինգի ընկերությունների վարկանիշերը

Freedom Finance ԲԸ, Freedom Finance Global-ի, Freedom Bank Kazakhstan-ի և Freedom Finance Europe-ի վարկանիշերը բարձրացվել են մինչև «B+» կայուն հեռանկարով: Freedom Holding Corp.-ի վարկանիշը հաստատվել է «B-» մակարդակում: Հոլդինգի դուստր ձեռնարկություններին S&P-ի տված գնահատականներն արտացոլում են դրանց կայուն զարգացումը, ռիսկերի կառավարման և համապատասխանության համակարգերի կատարելագործումը:

Freedom-ը բրոքերային բիզնես կրացի Թուրքիայում

Freedom Holding-ը Թուրքիայում բրոքերային ընկերություն բացելու թույլտվություն է ստացել: Սա տեղական շուկայում նոր խաղացողի համար առաջին արտոնագիրն է վերջին 20 տարում: Հոլդինգը մոտ հինգ տարի գնահատել է շուկայի ներուժը և վերջապես թույլտվություն է ստացել: Այժմ նախատեսվում է նոր բրոքերին կապել առևտրային սեփական ITS հարթակի հետ, ինչը թուրք հաճախորդներին կհասցնի ֆինանսական համաշխարհային գործիքները:

Հոլդինգն ընդլայնել է ինդեքսային ներդրումների իր հնարավորությունները

Ղազախստանի Freedom Broker-ը գործարկել է երկու նոր ETF, որոնք հասանելի են Astana International Exchange-ում (AIX): Երկու ֆոնդերն էլ հետևում են ITS առևտրային հարթակի ինդեքսներին:

- ✔ ITSW ETF-ը (ITSW.ITS) հետևում է ITS World ինդեքսի դինամիկային, որը ներառում է աշխարհի 50 խոշորագույն ընկերությունները:
- ✔ ITSS ETF-ը (ITSS.ITS) հետևում է ITS Shariah ինդեքսին, որը ներառում է 30 թողարկողների, որոնք համապատասխանում են AAOIFI և DFM իսլամական ֆինանսական չափանիշներին:

Ավաթիում տեղի է ունեցել Freedom Telecom Day-ը

Միջոցառման շրջանակում հոլդինգի հեռահաղորդակցության ընկերությունը ցուցադրել է՝ ինչպես է մշակում ռազմավարական նախագծեր և ամրապնդում խմբի էկոհամակարգը, ընդլայնում Ղազախստանի հեռահաղորդակցության ենթակառուցվածքները:

Վերջին երկու տարում Freedom Telecom-ը տեղադրել է 2500 կմ օպտիկամանրաթելային կապուղիներ, տեղակայել Freedom Wi-Fi-ի 147 մուտքի կետեր և ցանցին միացրել 24 հազար տնային տնտեսություն: Թվային վերափոխման ոլորտում իր լայնածավալ ներդրումների շրջանակում ընկերությունը 100 միլիարդ տեճե է ներդրում օպտիկամանրաթելային գերմայրուղու և TIER-3 մակարդակի տվյալների կենտրոնի կառուցման մեջ: Սա տվյալների տարանցման այլընտրանքային ուղի կստեղծի Եվրոպայի և Արևելյան Ասիայի միջև:



Աղբյուրը՝ Freedom Holding Corp.-ի մամուլի ծառայություն

Freedom ընկերությունները Best Broker Award 2024-ում ձանաչվել են լավագույնը

Ղազախստանի AIX բորսան ամփոփել է Best Broker Award 2024 ամենամյա մրցանակաբաշխության արդյունքները: Անցած տարվա արդյունքների հիման վրա հոլդինգի բրոքերային ընկերությունները հաղթել են երեք անվանակարգում:

- ✔ Լավագույն բորսայական բրոքեր՝ Freedom Finance ԲԸ
- ✔ Մարտչային գործիքների լավագույն բրոքեր՝ Freedom Finance Global և Freedom Finance ԲԸ
- ✔ Լավագույն ներդրումային բանկային թիմ՝ Freedom Finance ԲԸ: Սա հաստատում է Freedom Broker-ի առաջատար դիրքը Ղազախստանի ֆոնդային շուկայում և նրա կարևոր դերը բորսայական առևտրի զարգացման գործում:

Ղազախստանում գործարկվել է Oninvest.com ներդրումային մեդիա ծառայությունը:

Oninvest.com-ը հարթակ է, որը համատեղում է արդիական նորությունները, վերլուծությունները և 50 հազարից ավելի թողարկողների տվյալների բազան: Օգտատերերը ստանում են միջազգային շուկաների փորձագիտական ակնարկներ, խոստումնալից ընկերությունների, նաև ԱՄՆ small caps (փոքր կապիտալիզացիա) սեկտորի մասին տեղեկություններ: Նախագիծը ներառում է նաև մասնագիտացած Telegram ալիք և էլեմենտներ ի կանոնավոր ստացում: Նախագծի ֆինանսական ներդրողը Freedom Holding Corp.-ի գործադիր տնօրեն Տիմուր Տուրլովն է:



Սովորի՛ր ներդրումներ կատարել փորձառու մենթորի ուղեկցությամբ

Դասընթացը նախատեսված է նրանց համար,
ովքեր ցանկանում են սկսել փոքր գումարներով
և արագ անցնել տեսությունից պրակտիկայի:


- ✓ Ամսական երկու ուղիղ եթեր,
- ✓ Մասնագիտական վերլուծություններ,
- ✓ Շաբաթական ուսումնական նյութեր,

Զևավորի՛ր քո առաջին ներդրումային պորտֆելը վստահությամբ:





**FREEDOM
BROKER**



Բջջային հավելված

Կառավարեք ձեր պորտֆելը
և հետևեք շուկային անմիջապես ձեր
սմարթֆոնից մեր հարմար
Freedom Broker Armenia հավելվածի միջոցով



Ակտիվացրեք QR կոդը,
որպեսզի անցնեք
հավելվածի էջը